

ԵՊՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ
ՀՊՄՀ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

ՌԱՖԻԿ ՆԱՅԱՊԵՏՅԱՆ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ՄԱՍ I

ՀՆԱԳՈՒՅՆ ԵՎ ՀԻՆ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԻ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

ՀՀ կրթության և գիտության նախարարության
կողմից երաշխավորված է որպես ուսումնական ձեռնարկ
բուհերի պատմության ֆակուլտետների
ուսանողների համար

ԵՐԵՎԱՆ
ՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ
2010

ՀՏԴ 391/395=919.81:941 (479.25)

ԳՄԴ 63.5 (2Հ) + 63.3 (2Հ)

Ն 251

Հրատարակության է երաշխավորվել ԵՊՀ պատմության ֆակուլտետի և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի գիտական խորհուրդների կողմից

համագիրներ՝

ՄԵՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

պ.գ.դ., պրոֆեսոր, ՀՊՄՀ հայոց պատմության ամբիոնի վարիչ

ՀԱՅԿ ՀԱԿՈՐՅԱՆ

պ.գ.թ., ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դոցենտ

Գրախոսներ՝

ՄՆԻԹՐ ԳԱՐԻԵԼՅԱՆ

պ.գ.թ., ազգագրագետ, ԵՊՀ հնագիտության և ազգագրության ամբիոնի դասախոս

ԱՂԱՍԻ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

պ.գ.թ., ազգագրագետ, ՀՀ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտ. աշխատող

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Ռ.Ա.

Ն 251

Հայ ազգագրության պատմություն, մաս I, Հնագույն և հին սկզբնաղբյուրների ազգագրական տեղեկությունները հայերի և Հայաստանի մասին, – Եր.: Հեղինակային հրատ., 2010 թ., 150 էջ ներդիր տախտակներ:

Ձեռնարկի նպատակն է հնագույն սկզբնաղբյուրների՝ ժայռապատկերների, կիրառական արվեստի նմուշների, հնագիտական նյութերի, արձանագրությունների և հունական ու հռոմեական անտիկ աղբյուրների վկայությունների հիման վրա ներկայացնել հայ ազգագրության պատմության նախնական փուլը՝ հայերի տնտեսական, հասարակական-ընտանեկան, նյութական ու հոգևոր մշակույթի հիմնական ուղորտները՝ հսկայական տարածության ու ժամանակի մեջ:

Նախատեսված է ազգագրությամբ և պատմագիտությամբ մասնագիտացող ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների համար: Օգտակար կարող է լինել նաև մասնագետների ու ընթերցող լայն շրջանակի համար:

ՀՏԴ 391/395 = 919.81:941 (479.25)

ԳՄԴ 63.5 (2Հ) + 63.3 (2Հ)

ISBN 978-9939-53-608-8

© Ռ.Ա. Նահապետյան, 2010թ.

ՀԵՂԻՆԱԿԻ ԿՈՂՄԻՑ

Ազգագրությունը որպես գիտություն Հայաստանում կայացավ 19-րդ դարի 80-90-ական թթ., սակայն Հայաստանին և հայերին վերաբերող ազգագրական վկայությունները գալիս են խոր հնադարից և սփռված են տարածության ու ժամանակի մեջ:

Ազգագրությամբ և հումանիտար գիտություններով մասնագիտացող ուսանողների, մագիստրանտների, ասպիրանտների, հայցորդների և ընթերցող հասարակայնության մեծ մասը այսօր անհաղորդ է հայոց պատմության հնագույն շրջանի աղբյուրներին՝ ժայռապատկերային, հնագիտական ու կիրառական արվեստների, սեպագրերի, հունա-հռոմեական, հայկական, արաբական, արևմտաեվրոպական և այլալեզու մյուս սկզբնաղբյուրներին, որոնք արժեքավոր ու հաճախ բացառիկ տեղեկություններ են հաղորդում հայերի և Հայաստանի մասին: Շատ դեպքերում այդ սկզբնաղբյուրներին հաղորդակից են դառնում մասնագիտական գրականության մեջ բերված առանձին քաղվածքներից և ընդհանուր հաղորդումներից:

Ազգագրությունը հայկական բուհերում որպես առարկա դասավանդվում է դեռևս խորհրդային շրջանից, իսկ անկախության տարիներին դրա ընդգրկման շրջանակները զգալիորեն ընդլայնվել են՝ ներառելով ՀՀ-ում գործող համարյա բոլոր կայացած բուհերը: Բայց առ այսօր ազգագրական գիտության սկզբնաղբյուրներին նվիրված որևէ ձեռնարկ կամ դասագիրք գոյություն չունի: Մինչդեռ ցանկացած գիտություն, այդ թվում նաև ազգագրության համար հիմնարար նշանակություն ունի սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը: Այս առումով կարևորվում է ազգագրական աղբյուրագիտության բնագավառը, որը կարող է խթանել այդ ոլորտում նոր հետազոտությունների ու հրապարակումների իրականացումը: Այս հիմնահարցը միաժամանակ կարևոր է նաև երիտասարդ սերնդի դաստիարակության առումով, որի էթնիկ ինքնագիտակցության ձևավորման գործում առանցքային դեր է խաղում ազգային մշակութային ակունքների հետ հաղորդակցումը, դրա ճանաչողությունը, գնահատումը:

Վաղուց հասունացել է հայրենի և օտար սկզբնաղբյուրներում պահպանված ազգագրական վկայություններն ի մի բերելու և դրանք ըստ թեմաների դասակարգելու անհրաժեշտությունը: Ձեռնարկի նպատակն է ներկայացնել հայ ազգագրության պատմության ձևավորման նախնական փուլը, հայ և օտար սկզբնաղբյուրներում եղած վկայությունները մեր ժողովրդի ներքին կյանքին, զբաղմունքին ու տնտեսությանը, հասարակական-ընտանեկան կենցաղին, նիստ ու

կացին, սովորություններին, հավատալիքներին, նյութական և հոգևոր մշակույթի այլ խնդիրներին աղերսվող վկայությունները:

Այս ձեռնարկի ստեղծումը պայմանավորված է եղել Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանի պատմության և իրավագիտության ֆակուլտետի հայոց պատմության գծով մասնագիտացող մագիստրատուրայի առաջին կուրսի ուսանողների այս տարվա ուսումնական ծրագրում նման դասընթացի առաջադրմամբ: Բացի այդ, մայր բուհի տարբեր ֆակուլտետներում, ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում և Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանում մեր կողմից կարդացվում են նաև հայ և աշխարհի ժողովուրդների ազգագրություն առարկաները, որոնց թեմատիկ ծրագրերի մի մասն է կազմում սույն ձեռնարկը: Ուստի նման ձեռնարկի ստեղծումը հույժ անհրաժեշտ է վերոհիշյալ բուհերի պատմաբան ուսանողների համար:

Առ այսօր հրատարակվել է հայ ազգագրության վերաբերյալ միայն մի ձեռնարկ՝ «Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ)», (Երևան, 1974) վաստակաշատ ազգագրագետ Վ. Բոլյանի հեղինակությամբ: Ցավոք, ձեռնարկում հայ ազգագրության ամբողջ պատմությունը ընդգրկում է ընդամենը 28 էջ և չափազանց ակնարկային, հպանցիկ տեղեկություններ է հաղորդում, ինչն այսօր չի համապատասխանում գիտության հարաճուն պահանջներին: Սույն ձեռնարկը այս բացը լրացնելուն ուղղված քայլերից է: Հաշվի առնելով նյութի ընդգրկունությունը, աղբյուրների բազմազանությունը, ինչպես նաև դրանց վերլուծության, ամբողջացման ու ընդհանրացման հետ կապված բարդությունները, փորձում ենք ներկայացնել հայ ազգագրության պատմության մի շրջանը՝ հնագույն ժամանակներից մինչև V դարը, հայ պատմագրության սկզբնավորումը: Այն ընդգրկում է հնագույն և անտիկ դարաշրջանները: V-XIX դարերը կներկայացվեն երկրորդ գրքով:

Կարծում ենք սույն ուսումնական ձեռնարկի հրատարակությունը օգտակար կլինի պատմությամբ, ազգագրությամբ, մշակութաբանությամբ մասնագիտացող ուսանողներին ինչպես հատուկ դասընթացների, այնպես էլ կուրսային և ավարտական աշխատանքներ գրելու համար:

Հասկանալի է, որ սա առաջին փորձն է, ուստի և զերծ չի կարող լինել բացթողումներից: Հեղինակը սիրով հաշվի կառնի ընթերցողների նկատառումները, դիտողություններն ու առաջարկները:

*Պատմական գիտությունների
դոկտոր՝ Ռաֆիկ Նահապետյան*

ԹԵՄԱ 1

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄԼԱՑՈՐԴՆԵՐԸ ՈՐՊԵՍ

ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ

ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՆՆԵՐ

(Ք.ա. IX – I հազարամյակներ)

1. ԺԱՅՈՎՊԱՏԿԵՐՆԵՐ

Նախնադարյան արվեստի ստեղծագործությունները՝ ժայռապատկերները, հավաստել են Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների առօրյա կենցաղը, զբաղմունքները, գաղափարական պատկերացումները, հմայական ըմբռնումները:

Նախնադարյան մարդկանց կենցաղի և մշակույթի՝ մեզ հասած նյութերի ուսումնասիրությունն ունի պատկառելի անցյալ: Անձավային արվեստի մասին գիտությունն իր ավելի քան մեկուկեսդարյա պատմության ընթացքում արձանագրել է բազմաթիվ նվաճումներ հին քարի դարի կենցաղամշակութային ստեղծագործությունների հայտնաբերման և դրանց մասին նյութերի հրատարակման ասպարեզում¹:

Աշխարհի տարբեր երկրներում հայտնաբերված ժայռարվեստի հուշարձանների շարքում կարևոր տեղ են գրավում Հայաստանի

¹ Նշանավոր գյուտերից են Հյուսիսային Իսպանիայի Սանտանդեր նահանգի Ալտամիրա քարայրում 1879 թ. հայտնաբերված կենդանիների գունավոր պատկերները: XIX դ. վերջին և XX դ. սկզբներին իրար են հաջորդում հին քարեդարյան անձավային արվեստի նոր հուշարձանների հայտնագործությունները Ֆրանսիայում և Իսպանիայում: 1940 թ. նախնադարյան մշակույթի բացառիկ արժեք ունեցող հնագույն ստեղծագործություններ են հայտնաբերվում Լասկո, իսկ 1956-ին՝ Ռուֆինյակ քարանձավներում: Երկրաչափական բնույթի գծանկարներ են գտնվել Վրաստանում, կենդանիների պատկերներ, որսի տեսարաններ՝ Ուզբեկստանում, Հարավային Ուրալում, Եվրոպայի հարավ-արևմուտքում, Ասիայում: Ամհամեմատ շատ են աշխարհի տարբեր կողմերում գտնված մեզոլիթի, նեոլիթի, էնեոլիթի, բրոնզի և երկաթի դարաշրջանների ժայռարվեստի հուշարձանները: Բազմազույն ներկերով ժայռերին նկարված վիթխարի քանակությամբ պատկերներ են հայտնի Սահարայում, Սկանդինավիայում, Բելգիայում, Շվեյցարիայում, Իտալիայում, Ռուսաստանի Դաշնությունում՝ Կարելիայում, Ուրալում, Սիբիրում, Հյուսիսային Կովկասում, Միջին Ասիայում, Անդրկովկասում և այլուր (Այս մասին տես **Գ. Հ. Կարախանյան, Պ. Գ. Սաֆյան**, Սյունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, թիվ 4, ժայռապատկերներ, պրակ. 1, Երևան, 1970, էջ 5-6, մեկ և նույն հեղինակների՝ Հայաստանի հնագույն պատմության նորահայտ հուշարձաններ, «Սովետական արվեստ», 1967, թիվ 1, էջ 31-38, ՊԲՀ, 1969, թիվ 1, էջ 275-283):

հնագույն շրջանի կենցաղի և մշակույթի յուրօրինակ սկզբնաղբյուրները՝ ժայռապատկերները: Հայկական լեռնաշխարհը ևս, որպես հնագույն և հին աշխարհի անքակտելի մաս, իբրև մարդկային մշակույթի բնօրրաններից մեկը, հարուստ է նախնադարյան արվեստի հրաշալիքներով՝ ինքնատիպ ու բազմաբովանդակ ժայռապատկերներով, որոնք արժանացել են ուսումնասիրողների ուշադրությանը:

1910 թ. Մեսրոպ Տեր-Մովսիսյանը և Կոմիտասը բարձրանալով Արագած լեռը՝ առաջին անգամ հանդիպեցին ժայռապատկերների և գրի առան. դա Հայաստանի տարածքում ժայռապատկերները գրի առնելու առաջին դեպքն էր, որը տպագրվել է 1913 թ. «Արարատ» ամսագրում²: Հաջորդ տարի Գ. Ղափանցյանն է հրապարակում ուշագրավ հաղորդագրություն ժայռապատկերների տեղի, հայտնաբերման հանգամանքների մասին³: Հայ իրականության մեջ ժայռապատկերների գիտական հետազոտությունը սկսվում է 1920-ական թվականներից: Առաջին գիտնականը, որ զբաղվել է ժայռապատկերների հետազոտությամբ, Աշխարհբեկ Քալանթարն էր: Նա 20-ական թվականներին դասակարգեց ու մեկնաբանեց հայ իրականությունից հայտնի ժայռապատկերները⁴: Այնուհետև խնդրո առարկային անդրադարձավ Ս. Սարգսյանը⁵, որը Արագած լեռան լանջերին հայտնաբերեց և ուսումնասիրեց մեծ քանակությամբ ժայռապատկերներ: Նրա գրքում տրվում է նյութի գտնվելու վայրը (Արագած, Գեղամաձև, Ջերմուկ, Ջաղա), կամայական ընտրված խմբերի նկարագրությունը և որոշ համեմատությունների հիման վրա դրանք թվագրում են այն մեզոլիթով:

1950-1960-ական թվականները դարձան ժայռապատկերների հայտնաբերման ու հետազոտման կարևոր փուլ⁶: 1967-1968 թթ.

² Տե՛ս **Մ. Տեր-Մովսիսյան**, Արարատի և Արագածի գագաթներին, «Արարատ», № 1, 1913, էջմիածին, էջ 53-68:

³ Տե՛ս **Գր. Ղափանցյան**, Հնության մի քանի հիշատակարաններ, «Արարատ», 1914, թիվ 1, էջ 91-96:

⁴ Տե՛ս **Ա. Քալանթար**, Արագածը պատմության մեջ. Ակնարկ նրա պատմական նշանակության և նյութական կուլտուրայի հուշարձանների մասին, Երևան, 1935: Ա.Քալանթարի՝ Հայաստանի պատմության պետական թանգարանի արխիվային ֆոնդերում պահվող հավաքածուի որոշ նյութեր հրատարակեց Լ. Բարսեղյանը (տե՛ս Լ. Բարսեղյան, Նոր նյութեր Հայաստանի հնագույն շրջանի արվեստի պատմության վերաբերյալ, ՊԲՀ, 1966, թիվ 3, էջ 147-160):

⁵ Տե՛ս **Ս. Ֆ. Սարգսյան**, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 113-122, նկ. 24-29:

⁶ Տե՛ս **Ֆ. Սարտիրոսյան**, ժայռապատկերների դասակարգման մի քանի տվյալներ, ԼՀԳ, 1970, թիվ 9, էջ 54-70, **Մուլինի**՝ Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, ՊԲՀ, 1969, թիվ 3, էջ 191-208:

ժայռապատկերների հայտնաբերման հետազոտական ծավալուն աշխատանքներ են կատարել ՀՀ ԳԱ հնագիտական արշավախմբերը: Հայտնաբերվեցին հազարավոր ժայռապատկերներ, որոնք սփռված են Արագածի փեշերին, Սևանա լճի ավազանը եզերող Գեղամա, Վարդենիսի, Վայոց Ձորի և Սյունյաց լեռնաշղթաների ստորոտներին: Գ. Կարախանյանը և Պ. Սաֆյանը Սյունիքում հայտնաբերեցին հազարավոր ժայռապատկերներ՝ բնակավայրերից հեռու բարձրադիր լեռնային գոտիներում: Միայն Սիսիանի Ուլտասար կոչվող վայրում հայտնաբերվեցին մի քանի հազար ժայռապատկերներ, որոնց միայն աննշան մասն է ներկայացվել է Գ. Կարախանյանի և Պ. Սաֆյանի գրքում⁷: ժայռապատկերների մեջ աչքի են ընկնում Գեղամա լեռների պատկերախմբերը: Հայ իրականության մեջ սրանց դասակարգման գործում առանձնանում է Հ. Մարտիրոսյանը իր «Գիտությունն սկսվում է նախնադարում» գրքով. հեղինակը փորձել է վերլուծել ժայռապատկերների սյուժետային բովանդակությունը՝ ժամանակակից գիտության բազմաթիվ սաղմեր որոնելով ժայռապատկերներում: Այսպես, օրինակ, Հայաստանում հայտնաբերված հազարավոր ժայռապատկերների թվում հարյուրավոր փորագիր պատկերանշանները ժայռագիր գաղափարագրեր նկատի ունենալով, նա գրում է. «Ամեն մի նախասկզբնական գիր և գրչություն ծայր է առնում իրերի, առարկաների, կենդանիների, մարդկանց, լուսատուների պատկերներից, որոնցով կազմվում էին ժայռանկարների երբեմն շատ շքեղ ու խոսուն կոմպոզիցիաները»⁸: Նա ժայռապատկերները դիտում է որպես տիեզերական պատկերացումներ ներկայացնող պատկերներ, որպես լուսնա-արեգակնային տոմարի մեկնաբանություն, որպես կրոնագաղափարական պատկերացումներ, ժայռապատկերներից անցում ժայռագրության և նշանագրության:

Միջնադարյան շրջանի վիմագրագետ Գր. Գրիգորյանը կարծում է, որ «հնագույն վիմագրական տեքստեր կարելի է համարել ժայռապատկերները, որոնք կերտված են ... մ.թ.ա. է-Ա հազ. ընթացքում»⁹, որ ընդունելի է որոշ վերապահումով: 1971 թ. հրատարակվեցին Հ.Ա.

⁷ Տե՛ս Գ. Կարախանյան, Պ. Սաֆյան, նշվ. աշխ.:

⁸ Հ. Մարտիրոսյան, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978, էջ 79:

⁹ Տե՛ս Գր. Գրիգորյան, Հայկական վիմագրություն, Երևան, 2000, էջ 9: Հարցի առնչությամբ կարևորում ենք նաև Ռ. Իշխանյանի «ժայռապատկերները պատմում են» (Գիտություն և տեխնիկա», 1987, թիվ 5), Ա. Մովսիսյանի «Հայաստանի գծային գիրը (Ք.ա. Գ-Ա)» («Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ, XVIII, Երևան, 1999») հոդվածները:

Մարտիրոսյանի և Յ.Ռ. Իսրայելյանի «Գեղամա լեռների ժայռապատկերները»¹⁰ և Յ. Ա. Մարտիրոսյանի նույն վերտառությամբ ուսումնասիրությունները¹¹, որոնք խոշոր առաջընթաց էին այս բնագավառի զարգացման խնդրում: Համաձայն Յ. Մարտիրոսյանի՝ ժայռարվեստը Հայաստանում հարատևել է 5 հազար տարի՝ նեոլիթյան ժամանակներից մինչև վաղ հայկական պետականության ստեղծման շրջանը: Ժայռապատկերների նկատմամբ հետաքրքրությունը չի նվազել նաև մեր օրերում, երբ առանձին ուսումնասիրողների կողմից Հայաստանի լեռնային տարբեր վայրերում հայտնաբերվում են ժայռապատկերների նորանոր խմբեր¹²: Չնայած ժայռապատկերային նյութի ահռելի քանակությանը՝ մեզանում դրանք առ այսօր բավարար չափով ուսումնասիրված չեն: Ուսումնասիրությունների ստորև ներկայացվող շարքում հիմնական շեշտը դրված է մեկնաբանության և վերծանման վրա՝ օգտվելով փաստագրված և հրատարակված նյութերից: Մեկնաբանողների մեծ մասը հակված են ժայռապատկերները դիտարկել որպես գիր: Նրանց մի մասը պատմական ակնարկներում, տեղեկատվական հոդվածներում ժայռապատկերները պարզապես անվանում են գիր՝ զաղափարագիր, նշան (Խ. Սամուելյան, Ս. Բարխուդարյան, Լ. Խաչիկյան, Ս. Մելիք-Բախշյան, Ա.Գ. Աբրահամյան)¹³, մյուսները որոշ փաստարկներ են բերում՝ փորձելով ապացուցել ժայռապատկերների մաշտոցյան գրի նախատիպ լինելը (Յ. Մարտիրոսյան, Ռ. Իշխանյան, Կ. Թոխատյան):

¹⁰ Տե՛ս **Յ. Ա. Մարտիրոսյան, Յ. Ռ. Իսրայելյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները.- Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 6, ժայռապատկերներ, պր. 2, Երևան, 1971:

¹¹ Տե՛ս **Յ. Ա. Մարտիրոսյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները.- Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, ժայռապատկերներ, պր. 3, Երևան, 1981:

¹² Տե՛ս **Բ. Գասպարյան, Գ. Սարգսյան**, ժայռանկարների նորահայտ խումբ Գեղամավանի «Կարմիր քարանձավում».- «Հայաստանի հնագույն մշակույթը», Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2003, էջ 5-12, **Ա. Խեչոյան, Բ. Գասպարյան**, Գեղամավան-1 քարայրի ժայռանկարների գեղարվեստական վերլուծության փորձ.- «Հին Հայաստանի մշակույթը», XIII, Երևան, 2005, էջ 28-33, **Ա. Խեչոյան, Բ. Գասպարյան, Վ. Ֆերուզլի**, ժայռապատկերների նորահայտ համալիր Արագածի հարավային լանջերին (Աղավանատուն-Լեռնամերձ-Ոսկեհատ).- «Հին Հայաստանի մշակույթը», XIV; 2008, էջ 295-301:

¹³ Տե՛ս **Խ. Սամուելյան**, Հին Հայաստանի կոլտուրան, հ. 2, Երևան, 1941, էջ 160-166: **Ս. Բարխուդարյան**, Հնությունների նշանակությունն ու պահպանությունը, Երևան, 1935, էջ 9-13, 42-46: **Լ. Խաչիկյան**, Նախամեսոլիթյան գրի հարցը և հմայագրերը, ՊԲՀ, № 4, 1963, էջ 145-158: **Ս. Մելիք-Բախշյան**, Հայկական հնագրություն, Երևան, 1987, էջ 3-9, 95-103: **Ա.Գ. Աբրահամյան**, Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Երևան, 1982, էջ 26-48:

ժայռապատկերները մեկնաբանվել են նաև որպես աստղագիտական պատկերացումներ՝ համաստեղություններ, լուսնա-արեգակնային համակարգ, օրացույց, տոմար¹⁴... (Բ. Թումանյան, Ս. Պետրոսյան, Յ. Տոնականյան, Կ. Թոխատյան, Յ. Մարտիրոսյան):

ժայռապատկերների իմաստաբանական, խորհրդանշական և դիցաբանական հարցերին անդրադարձել են Ա. Դեմիրխանյանը, Լ. Աբրահամյանը, Կ. Թոխատյանը, Յ. Մարտիրոսյանը¹⁵: ժայռապատկերների սյուժետային վերլուծությունը հայոց հնագույն կենցաղի ու մշակույթի կարևոր ու անփոխարինելի սկզբնաղբյուր է:

ժայռապատկերների սյուժետային բովանդակությունը

Հռեավոր ժամանակներում մարդը ժայռապատկերներում ներկայացրել է իր առօրյա կենցաղը, շրջապատը, բուսական ու կենդանական աշխարհը, աշխարհընկալումը, հավատալիքները, զբաղմունքները: Ժայռապատկերները հանդիսանում են նախնադարի կարևորագույն սկզբնաղբյուր: Նախնադարում գոյության միջոցներից մեկը որսորդությունն էր: Բնականաբար, պատկերների աիռելի մասը ներկայացնում է որսորդությունը: Պատկերների մեջ աչքի են զարնում կենդանիների ամենատարբեր տեսակների մեծ քանակն ու բազմազանությունը (զուրբ, վայրի ցուլ կամ կով, եղջերու, իշաթամ, լուս, վայրի էշ, առյուծ, վարազ, լուսան, ընծառյուծ և այլ կենդանատեսակներ, վայրի և ընտելացված ձիեր, թռչուններ և այլն (աղյուսակ 1, նկ. 1, 2)): Այս կենդանիների մի մասն այժմ իսպառ վերացել է Հայաստանից, և հայտնաբերվում են սոսկ նրանց պեղածո մնացորդները¹⁶: Հիշյալ կենդանիների մի զգալի մասը ներկայացված է որսորդական տեսարաններում: Որսորդները պատկերագրված են այստեղ ինչպես մերկանդամ, շարժուն ու բնորոշ ձևերով, այնպես էլ զգեստավորված՝ տարբեր տիպի գլխանոցներով, կենդանական ու թռչնային դիմակներով: Նրանք զինված են փոքր, մեծ աղեղներով

¹⁴ Տես Բ. Թումանյան, Աստղագիտական բնույթի ժայռապատկերներ, «Գիտություն և տեխնիկա», № 3, 1969: Ս. Պետրոսյան, Առեղծվածային ժայռապատկերներ, «Գիտություն և տեխնիկա», № 2, 1970: Յ. Տոնականյան, Հայաստանի ժայռապատկերների տիեզերական թեմատիկան, «Արվեստ», № 3, 1990, էջ 58-64:

¹⁵ Տես Լ.Ա. Абрамян, А.А. Демарханян, Мифологема близнецов и мировое дерево (К выяснению значения одного класса наскальных изображений древней Армении), ՊԲՀ, 1985, № 5, էջ 66-84:

¹⁶ Տես Յ. Ա. Մարտիրոսյան, Յ. Ռ. Իսրայելյան, Գեղամա լեռների ժայռապատկերները, էջ 8:

կամ մահակներով, միզակներով: Ժայռապատկերներում չափազանց շատ են նետ ու աղեղով, տեգով, միզակով, վահանով, լայնալիճ աղեղներով զինված որսորդների պատկերները, որսորդական պարանների-լասոների, օղապարանների, թակարդի, որսորդական և այլ հարմարանքների, սայլերի, ծածկասայլերի, սահնակներ հիշեցնող սայլերի, արորների, ինչպես նաև տիեզերական պատկերացումների հետ առնչվող նկարները (նկ. 10): Հարուստ ու բազմազան են ժայռապատկերների թեմատիկան ու բովանդակությունը: Նրանցում արտացոլվում են որսի, որսորդական, մասն հմայական արարողությունների, պաշտամունքի հետ աղերսվող տեսարաններ: Պատկերված են որսի և որսորդության բազմաթիվ տեսակներ՝ թակարդով, լասոյով, փոսորակով, նետ ու աղեղով, հետապնդումով, ընդգծած են մասն որսի անհատական և խմբային՝ հալածական եղանակով որսը՝ որպես նախնադարյան մարդու գոյության հիմնական միջոց: Ժայռապատկերներում հստակորեն ընդգծվում է որսորդը՝ տարբեր զենքի տեսակներով: Որսվող կենդանին այնպիսի ճշգրտությամբ է պատկերված, որ զարմանալ կարելի է, թե նախնադարյան մարդը որքան լավ էր տիրապետում կենդանու և մարդու անատոմիային: Ուշագրավ են որսի մի շարք տեսակներ, հատկապես արջի, առյուծի որսը, որտեղ աչքի է զարնում մարդու պայքարը այդ գազանների դեմ: Դեռևս նախնադարում մարդ արարածը մշակել էր որսի մի ձև, երբ ձեռքին մորթի կամ թաղիք (քեչա) փաթաթած այն գազանի երախ էր մտցնում, մյուս ձեռքով խփում: Այս որսածը կիրառվում էր Սասունում և Դերսիմում ընդհուպ մինչև XX դարի սկզբները¹⁷: Հաճախ միայնակ որսորդը վայրի ցուլերի կամ կենդանիների մեծ հոտերի դեմ ելնում էր միայն պարանով կամ նետ ու աղեղով զինված: Հանդիպում են մասն որսորդների ու շների բազմությամբ կենդանիների հնարամիտ շրջափակման պատկերներ: Որսի տեսարաններում ամենուրեք առկա են մասն արևի, լուսնի, երկնային այլ մարմինների երկրաչափական խորհրդանիշներ: Կային տղամարդկանց ու կանանց պատկերներ, որոնք իրենց դիրքով, առանձնապես կանանց չափազանցված կրծքերով շեշտում են պտղաբերության գաղափարը: Որոշ դեպքերում արգասավորման հմայական գործողությունը ներկայացվում է պարզապես սեռական անդամների պատկերումով՝ պտղաբե-

¹⁷ Տե՛ս Կ. Պետրոյան, Սասնա ազգագրությունը, Երևան, 1965, էջ 137-138, Գ. Հայաքյան, Դերսիմի հայերի ազգագրությունը, մասն Ա, ՀԱԲ, հ. 5, Երևան, 1973, էջ 159::

րության աստվածների հովանավորության ներքո: Այդ մարդակերպ հսկաներն իրենք էլ պատկերված են երկիրը պտղաբերելու այլաբանական գործողության մեջ: Նմանողական հմայանքի միջոցով նախնադարյան որսորդը փորձել է օգնության կանչել նախնիներին, բնության զորավոր ուժերին հովանավորող ոգիներին ու աստվածներին: Հայաստանի ամենաբարձրադիր շրջաններում ամենուրեք հանդիպող կրոնապաշտամունքային հմայական բնույթի որսորդական պատկերները ընդգծում են որսորդության զգալի դերը նախնադարյան տնտեսության զարգացման հազարամյակների ընթացքում: Բազմաթիվ են նաև պատկերները, որոնցում երևում է մարդու վտանգավոր ու դժվարին պայքարը կենդանիներին ընտելացնելու, բուծելու և անասնապահություն ստեղծելու գործում, երբ նախնադարյան որսորդ-անասնապահը դիմում է ոչ միայն իր հմտությանը, հնարատությանը և պարզունակ տեխնիկային, այլև նախնիների, ոգիներին, աստվածներին, կախարդանքի միջոցներին և այլն:

Ժայռապատկերներն իրենց բնույթով լույս են սփռում Հայկական լեռնաշխարհի նեոլիթ-էնեոլիթյան պարբերաշրջանի տեղաբնիկների տնտեսության, արվեստի, մշակույթի անհայտ կողմերի վրա: Ք. ա. IX-IV հազարամյակների նեոլիթ-էնեոլիթյան տնտեսության ձևավորման հիմքում ամենուրեք նկատվում են զարգացած հավաքչության և որսորդության հետքեր՝ վաղ բնակավայրերում պահպանված հացաբույսերի ու վայրի կենդանիների մնացորդների և ժայռերին փորագրված որսի տեսարանների ձևով, որոնք առկա են վերոնշյալ բոլոր երկրներում¹⁸:

Ուշագրավ են երկրագործությանը վերաբերող տեսարանները (նկ. 3, 4, 5): Հնագույն երկրագործության ուսումնասիրության տեսակետից չափազանց կարևոր են քարե վավերագրերը, որոնց վրա փորված են երկրագործական, դաշտամշակության գործիքներ: Սյունիքի ժայռանկարներում առկա է տեսարան, որն, ըստ երևույթի, նման է արորի՝ լծված եզներով, և որ վերաբերում է վաղ բրոնզե դարաշրջանին: Ժայռապատկերներում երևում են քառանիվ սայլեր, որոնք օգտագործվել են երկրագործության մեջ, դրանց լծված են եղել եզներ: Ուշագրավ է, որ նման սայլեր գտնվել են Սևանի ավազանում Հ. Մնացականյանի պեղումների ժամանակ (աղյուսակ 2): Հե-

¹⁸ Տե՛ս **Հ. Ա. Մարտիրոսյան, Հ. Ռ. Իսրայելյան**, Գեղամա լեռների ժայռապատկերները, էջ 8:

տաքրքրական է նաև այդ քարե կոթողների մեջ սահմակ հիշեցնող փոխադրամիջոցը: Ջարմանալին այն է, որ այդ սահմակները պահպանվել են արևմտահայերի մեջ ընդհուպ մինչև XX դարի սկզբները և հայտնի են **դախուկ** անվամբ: Հայկական լեռնաշխարհի ամբողջ կենդանական աշխարհը «կարելի է կարդալ» ժայռապատկերներում (նկ. 4, 6, 7):

Ուշագրավ են հավատալիքային նյութերը, որոնք կոչված էին անուղղակիորեն ապահովելու որսի հաջողությունը: Ժայռակարներում շատ են տիեզերական, մանավանդ արևի պաշտամունքի հետ աղերսվող պատկերները. արևն ու լուսինը, աստղերը, երկնային համակարգը:

Արևը պատկերող նշանները հաճախ ճառագայթավոր անիվի ձև ունեն: Այսպես, արևի և անիվի նմանությունից բնականորեն կարող էր ծագել նաև արևի ու սայլի, կառքի, մարտակառքի իմաստաբանական կապը: Այսպիսի առասպելական ու գրաֆիկ պատկերներն առանձնապես տարածված են արևելյան առասպելներում, բրոնզեդարյան գոտիների պատկերագրող սյուժեներում և արվեստի հուշարձաններում, ինչպես նաև՝ հայոց ավանդազրույցներում, հեքիաթներում: Ուսումնասիրություններից պարզվում է, որ բրոնզե-երկաթե-դարյան Հայաստանի բնիկները արևին վերագրել են արարչական զորություն, պաշտել են որպես զարթոնքի, պտղաբերության և ամենայն բարիքներ ստեղծող գերբնական ուժ: Այդ պատճառով էլ բազմաթիվ առարկաների վրա պատկերել են արև՝ երկրաչափական մարմինների, ինչպես և զանազան կենդանիների տեսքով: Մեր նախնիները կենդանիների կերպարներով պատկերել են ոչ միայն արևը, լուսինն ու կայծակը, այլև ողջ աստղագրող երկինքը¹⁹ (նկ. 8, 9):

Հայաստանի ժայռապատկերներում շատ են տիեզերական պատկերացումներին առնչվող գերբնական արարածները:

Հնագետ Հ. Հակոբյանը ցույց է տվել, որ նախնիների պաշտամունքը՝ երկվորյակ «Թուխ մանուկների» կերպարանքով սկզբնավորվելով բրոնզեդարյան Հայաստանում, արտացոլվել է նաև ժայռապատկերներում²⁰:

¹⁹ Տե՛ս **Հ. Ռ. Իսրայելյան**, Պաշտամունքն ու հավատալիքները ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 44, 50:

²⁰ Տե՛ս **Հայկ Հակոբյան**, «Թուխ մանուկներ»-ի պատկերագրությունը Հին Հայաստանում: - Թուխ մանուկ, Երևան, 2001, էջ 52-67:

2. Բ.Ա. III-IV ՀԱՅԱՐԱՍՅԱԿՆԵՐԻ ՊԱՇՏԱՍՈՒՆՔԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐ

Նույն պաշտամունքային կարիքներին էին ծառայում Բ.ա. III հազարամյակի կիրառական արվեստի բազմաթիվ այլ հուշարձաններ: Ուշագրավ է, որ, օրինակ, պտղաբերման պաշտամունքին նվիրված արարողություններն ու ծեսերը չէին սահմանափակվում անասնապահների լեռնային սրբատեղիներով և շարունակվում էին ծնունդ ու գարնամանուտի ամիսներին նաև բնակավայրերում գտնվող սրբատեղիներում, սովորական կացարանների սրբազան անկյուններում, ուր տեղադրվում էին պտղաբերություն խորհրդանշող կենդանիների ու կանանց բազում արձանիկներ²¹: Տիեզերական պատկերացումների հետ են կապված նաև կիրառական արվեստի մեծ թվով այլ հուշարձաններ՝ սայլերի ու սայլակների մոդելներ՝ դրանց լծված եզների կամ ցուլերի ճակատների աստղանշաններով, անվաճ սկավառակներ՝ թռչունների պատկերներով, բրոնզե և ծարիրե խաչեր, սվաստիկաներ²², բրոնզե գոտիներ՝ արևը պատկերող յոթևանի աստղի ձևով²³, արևն ու լեռները խորհրդանշող սվաստիկաներով: Ուշ բրոնզեդարյան և վաղ երկաթի դարի կավանդների²⁴ վրա պատկերված են երկծի մարտակառք կամ կառավարվող երկանիվ սայլ, արևը խորհրդանշող պատկերներ, բրոնզե դաշույններ և դաշույնապատյաններ, թռչունների բրոնզե արձանիկներ, որոնք, ըստ հետազոտողների, արևի աստվածության արտահայտություն են: Դրանցից զատ կան դարձյալ արևը խորհրդանշող առյուծի, ցուլի, ձիերի, արևի զնդի պատկերով՝ ուրարտական շրջանին բնորոշ գոտիներ ու վահաններ, օծերի, արևի, առյուծի պատկերներով դաշույնի պատյաններ, վաղ հայկական դրամներ՝ պատկերված քառաձի մարտակառքերով և այլն: Ուրարտական կնքադրոշմներից մեկի վրա պահպանվել է քառանիվ մի սայլ, որի վերևում շողում է արևը, որին հետևում են բազկատարած քուրմը (կամ աստված) և արևին նվիր-

²¹ Տես **Դ. Ռ. Իսրայելյան**, Պաշտամունքն ու հավատալիքները ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Երևան, 1973, էջ 263:

²² Դրանք գտնվել են Լճաշենի, Շամշադինի, Ախթալայի, Ռեդկին լազերի դամբարանների պեղումներից (տես **Ս. Ա. Есаян**, Амулеты связанные с культом солнца из Армени, "Советская археология", N 2, 1968):

²³ Տես **Ա. Ա. Мартиросян**, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964, էջ 216:

²⁴ Տես **Դ. Ռ. Իսրայելյան**, Պաշտամունքն ու հավատալիքը ուշ բրոնզեդարյան Հայաստանում, էջ 51:

ված երևակայական թևավոր անգղայծը՝ կրծքին դաջված արևի նշանով: Մեկ ուրիշի վրա սայլի փոխարեն ներկայացված է նավակ, դարձյալ մարդակերպ, կենդանական ֆիգուրների ու աստղային խորհրդանիշերի միջավայրում²⁵: Կեռախաչի (սվաստիկայի) ձևով արևը պատկերել են նաև երկրաչափական տարրերով ու մարմիններով, որոնք կիրառվել են նյութական մշակույթի ամենատարբեր բնագավառներում՝ խեցեղենի, մետաղե իրերի ու քարից պատրաստված առարկաների և փայտե շինվածքների, ինչպես օրինակ՝ սայլերի վրա: Լճաշենում գտնվել է ոսկուց պատրաստված ծավալային առյուծի գլուխ, որը միևնույն ժամանակ նախնադարյան ոսկերչության հույակապ նմուշ է: Հայտնաբերվել են նաև առյուծազուխ ապարանջաններ: Անշուշտ գոյություն է ունեցել այս կենդանու պաշտամունքը՝ որոշ դեպքերում արևի հետ աղերսվող, երբեմն էլ գուցե անկախ նրանից:

Հնագիտական և դիցաբանական նյութերի համադրությունը թույլ է տալիս ենթադրել, որ արևի պաշտամունքի հետ կապված են նաև մի շարք այլ կենդանիներ՝ ձին, արծիվը, այծը, ագռավը, եղջերուն:

Արմավիրի տաճարին ձիերով մարտակառքեր էին նվիրաբերում, մի սովորույթ, որն ընդունված էր նաև Փոքր Ասիայում և Արևմուտքում: Կարծիք կա, որ վաղ հայկական դրամների վրա դրոշմված քառաձի մարտակառքերն էլ կապ ունեն հիշյալ երևույթի հետ²⁶:

Բացի բուսական ու տիեզերական մոտիվներից՝ կիրառական արվեստի սիրված տարրեր են նաև երկրաչափական զարդերը՝ բազմատեսակ պարույրները, ոլորանախշերը, եռանկյունիները, շեղանկյունիները, համակենտրոն շրջանագծերը և այլն: Վաղ բրոնզե դարյան արվեստի լավագույն նմուշների շարքը կարելի է դասել նաև կավե օջախներն ու դրանց տարատեսակ հենակները, որոնք մեծ մասամբ նախնիների պաշտամունքին նվիրված յուրատեսակ զոհասեղաններ էին՝ կողքերին ծեփված մարդակերպ արձանիկներով: Առանձնակի նշանակություն ունեին նաև կանանց արձանիկները, որոնք խորհրդանշում էին կյանքի հարատևման, պտղաբերության, արգասավորման, մայրաստվածության գաղափարը:

²⁵ Տե՛ս **Б. Б. Пиотровский**, История и культура Урарту, Ереван, 1944, ցկ. 90, 92:

²⁶ Տե՛ս **К. В. Тревер**, Очерки по истории культуры древней Армении, Москва-Ленинград, 1953, էջ 129-32:

* Իմ խորին շնորհակալությունն են հայտնում հնագետներ Գրիգոր Կարախանյանին և Բորիս Գասպարյանին արժեքավոր խորհրդատվություն և նյութեր տրամադրելու համար:

3. ՀԱՊԳԻՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՅԼ ԴՐՎԱԳՆԵՐ

Հայտնի է, որ ազգագրական և հնագիտական նյութերի համադրությունը մեծապես նպաստում է հին հասարակությունների կառուցվածքի, նյութական և հոգևոր մշակույթի, կիրառական արվեստի, հավատալիքների, պաշտամունքի, կրոնի ուսումնասիրությանը և հետագա վերակազմությանը: Միևնույն ժամանակ ազգագրությունը զգալի նյութեր է քաղում հնագիտությունից: Այս երկու գիտությունները սերտորեն կապված են միմյանց հետ. ազգագրագետն իրերն ու երևույթները պարզաբանում է հնագիտության միջոցով, իսկ հնագետը՝ ազգագրական տվյալների օգնությամբ:

Հնագիտական նյութերով բացահայտված է, որ Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկները դեռևս նեոլիթյան (IX-VI հազ.) դարաշրջանում հավաքչությունից անցել են հողագործության և որսորդությունից՝ կենդանիների ընտելացման: Հանդես են եկել իրենց ուրույն ճարտարապետությամբ բնորոշվող բնակավայրեր (Չոյունու թեփեսի, Հալան Չեմի և այլն): Ջարգացել է բնակարանային ճարտարապետությունը (Չոյունու թեփեսի և Առատաշեն): Կացարանների ներսում՝ կենտրոնում ունեցել են կավից կամ քարից պատրաստված օջախներ, հասել են փայտի, քարի, ոսկորի մշակման կատարելության, հյուսել են խսիր, կողով, ձկնորսական ցանց, բուսական թելեփից՝ կտավ, պատրաստել են կավե ամաններ և այլն:

Պղնձի և քարի դարի (V-IV հազ. 1-ին կես) մշակույթին բնորոշ բնակատեղիներում (Շամիրան-Ալթի՝ Կան քաղաքից մեկուկես կմ հեռավորության վրա, Թեղուտ՝ Էջմիածնից մոտ երկու կմ հեռավորության վրա, Ակնաշեն, Առատաշեն (Արմավիրի մարզ), Քյուլ-թափա (Նախիջևան), Ալիքեմեկթեփե, Գարգալար թեփե (Միլիդարաբադյան տափաստան), Շուլավերիս-գորա, Իմիրիս-գորա, Դանգրեուլիս-գորա (Ներկայիս Վրաստան՝ Կախեթ), հայտնաբերվել են նյութական մշակույթի լավ պահպանված նմուշներ, մետաղե, ոսկրե ու քարե հարյուրավոր գործիքներ, անասնապահության, երկրագործության, արհեստների, առավելապես խեցեգործության բազմապիսի առարկաներ: Այդ իրերն ու առարկաները կարևոր սկզբնաղբյուրներ են ոչ միայն տնտեսության հիմնական ճյուղերը, այլև կենցաղային ու մշակութային աղբյուրների մանրամասներն ուսումնասիրելու համար²⁷:

²⁷ Ռ. Թորոսյան, Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրը, Երևան, 1979, *Ս. Եսախան*, Հայաստանի հնագիտություն, Երևան, 1992: *Т.Н. Чубинишвили*, К древней истории Южного Кавказа, Тб., 1971. *Р.М. Мунчаев*, Кавказ на заре бронзового века, М., 1975. Энеолит СССР, М., 1982. *Р. Бадалян, П. Аветисян, П. Ломбард, К. Шатенье*. Поселение Араташен. – В *Հին Հայաստանի մշակույթը*, XIII, Երևան, 2005, էջ 34-41:

Էնեոլիթյան հուշարձանների նյութերը ցույց են տալիս, որ Հայաստանի երկրագործը լայնորեն յուրացրել է բազմաթիվ շրջաններ ցանքատարածությունների համար, ծանոթ է եղել ոռոգման պարզունակ եղանակներին, ուներ հողամշակման, բերքահավաքի և երկրագործական մթերքները վերամշակելու աշխատանքային բազմաթիվ գործիքներ, որոնցով և բնորոշվում է ժամանակի երկրագործական տնտեսության բնույթն ու մակարդակը:

Շամիրամ-Ալթիի, Թեղուտի, Ծաղկունքի, Աղստևի հովտի բնակավայրերում հայտնաբերվել են ոսկրե սրածայրեր, խոշոր անասունների սնամեջ ոսկորներից և քարից պատրաստված բրիչներ, կտրող գործիքների վանակատե ու կայծքարե դանականման ներդրվող շեղբիկներ, ինչպես նաև բազալտե աղորիքների, սանդերի ու վարսանդների բազմաթիվ նմուշներ, որոնք օգտագործվել են հողի փխրեցման, բերքահավաքի և մթերքների վերամշակման աշխատանքներում: Բրիչային երկրագործությունը էնեոլիթյան տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էր: Էնեոլիթյան և վաղ բրոնզեդարյան երկրագործությանը բնորոշ էին հացաբույսերի խառը ցանքերը: Ցորենն ու գարին բնիկների հիմնական սննդամթերքներն էին: Թեղուտի կացարաններում հում աղյուսների և հարդի խառնուրդի մեջ հայտնաբերվել են մեծ քանակությամբ ցորենի ու գարու հատիկներ²⁸: Բացի հացաբույսերից, բնիկներն ունեցել են նաև երկրագործական բազմաթիվ այլ կուլտուրաներ: Ինչպես ուշ նեոլիթյան, այնպես էլ էնեոլիթյան տնտեսության մեջ երկրագործության հետ մեկտեղ շարունակում էր զգալի դեր կատարել հավաքչությունը, որը վաղ երկրագործական տնտեսության հիմքն էր:

Հայկական լեռնաշխարհի տեղաբնիկ ցեղերի տնտեսության հիմնական ճյուղերից մեկն էլ անասնապահությունն էր: Էնեոլիթյան հուշարձանների պեղումներից հայտնաբերվել են ցուլերի, կովերի, այծերի, ոչխարների, խոզերի ոսկորների մնացորդներ: Խոշոր ու մանր եղջերավոր անասուններն օգտագործվել են երկրագործության մեջ որպես քաշող ուժ և ապահովել մսի, կաթնամթերքների, կաշեգործության, մանածագործության աճող պահանջները: Տնտեսության մեջ շարունակում էր զգալի դեր խաղալ որսորդությունը, իսկ մեծ գետերի հովիտներում՝ ձկնորսությունը:

²⁸ Տե՛ս **Հ.Ա. Մարտիրոսյան**, Հայաստանը էնեոլիթի (պղնձեքարեդարյան) ժամանակաշրջանում, Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Երևան, 1971, էջ 116, 118:

Երկրագործության և անասնապահության առաջացմանն ու զարգացմանը զուգահեռ՝ զարգանում էին նաև դրանցով պայմանավորված ու անմիջապես դրանցից բխող արհեստները: Անասունների ոսկորներից պատրաստում էին բրիչներ, սրածայրեր, քերիչներ, ասեղներ, հերուններ, թիակաման մանր գործիքներ և այլն:

Իլիկների գլուխների առկայությունը անհերքելիորեն ապացուցում է մանածագործության գոյությունը: Բարձր զարգացման էր հասել կողովագործությունը, խեցեգործությունը, տակավին առաջին քայլերն էր անում մետաղամշակությունը (IV հազ. Ք.ա.): Անվերապահորեն կարելի է նշել, որ Փոքր Ասիան և Հայկական բարձրավանդակը եղել են մետաղահանության և մետաղամշակման ամենանախնական կենտրոնները, որտեղից մետաղարդյունաբերության արտադրանքը ներթափանցել է Ասորիք, Պաղեստին և Հյուսիսային Միջագետք²⁹:

Վաղ բրոնզի դարաշրջան Ք.ա. 3500–2400/2220 թթ.: Լեռնաշխարհի ողջ տարածքում և հարակից շրջաններում նշված ժամանակաշրջանում տիրապետում է շենգավիթյան (Կուր-արաքսյան, վաղ անդրկովկասյան) հնագիտական մշակույթը, որի տիրույթն ընդգրկում է մոտ 1,5 մլն քառ. կմ՝ ներառելով ողջ Հայկական լեռնաշխարհը, Հյուսիսային Կովկասի մեծագույն մասը (Չեչնիա, Ինգուշեթիա, Դաղստան), Հյուսիսային Սիրիան, Հորդանան գետի արևմտյան ափերը և Գազայի հովիտը: Շենգավիթյան հնագիտական մշակույթը բնորոշվում է մի շարք հատկանշական գծերով, որոնցից առաջին հերթին պետք է նշել վարդագույն աստառով սև փայլեցված խեցեղենը:

Վաղ բրոնզեդարյան հուշարձանների պեղումները բազում տեղեկություններ են հաղորդում Հայկական լեռնաշխարհի բնակչության տնտեսության կենցաղի, զբաղմունքների մասին: Այսպես, Սոխրաբլուրի հետազոտությունների ժամանակ հայտնաբերված պատվարները վկայում են զարգացած երկրագործության մասին³⁰: Երկրագործության զարգացման բարձր մակարդակի վկայություն են նաև վաղ բրոնզեդարյան այլ բնակավայրերում պեղված ցորենի բազմաթիվ շտեմարան-հորերը (Էլառ, Շենգավիթ, Յանիկ թեփե (աղյուսակ 3ա), Արսլանթեփե և այլն): Պետք է նշել, որ Յանիկ թեփեի ցորենի շտեմարան ծառայող թիվ 1 շինությունում առկա են տարբեր

²⁹ См. **А.А.Иессен**, Кавказ и Древний Восток в IV-III тысячелетиях до н.э., КСИА, 1960, вып. 93, т. 6;

³⁰ **Լ. Տալալաբեկյան**, Սոխրաբլուրի պատվարները, ՊԲՀ, 1974, թիվ 4, էջ 157-162:

չափերի և մեծության խորշեր, որոնք, ըստ Չ. Բարնեյի, նախատեսված էին ցորենի տարբեր տեսակների համար³¹։ Հատկանշական է նաև, որ Շենգավթի պեղումների ժամանակ արձանագրված է ցորենի և գարու միասնական ցանքի փաստը։ Բացի այդ, Շենգավթում ցորենի մնացորդները գտնվել են առանձին նրբախավերով։ Ըստ Ե. Բայբուրթյանի՝ հասկերը կացարան են տեղափոխվել խրճերով և ենթարկվել վերամշակման։ Այստեղ հայտնաբերված ցորենը և գարին պատկանել են անեմատարբեր տեսականի. ցորենը՝ կլորահատիկ, փափուկ, իսկ գարին՝ մերկահատիկ և թփուկավոր։ Վաղ բրոնզեդարյան տնտեսության կարևոր նվաճումներից մեկը նաև սեպածև քարե խոփերով ու պարզունակ արորի և լծկան խոշոր եղջերավոր անասունների օգնությամբ վարուցանք անելն էր։ Երկրագործության նոր մակարդակին համապատասխան՝ փոխվում և զարգանում են նաև հնձի գործիքների տեսակներն ու ձևերը։ Հանդես են գալիս առաջին մետաղե մանգաղները։ Երկրագործության բարձր մակարդակի մասին են վկայում մի շարք բնակավայրերում հայտնաբերված գյուղատնտեսական մթերքների վերամշակման և պահպանման հսկայական համալիրները, ինչպես նաև գյուղմթերքների վերամշակման գործիքներ՝ աղորիքներ, սանդեր և հնագույն ոռոգման ցանց։ Այդպիսին էին Արագածի լանջերին տեղադրված ոռոգման համալիրները։ Այգեգործության մասին է վկայում ծիրանի կորիզի գտածոն Գառնիի Ք.ա. III հազարամյա շերտերից։

Երկրագործության հետ մեկտեղ զարգանում էր նաև անասնապահությունը։ Դրա մասին են վկայում հայտնաբերված եզան, կովի, գոմեշի, ոչխարի, խոզի ոսկորների բազմաքանակ գտածոները (Վանաձորի մոտ Քոսի ճոթեր, Շենգավթի և այլ բնակատեղիներում)³²։ Շենգավթում հայտնաբերված հնէակենդանաբանական նյութերում մանր եղջերավոր անասունների ոսկորները մոտ 2 անգամ զերազանցում են խոշոր եղջերավոր անասունների ոսկորների քանակը։ Այս փաստը համադրելով ազգաբանական տվյալների հետ՝ կարելի է հանգել այն եզրակացության, որ նշված ժամանակաշրջանում

³¹ **Է. Վ. Խանգադյան**, Էլառ-Դարանի, Ե., 1979 էջ 23, A. Sagona. The Caucasus region in the Early Bronze Age, Oxford 1982, P II, p. 64: **Չ. Սիմոնյան**, Շենգավթի 2000 թ. պեղումները, Հայաստանի հնագույն մշակույթը, Ե., 2001, էջ 33-34:

³² Տե՛ս **Է. Խանգադյան**, Հայկական լեռնաշխարհի մշակույթը III հազարամյակում, էջ 40-41:

տնտեսության առաջատար ճյուղը երկրագործությունն էր, քանի որ անասնապահության առաջատար տնտեսածն լինելու դեպքում այդ հարաբերակցությունը կկազմեր 8:1³³:

Բնակչության աճը, բնակավայրերի ընդլայնումը, խոշոր եղջերավոր անասունների ավելի լայն կիրառումը երկրագործության մեջ հասցնում են հացահատիկային տնտեսության, բանջարաբուստանային ու այգեգործական կուլտուրաների մշակության ավելի բարձր մակարդակի:

Պեղումներից հայտնաբերված նյութերը վկայում են նաև անասնապահության զարգացման բարձր մակարդակի մասին: Հառիճի պեղումների ժամանակ հայտնաբերվել է շան արձանիկ, որն, ըստ Ս.Սեժլունյանի, պատկերում է հովվի շուն: Պեղումների ընթացքում հայտնաբերվել են նաև խոզի և ձիու ոսկորներ³⁴: Անասնապահության զարգացման բարձր մակարդակի մասին է վկայում նաև Ասլանթեփեփեում պեղված սպանդանոցը³⁵: Հնագիտական նյութերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ միջին բրոնզի դարի սկզբում մանր եղջերավոր անասունների գլխաքանակի մեծ աճը հանգեցրել է քոչվորական անասնապահությանը՝ հասարակական արտադրության նոր, ավելի առաջավոր ձևի զարգացմանը³⁶:

Վաղ բրոնզի դարաշրջանի տնտեսության մեջ որսորդությունը ևս մեծ տեղ է գրավել: Ամենայն հավանականությամբ հիմնական որսի առարկաներից էր, ազնվազարմ եղջերուն: Շենգավիթից հայտնաբերվել է այդ կենդանու ոսկորների 121 մուռ: Միաժամանակ Հայաստանի տարբեր բնակատեղիներում՝ Մեծամոր, Շենգավիթ, Քոսի ճոթեր (Վանաձոր), Գառնի, Շահլամա (Նոյեմբերյանի տարածաշրջան) հայտնաբերվել են նաև քարայծի, վարազի, կզաքիսի, աղվեսի, գայլի, նապաստակի, կուղբի և այլ վայրի կենդանիների ոսկորներ: Որսորդության լայն տարածման մասին են վկայում նաև պեղումներից հայտնաբերված բազմապիսի նետասլաքները և նիզակի ծայրապանակները:

³³ **С. А. Есаян**, Ереван, 1969, էջ 15:

³⁴ **С. Межлумян**, Палеофауна эпохи энеолита: бронзы и железа на территории Армянского нагорья, Ереван, 1972, с. 166-168.

³⁵ **A. Palmieri**, Excavations at Arslantepe, Malatya. AS vol XXXI p. 207-208.

³⁶ Անասնապահության զարգացման կիսաքոչվորական ձևի իրականացման մասին տես **Б.Б. Пиотровский**, Развитие скотоводства в древнейшем Закавказье, СА, XXIII, 1955, էջ 6:

Ելնելով այն հանգամանքից, որ վաղ բրոնզի բնակավայրերը տեղադրվել են հիմնականում գետերի ափերին՝ տնտեսության մեջ զգալի դեր է խաղացել նաև ձկնորսությունը: Այսպես, Շենգավիթում հայտնաբերվել են ձկան ոսկորների 325 մմ-ից, այդ թվում նաև մեկ մետր երկարությամբ ծածանի ող: Ձկնորսության համար են ծառայել պեղումներից հայտնաբերված տարբեր տեսակի *սուզանիվները* և սուզաքար ծանրոցները³⁷:

Ձարգացման նկատելի մակարդակի են հասել արհեստները՝ խեցեգործությունը, մետաղագործությունը, քարամշակումը: Առավել զարգացած էր խեցեգործությունը: Շենգավթյան մշակույթի հատկանշական գծերից է սև և կարմիր փայլեցված խեցեղենը, որը աչքի է ընկնում ձևերի և զարդանախշի սյուժեների բազմազանությամբ, նուրբ մշակմամբ և պատրաստման յուրահատուկ տեխնոլոգիայով: Ըստ Ե. Բայբուրթյանի և Բ. Կուֆտինի՝ այն կարող էր ստացվել երկու եղանակով. կամ կավե կմախքի վրա դրսից ու ներսից թաց և յուղոտ կավի շերտեր քսելու, կամ էլ՝ թրծման եղանակով: Խեցեղենը հաճախ եռամաս է³⁸: Խեցեղենի պատրաստման համար օգտագործվել է բնակավայրից ոչ հեռու գտնվող հանքերի կավանյութը³⁹:

Վաղ բրոնզի դարաշրջանում շահագործվել են բրոնզի մի քանի հանքավայրեր Լոռիում, Սյունիքում, Տայքում: Հանդես էին գալիս հանքանյութի վերամշակման գործում մասնագիտացված բնակատեղիներ (Ֆիոլետովո)⁴⁰: Պեղումների ժամանակ հաստատագրված են մետաղա զենքի և գործիքների մի քանի տեսակներ՝ դաշույններ, կացիներ, նիզակի ծայրապանակներ, մանգաղներ (աղյուսակ 6, 6ա): Մետաղագործության բարձր զարգացման մասին են խոսում նաև կաղապարները (Շենգավիթ, Գառնի, Կառնուտ (Շիրակ) և այլն): Բրոնզից պատրաստում էին տարբեր տեսակի զարդեր՝ օղեր, շքասեղեր և այլն: Տարածում էին գտել տնտեսական ու պաշտամունքային նշանակության հսկա կաթսաները, բազմազան ամանեղենը, կա-

³⁷ Տե՛ս *Է. Խանգաղյան*, Հայկական լեռնաշխարհի մշակույթը III հազարամյակում, էջ 42-43, *С. Есаян*, Ереван, էջ 17, *С. Межлумян*, նշվ. աշխ., էջ 166:

³⁸ Տե՛ս *Է. Խանգաղյան*, նշվ. աշխ., էջ 69:

³⁹ Տե՛ս *Կ.Օ. Навасардян*, Техника — технологические показатели особенностей керамики Армянского нагорья III-II тыс. д.н.э. (автореферат дис. на соиск. уч. степени канд. ист. наук), Ереван, 1997, էջ 7-8:

⁴⁰ Տե՛ս *Ա.Վ. Геворкян*, Из истории древнейшей металлургии Армянского нагорья, Ереван, 1980, էջ 25-28, 36: *Ա.Վ. Геворкян, Пальмиери. А.*, Фиолетово, Հայաստանի հնագույն մշակույթը, Հ. Մարտիրոսյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 11-13:

փարիչները, պատվանդանները, օջախները (աղյուսակ 3, 3ա) մարդու և կենդանիների արձանիկները (աղյուսակ 3, 4, 5): Արհեստագործական արտադրանքը արտադրվում էր ինչպես տներում, այնպես էլ մասնագիտացված արհեստանոցներում: Պեղումների ժամանակ հայտնաբերվել են քարամշակման (Շենգավիթ, Թեթրի Շղարո),⁴¹ մետաղագործական (Շենգավիթ, Ֆիոլետովո),⁴² խեցեգործական (Լոռուտ)⁴³ արհեստանոցները: Պահպանվել են ոսկերչության զարգացման մասին վկայող նյութեր (Շենգավիթ, Մեծամոր, Ստեփանակերտ)⁴⁴: Պեղումների ընթացքում գտնվել են բազմաթիվ անիվների մոդելներ, ինչպես նաև սայլերի կերտվածքներ, ինչը վկայում է անիվային տրանսպորտի զարգացման մասին⁴⁵:

Ձարգանում էր նաև կաշեգործությունը, ինչի մասին են վկայում հայտնաբերված տարբեր ձևերի և չափերի պահանգավոր դանակները, քերիչները, շեղբերը և հերունները: Մանածագործության զարգացման մասին են վկայում տարբեր տեսակի ոսկրե ասեղները: Շահագոծվում էին նաև աղի Կողբի (Իգդիրից ոչ հեռու) և Բոզդակի (Նախիջևան) հանքվայրերը:

Նշյալ ժամանակաշրջանում սկսվում է նախնադարյան կարգերի քայքայումը, հասարակության սոցիալական շերտավորումը և դասակարգային հարաբերությունների ձևավորումը: Արձանագրվում է բնակավայրերի քանակի զգալի աճ, առաջանում են նախաքաղաքային տիպի խոշոր կենտրոններ, որոնք բնորոշվում են կանոնավոր հատակագծման տարրերով, խոշոր պաշտամունքային և արհեստագործական համալիրների, զարգացած ամրաշինական համակարգերի առկայությամբ: Կարելի է զատել բնակարանաշինության մի քանի տիպեր: Արարատյան դաշտում և հարակից շրջաններում հաստատագրված են կլոր հատակագծով փոքր կացարաններ, որոնք օղակվում էին ուղղանկյուն հատակագծով փոքր կացարաններով: Ամենայն հավա-

⁴¹ Տե՛ս **Դ. Գոբեճյան**ի. Селище Тетри-Цкаро. Тб., 1975, с. 23: **Դ. Սիմոնյան, Լ. Խաչատրյան**, Շենգավիթ բնակավայրի 2003 թ. պեղումները, Զին Զայաստանի մշակույթը, պր. XIII, Երևան, 2005, էջ 56-60:

⁴² Տե՛ս **Դ. Սիմոնյան, Լ. Խաչատրյան**, Շենգավիթ բնակավայրի պեղումները, 2003 թ., էջ 56-60, **Ա. Գեորգյան, Ա. Բալմիերի**, Фиолетово, Зайясстанин инвагоуин мշակույթը, Երևան, 2001, էջ 11-13:

⁴³ **Ս. Ղևնդյան**, Զնագիտական հետազոտություններ Տաշիր-Չորագետում, Երևան, 2001, էջ 15:

⁴⁴ Տե՛ս **Ս. Սարգսյան**, Զայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2003, էջ 274: **Կ.Ք. Կուսնարեյ, Դ. Մ. Կուբինյան**ի. Древние Культуры Южного Кавказа. Л. 1971.

⁴⁵ Տե՛ս **Ս. Ա. Եսայան**. Скульптура... с. 16:

նականությամբ դրանք նահապետական մեծ ընտանիքի բնակարանային համալիրներ էին, ընդ որում ուղղանկյուն կացարանները կարող էին նախատեսված լինել առանձին փոքր ընտանիքների համար, այն ժամանակ երբ կենտրոնական կացարանը օգտագործվում էր որպես հասարակական-տոհմական, արտադրական և պաշտամունքային կենտրոն (աղյուսակ 7): Վաղ բրոնզի զարգացմանը զուգընթաց՝ նկատվում է բնակարանային համալիրների առանձնացում:

Ք.ա. III հազ. երկրորդ կեսին Հայկական լեռնաշխարհում հանդես են գալիս առաջին պալատական կառույցները (Սորշում թեփե, աղյուսակ 7ա, բ): Պաշտամունքային կառույցների տիպաբանությունը հնարավորություն է տալիս խոսել հիերարխիայի մասին⁴⁶: Մասնավորապես կարելի է գատել մոնումենտալ ճարտարապետությամբ բնորոշվող սրբավայրերը (Մոխրաբլուր)⁴⁷: Առկա է «սրբազան տարածքը» կազմակերպելիս տեղանքի օգտագործման երկույթը (Ագարակ, Ամիրանիս գորա)⁴⁸: Իր ուրույն ճարտարապետությամբ է բնորոշվում նաև Ջրահովտի սրբավայրը⁴⁹: Այդ կառույցների հետ մեկտեղ պաշտամունքային անկյուններ և հատվածներ կան կացարաններում, որոնք թույլ են տալիս խոսել վաղ բրոնզի դարաշրջանում կրակի և ջրի պաշտամունքի մասին: Վաղ բրոնզի դարաշրջանի պաշտամունքի ուսումնասիրության համար առատ նյութ է տալիս պաշտամունքային օջախների և զոհարան-հենակների ուսումնասիրությունը: Նմանատիպ կերտվածքներ կան վաղ բրոնզի դարաշրջանի բոլոր հուշարձաններում՝ ինչպես բնակավայրերում, այնպես էլ դամբարաններում: Դրանց բազմազանությունը թույլ է տալիս խոսել օջախների և հենակների մի շարք ծիսական գործառույթների մասին՝ կապված ընտանիքի, նախնիների պաշտամունքի հետ⁵⁰ (աղյուսակ 3): Պեղումների ընթացքում գտնված բազմաթիվ արձանիկները վկայում են վաղ բրոնզեդարյան պաշտամունքի տարբեր կողմերի մա-

⁴⁶ Տես *Ա. Գնունի*, Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը և պաշտամունքային կառույցները, ՊԲՀ, 2006, թիվ 1, էջ 237-252:

⁴⁷ Տես *Դ. Ե. Арешян*. Искусство куро-аракской культуры. Материалы II международного симпозиума по армянскому искусству (отд оттиск) Е., 1978, с. 5.

⁴⁸ Տես *Ս. Բ. Аветисян*. Предварительные результаты раскопок памятника Агарак. Археология, этнология и фольклористика Кавказа. Св. Эчмиадзин, 2003 с. 254. *Դ. Կոնյան*. К древней истории Южного Кавказа. Тб., 1971, с. 69.

⁴⁹ Տես *Է. Խանգույան*, Ջրահովտ, Հայաստանի հնագույն մշակույթը, պր. 3, Երևան, 2002 էջ 14, նկ. 2

⁵⁰ Տես *Ա. Գնունի*, Շենգավթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները, ՊԲՀ, 2004, թիվ 1, էջ 203-220:

սին: Այսպես, կնոջ արձանիկները մայր-աստվածուհու պաշտամունքի արտահայտությունն են: Հատկանշական է, որ արձանիկներում ընդգծված են կանանց կրծքի և ազդրերի հատվածները, ինչը մարմնավորում է կնոջ դերը որպես սերունդ շարունակողի և ընտանիքի պահապանի⁵¹: Միևնույն ժամանակ վաղ բրոնզեդարյան կերտվածքներում ֆալոսատիպ տարրերի առկայությունը վկայում է հայր-նահապետի դերի բարձրացման մասին⁵² (աղյուսակ 4):

Վաղ բրոնզի դարաշրջանում հաստատագրվում է դամբարանադաշտերի զատումը բնակատեղիներից: Թեպետ կացարանների ներսում թաղումները դեռևս պահպանվում են (Մեծամոր, Ամիրանիս գորա), սակայն դրանք կրում էին վերապրուկային և հաճախ պաշտամունքային բնույթ: Հաստատագրված են նաև ինչպես անհատական (Էլառ, Հառիժ), այնպես էլ կոլեկտիվ թաղումներ (Շենգավիթ, Ստեփանակերտ, Արագած, Ամիրանիս գորա): Մեծ բազմազանություն է դիտարկվում նաև թաղման կառույցների մեջ: Կան հիմնահողային, քարարկղային դամբարաններ, հավանաբար նաև տոհմի համար նախատեսված ընդարձակ դամբարանային շինություններ: Թաղման ծեսում նկատելի է սոցիալական շերտավորումը (Ամիրանիս գորա, Ժնվալի)⁵³:

Միջին բրոնզի դարաշրջան (≈ 2400/2300-1500) Բ.ա. III հազ. կեսին Հայկական լեռնաշխարհը թևակոխում է շենգավթյան մշակույթի քայքայման ժամանակաշրջան՝ զիջելով ասպարեզը իրար հաջորդող Թեոդք-վանաձորյան, Սևան-արցախյան և Կարմիր-բերդյան մշակույթներին: Միջին բրոնզեդարյան մշակույթի զարգացման առաջին փուլում ակնհայտ են քաղաքային կյանքի անկման գործընթացները⁵⁴:

Բ.ա. II հազարամյակի առաջին կեսի համար բնորոշ է եղել հողագործական-անասնապահական բնակավայրերի որոշակի վերաբաշխում. տափաստանային և հարթավայրային գոտիների բնակ-

⁵¹ Տե՛ս **С. А. Есаян**. Скульптура древней Армении. Ереван, 1981, с. 15.

⁵² Տե՛ս **Ա. Պնուկի**, Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառույթները, ԲԵՀ, 2004, թիվ 2, էջ 122-130:

⁵³ Տե՛ս **К.Х. Кушнарєва**, Южный Кавказ IX—II тысячелетиях, д.н.э., СПб., 1993, էջ 271-272; **Т.Н. Чубинишвили**, К древней истории Южного Кавказа, Тб., 1971, էջ 69-71; **Է. Խանգաղյան**, Էլառ-Դարանի, էջ 36-49; **А.А. Мартиросян**, Армения в эпоху..., էջ 42-43:

⁵⁴ Տե՛ս **Պ. Ավետիսյան**, Հայաստանի միջին բրոնզի պարբերացումն ու ժամանակագրությունը (թեկն. առեն. սեղմագիր), Երևան, 2003, էջ 18:

չության մի մասի հաշվին ընդլայնվում էին լեռնային շրջանների բնակեցումը՝ կլիմայի չորացման և Հին Արևելքում ստեղծված ռազմաքաղաքական իրավիճակի պատճառով⁵⁵։ Սակայն տափաստանային գոտում, հատկապես առևտրական ճանապարհների խաչմերուկում, որոշ բնակավայրեր պահպանվում են (Ուզերլիկ թեփե, Յաֆթվան թեփե, Ուրմիա լճի ավազան)։ Հատկանշական է, որ Ուզերլիկ թեփե բնակավայրի ստորին շերտի մի փոքրիկ հատվածում բացվել է 70 հոր, որոնցից շատերը լցված են եղել ցորենի, գարու այրված հատիկներով և կորեկի ալյուրով։ Ավելի ցայտուն ու որոշակի են անասնապահության զարգացումն ուրվագծող նյութերը։ Մանր ու խոշոր ընտանի կենդանիների կմախքների կողքին հայտնաբերվել են նաև ձիերի և շների ոսկորներ, որոնց օգտագործումը տնտեսության մեջ կապված էր կիսաքոչվորական անասնապահության վերելքի հետ։ Լեռնային գոտիներում տարածված էր անասնապահության նստակյաց ձևը, ընդորոշում երկրագործական տնտեսության մի մասն էր կազմում ջրովի խոտհարքների մշակումը (Գեղամա լեռներ, Արագածի լանջեր)։ Մանր և խոշոր եղջերավոր անասունների քանակական աճը հավելյալ արժեքի կուտակման, փոխանակության ու առևտրի հուսալի բազա է դառնում։

«Բարբարոսական հոյակապությամբ լի» դամբարանային կառույցների առավել նշանավոր նմուշների կառուցման ժամանակ ծախսված մարդկային ռեսուրսները և շինանյութը չէին զիջում հսկայական միջագետքյան տաճարների կառուցման ժամանակ ծախսված ռեսուրսներին (Վ. Մասսոն), ինչը վկայում է առաջնորդների ձեռքերում կուտակված հսկայական իշխանության մասին⁵⁶։ Սոցիալական առումով միջին բրոնզը աչքի է ընկնում վաղագույն դասակարգային հարաբերություններին անցումով և բնորոշվում «որպես առաջնորդության դարաշրջան» ու «քաղաքակրթության անցման ոչ ուրբանիստական ուղի»⁵⁷։ Քարաշամբի և Քորուխ-թաշի գավաթներում գահին նստած առաջնորդների պատկերները ակնհայտորեն վկայում են առաջնորդների իշխանության պաշտոնականացման մասին։ Թաղման ծեսի վերլուծությունը խոսում է մահացած առաջնոր-

⁵⁵ Տե՛ս К.Х. Кушнарева, *Гл. 2. Էջ. 1*, էջ 240։

⁵⁶ Տե՛ս **В. Массон**, *Древние гробницы вождей на Кавказе. Кавказ и Восточная Европа в древности*. М., 1973, с. 102-113.

⁵⁷ Տե՛ս **В. Массон**, *Кавказский путь к цивилизации. Древние общества Южного Кавказа*. С.П.-б., 1997 с. 124-133.

դի սրբագործման մասին: Միջին բրոնզեդարյան հարուստ դամբարանների թաղման գույքի հետազոտությունը թույլ է տալիս ենթադրել առաջնորդի՝ գորահրամանատարի և քրմի գործառույթների համատեղման մասին⁵⁸:

Սոցիալական համակարգը արհեստների և արվեստների զարգացմանը պահանջներ էր ներկայացնում: Հսկայական դամբարանային կառույցների չափերը և ճարտարապետությունը վկայում էին զարգացած շինարվեստի մասին⁵⁹:

Ձարգանում էր նաև ոսկերչությունը: Քարաշամբի, Թռեղքի (աղյուսակ 8, 9, 10), Վերին Նավերի պեղումներից հայտնաբերված նմուշները աչքի են զարնում կատարման վարպետությամբ: Բարձր մակարդակի էր հասել դրվագման արվեստը⁶⁰:

Հայկական լեռնաշխարհի պատմության միջին բրոնզեդարյան փուլի սկիզբն ազդարարող և ոսկերչության զարգացման աննախադեպ մակարդակի մասին վկայող նշանակալից հավաքածուներից մեկը պեղվել է Քարաշամբի դամբարանադաշտում: Այն Թռեղքյան մշակույթին վերագրվող հուշարձան է և թվագրվել է Ք.ա. III-II հազարամյակների սահմանագծով⁶¹: Հին արևելյան ոսկերչության անկրկնելի նմուշ է այս դամբարանից գտնված արծաթյա դրվագազարդ գավաթը: Այն միջին բրոնզի կենցաղի և հավատալիքների մասին հարուստ տեղեկություններ է տալիս:

Միջին բրոնզեդարյան դարաշրջանում զարգացման բարձր մակարդակի է հասնում նաև զինագործությունը: Հանդես են գալիս զենքի բազմաթիվ տեսակներ՝ դաշույններ, կացիններ, նիզակներ: Ձենքի և ռազմական գործի միջին բրոնզեդարյան մշակույթների կրողների կյանքում դրանց մեծ նշանակության մասին է վկայում զենքի առանձին նմուշների զարդարումը ծիսական հատկանիշներով: Հանդիպում են ակնհայտ ծիսական նպատակների համար նախատեսված զենքի նմուշներ⁶² (աղյուսակ 11):

⁵⁸ *Ս. Ղևնդի*, Առաջնորդի, գորահրամանատարի և քրմի գործառույթների համատեղումը Հին Հայաստանի տարածքում, Հայկական բանակ, 2006, թիվ 4, էջ 81-86:

⁵⁹ Հայկական ճարտարապետության պատմություն, թիվ 1, Երևան, 1996, էջ 70:

⁶⁰ Հին Հայաստանի ոսկին, Ե., 2007 էջ 71-89:

⁶¹ Տե՛ս *Оганесян В.Э.* Серебряный кубок из Карашамба, ՊԲՀ, 1988, № 4, էջ 145-160; Հին Հայաստանի ոսկին, Երևան, 2007, էջ 89-91:

⁶² *А. Гнуни*, К вопросу о сакральном значении некоторых предметов вооружения из погребальных памятников эпохи средней бронзы. Археология, этнология и фольклористика Кавказа. 2003, с. 72-77.

Մետաղագործության այլ ճյուղերի զարգացման մասին են վկայում պեղումներից հայտնաբերված կաթսաները:

Փայտամշակման արհեստի արտահայտություն են հայտնաբերված հյուսնի գործիքները՝ դուր, ուրագ, եռոտանի անոթներ, գավաթներ, մատուցարաններ⁶³: Հատկանշական է, որ նման գործիքներ պեղվել են նաև հարուստ դամբարաններում, ինչը խոսում է ատաղձագործի արհեստի սրբագործման մասին⁶⁴:

Դամբարանային գույքի հետազոտությունը հնդեվրոպական ժողովուրդների դիցաբանության համատեքստում հանգեցնում է դիցաբանական բարդ համակարգի առկայության գաղափարին, որը արտացոլում էր զարգացած սոցիալական հարաբերությունները⁶⁵:

Միջին բրոնզին հաջորդած **ուշ բրոնզի (Ք.ա. 1500-1200) և վաղ երկաթի (Ք.ա. 1200-820)** դարաշրջաններում բնակավայրային կյանքը ասպրում է նոր վերելք: Ձևավորվում է բնակավայրերի և ամրոցների աստիճանակարգ: Այդ մասին են վկայում Արարատյան դաշտի և հարակից նախալեռնային շրջանների մի շարք հուշարձաններ՝ Դվինը, Լազարավանը, Մեծամորը, Ավանը, Մոսկանը, Լճաշենը և այլն: Այսպես, Լազարավանի քաղաքատեղիի տարածքը զբաղեցնում էր մոտ 40 հա, որից 1,5 հեկտարը զբաղեցրել է միջնաբերդը: Միջնաբերդի անառիկությունը ապահովել են դեպի քաղաքը ուղղված 10 հսկա աշտարակները: Քաղաքատեղին ունեցել է կանոնավոր հատակագիծ, փողոցների կանոնավոր ցանց, ուղիղ և 6 մ լայնությամբ երկու կողմերում կառուցվել են բնակելի տներ: Առանձին տեղերում դիտվում են առանձնացվող թաղամասեր, փողոցների միավորման վայրերում՝ հրապարակներ⁶⁶:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի դարաշրջանի բնակարանային համալիրներ պեղվել են Մեծամորում, Գյումրիում, Լճաշենում, Կարմիր բլուրի նախաուրարտական բնակատեղիում: Կարմիր բլուրի բնակելի համալիրները բաղկացած էին անկյունավոր հատակագծով մեկ ընդարձակ և 5-6 փոքր սենյակներից: Տների պատերը կառուցվել են անմշակ քարերից, կավաշաղախով: Ծածկերի համար օգտագործվել է փայտը, եղեգը և կավը: Ըստ Հ. Մարտիրոսյանի ուսումնասի-

⁶³ Տե՛ս **Կ. Խ. Կուшнарева**, Южный Кавказ IX-II тысячелетиях д.н.э., էջ 106:

⁶⁴ **Ս. Եսայան**, Հայաստանի հնագիտություն, Երևան, 1992, էջ 168-236:

⁶⁵ **Ա. Գյուլի**. Опыт анализа погребального инвентаря двух погребений эпохи средней бронзы Армении, «Լրաբեր հասարակական գիտությունների», 2003, թիվ 2, էջ 72-96:

⁶⁶ Տե՛ս Հայկական ճարտարապետություն, էջ 70:

րությունների՝ ինչպես Արևելքի երկրագործական մարզերում, այնպես էլ Հայաստանի դաշտային շրջաններում յուրաքանչյուր «համայնական տուն» բաղկացած էր կլոր ու քառանկյունի շինությունների միատիպ, մեկուսացված խմբերից: Կլոր կացարանների շուրջը համախմբված քառանկյունի շինությունները՝ իրենց մեծ ու փոքր հորերով, ամբարներով հանդերձ՝ հացահատիկի պահեստներ էին, իսկ շինությունների մյուս մասը՝ գոմեր ընտանի կենդանիների համար: Իրենց միատիպ ներքին կառուցվածքով չափազանց հետաքրքիր են կլոր կացարանները: Այստեղ որոշակի դասավորություն ունեն կավակերտ երկարուկ նստարանները, հատակի մեջ թաղված կարասներն ու պատի մի անկյունում պատրաստված օջախը: Օջախների մոտ հաճախ գտնվում են սանդեր, ծեծիչներ, աղորիքներ: Կացարանների կենտրոնական մասում փորված է հացահատիկի հորը, որի եզրին կանգնեցված է պտղաբեր կնոջ կերտվածքով քարե կուռք: Շինությունների մեկուսացված այս փոքրիկ խմբերը պատկանելիս են եղել փոքր ընտանիքներին, որոնք առաջացել էին ընտանեկան համայնքների շարունակական տրոհումից: Այդուհանդերձ նկատելի է, որ հասարակության սոցիալական, տնտեսական միավորը շարունակում էր մնալ ընտանեկան համայնքը⁶⁷:

Ճարտարապետական բարձր մակարդակի մասին են վկայում դամբարանային բարդ կառույցները: XXI-XIX դդ. Թռեղքի (Ծալկայի սարահարթ) հսկայածավալ դամբարանաբլուրները ունեին 140-175 քառ. մետր մակերեսով սրահներ՝ երկար ու լայն դամբարանամուտքերով և մինչև 6 մետր աստիճանական շարվածքով բարձրությամբ պատերով, սյուների վրա հենված հզոր գերանածածկով:

Ուշ բրոնզի և վաղ երկաթի փուլում դամբարանային կառույցների ծածկը փոխարինվում է քարաշեն ծածկով: Ծածկը կարող էր լինել *հարթ*⁶⁸՝ հենված ուղղահայաց պատերի վրա, *կեղծ թաղ* և *երկթեք*⁶⁸:

Հանգուցյալին նախապես դիակիզում էին և աճյունասափորը դիակառքով տեղավորում թաղման ընդարձակ սրահի կենտրոնում, որի շուրջը սփռում էին մորթված անասունների մարմիններ, ուտելիքով լի տասնյակ ամաններ, հանգուցյալի սպառազինության, արդու-զարդի, կենցաղի թանկարժեք առարկաներ և այլն:

⁶⁷ Տե՛ս **Ա.Ա. Мартиросян**, Город Тейшебаини, Ереван, 1961, էջ 28-31, նույնի՝ Армения в эпоху бронзы..., էջ 160-190, նույնի՝ Հայաստանը զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանում, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, էջ 226-227:

⁶⁸ Տե՛ս Հայկական ճարտարապետության պատմություն, էջ 68-70:

Ք.ա. II հազ. վերջին դարերում երկրագործության բարձր զարգացման մասին են խոսում ոչ միայն կավե ամանեղենի վրա պահպանված բուսական հարուստ զարդապատկերներն ու պտղաբերության կուռքերը, այլև վար ու ցանքսի, բերքահավաքի ու գյուղատնտեսական մթերքների վերամշակման գործիքները՝ բազմաքանակ ու բազմազան: Առանձնապես մեծ թվով են ներկայացված կիկլոպյան բերդերի ապառաժ քարերի մեջ կողքկողքի փորված սանդեղեր, տաշտակներն ու բազալտե քարերից պատրաստված սանդեղերն ու սանդակոթերը, մակույկածև ու քառանկյունի աղորիքները, փայտից ու վանակատից պատրաստված կամերի մնացորդները և այլն:

Հայաստանի դաշտային շրջաններում նույնպես զարգանում էր անասնապահությունը. այստեղ հիմնական կենդանիները խոշոր եղջերավոր անասուններն էին, որոնք լայնորեն օգտագործվում էին երկրագործության մեջ որպես քաշող ուժ: Կարմիր բլուրի նախաուրարտական բնակավայրում հայտնաբերված ընտանի կենդանիների ոսկրաբանական մնացորդները, ըստ հնէաբան Ս.Կ. Մեժլումյանի դիտումների, ցույց են տալիս, որ խոշոր եղջերավոր անասունների թիվը տափաստանային բնակատեղիներում մոտավորապես չորս անգամ ավելի էր մանր եղջերավոր անասունների թվից:

Գեղարքունիքում, Արցախում և այլուր ուշ բրոնզի դարից զբաղվում էին տոհմական ծիաբուծությամբ⁶⁹: Լճաշենի, Առաջածորի, Դիլիջանի, Վանաձորի և այլ շրջանների դամբարաններում մարդկանց կմախքներից բացի գտնվում են ձիերի ամբողջական կմախքներ, իսկ նրանց գլուխներն ու ձիասարքի մասերը հանդիպում են պարբերաբար:

Ք.ա. II հազարամյակի վերջի և I հազարամյակի սկզբի նյութերը ակնհայտորեն վկայում են արհեստների նոր վերելք ապրելու մասին, իսկ Դվինում և Մեծամորում գտնված հսկայական արհեստագործական համալիրները՝ արհեստների զարգացվածության և նրանց պաշտամունքի ձևավորման մասին⁷⁰:

Ուշ բրոնզի դարի մետաղագործ վարպետները աշխատանքի գործիքներ, իրեր էին արտադրում արհեստների ու տնտեսության ամենատարբեր ճյուղերի և կենցաղային, կրոնապաշտամունքային կարիքների համար: Արթիկի ինքնատիպ դամբարաններից մեկում

⁶⁹ Տե՛ս **Б.Б. Пуотровский**, Археология Закавказья, Л., 1949, էջ 77:

⁷⁰ Տե՛ս **Է. Խանգաղյան, Կ. Սկրոջյան, Է. Պարսամյան**, Մեծամոր, Երևան, 1973, էջ 64-67:

հնագետները հայտնաբերել են ատաղձագործի բրոնզյա գործիքներ՝ սղոց, կացին, տարբեր տրամաչափի ու լայնության դուրեր⁷¹:

Մետաղագործության զարգացած ճյուղերից մեկը ոսկերչությունն էր: Լճաշենի և Տոլորսի դամբարաններում թաղված հարուստ մեծեցյալները պնդված էին ոսկյա խոշոր գլանաձև, գնդաձև, թեփուկավոր, սկավառակաձև ուլունքներով, նշաձև քարերով ազուցված հատիկավոր նախշ ունեցող կոճակներով, սկավառակատիպ տափակ զարդերով, թանկարժեք քարերից պատրաստված մանյակներով և այլն: Ոսկերչության մեջ մեծ էր հին արևելյան ավանդույթների դերը:

Ք.ա. II հազարամյակի վերջին քառորդում բարձր զարգացման հասան մի շարք արհեստներ, ինչպես, օրինակ, քարագործությունը, ոսկրագործությունը, կաշեգործությունը, կոշկակարությունը, մանածագործությունը:

Հայաստանի տարբեր վայրերում հայտնաբերված կոշկաձև կավե ամանների քանակն ու բազմատեսակությունը վկայում են նշված ժամանակաշրջանում Հայաստանում տարբեր տիպի ճութավոր կոշիկների լայն օգտագործման մասին (աղյուսակ 11), իսկ Արթիկի դամբարաններից մեկում պահպանված գեղեցիկ բանվածքներով ու բրոնզյա փոքրիկ զարդերով գործվածքի մնացորդը ցույց է տալիս, թե ինչպիսի գեղեցիկ հագուստներ կարող էին ունենալ բրոնզի դարի մարդիկ⁷²:

Խեցեգործության մեջ առկա են կավե առարկաների հազարավոր տեսակներ ու մոուլներ՝ երկրագործական զարդամոտիվների փորագիր, վերադիր, կենդանակերպ զարդերով, ցուլերի ռելիեֆ գլխիկներով կամ կենդանիների ամբողջական պատկերներով, վագրերի և օձերի ռելիեֆ քանդակներով, եղնիկների, քարայծերի ու այլ կենդանիների գծավոր փորագիր զարդերով, երբեմն էլ որսի ամբողջական տեսարաններով՝ մարտակառքերի ու մարդակերպ էակների մասնակցությամբ: Այս տեսակետից չափազանց ուշագրավ են որսորդական ինքնատիպ հորինվածքների հարթաքանդակ պատկերներով զարդարված Դվինի հսկա կարասները, Ջանգեզուրի և Սևանի շրջաններում հայտնաբերված վերոհիշյալ կոշկաձև անոթները, որոնք հաստատագրում են ցածրակրունկ, փափուկ, ճտկավոր կոշիկների տարբեր ձևերի առկայությունը հնագույն ժամանակներում:

⁷¹ Տե՛ս **Т.С. Хачатрян**, Материальная культура Артика, Ереван, 1963, աղ. 3, նկ. 1, 5, 6–10:

⁷² Տե՛ս **А.А. Мартиросян**, Армения в эпоху бронзы..., աղ. XV, նկ. 1–3; **Т.С. Хачатрян**, Материальная культура Артика, նկ. 13–20:

Երկրագործության, անասնապահության ու արհեստների հետ միաժամանակ զարգանում էին նաև փոխադրամիջոցները, որոնց լավագույն նմուշները առատորեն պահպանվել են Լճաշենի հարուստ դամբարանաթմբերում: Դրանք բազմաքանակ ու բազմապիսի սայլեր են՝ կամարակապ ծածկով, երկանիվ ու քառանիվ, ճանապարհորդական կամ մարտական արագընթաց կառքեր, մանկական սայլակներ, մարտակառքերի մետաղե բնօրինակներ և այլն (աղյուսակ 2):

Լճաշենի սայլերն ու կառքերը պատկանում էին ցեղային ավագանու ներկայացուցիչներին. հնարավոր է՝ պատրաստված են եղել հուղարկավորության հատուկ նպատակների համար, քանզի ունեն բարդ ու նուրբ փորագրություններ, հարյուրավոր մասեր պատրաստված են տարբեր տեսակի ու որակի, անգամ թանկարժեք կարմիր փայտից:

Ի վերջո, գտնվելով Արևելքի ու Արևմուտքի միջև՝ Հայկական լեռնաշխարհը բրոնզ-վաղ երկաթեդարյան ժամանակաշրջանում Հին աշխարհի կարևոր տարանցիկ ուղիներից մեկն էր և ասես կամուրջ լիներ Հին Արևելքի, Հյուսիսային Կովկասի և Հարավարևմտական տափաստանների միջև՝ չմայած ռելիեֆի կտրտվածությանն ու լեռնային պատմեշների առկայությանը:

Ք.ա. II–I հազարամյակների հայտնի բազմաթիվ պաշտամունքային հուշարձանների (Գեղարոտ, Մեծամոր, Դվին) հնագիտական նյութի, ինչպես նաև ուրարտական արձանագրություններում պարունակվող տվյալների համադրությունը հնարավորություն է տալիս եզրակացնել, որ Հայաստանի տարածքում արդեն գոյություն ունեին մի շարք պետական կազմավորումներ: Պեղումներից հայտնաբերվել են իշխանության բազմաթիվ խորհրդանիշներ (գավազանի գլխամասեր, արարողակարգային զենք և այլն): Իշխանության կարևոր խորհրդանիշ էին նաև բրոնզե գոտիները, որոնց վրա գծանկարներով ցուցադրված են վահանակիր ռազմիկների կարգը, նիզակակիր հեծյալներ և մարտակառքեր՝ զորահրամանատարի առաջնորդությամբ: Դրանք լրիվ պատկերացում են տալիս բրոնզեդարյան ջոկատների կազմի, զինավարության և մարտական կարգի վերաբերյալ⁷³:

Ազգագրական առումով ուշագրավ է առաջնորդների հուղարկավորման կարգը ուշ բրոնզեդարյան դամբարանադաշտերում (օր.՝ Լճաշեն): Լճաշենի դամբարանաբլուրների տրամագիծը հասնում է

⁷³ См **А.А. Мартиросян**, Армения в эпоху бронзы..., т. 2, 160, ил. 65:

18–20 մ-ի, թաղման սրահները, որ երկարուկ քառանկյուն միջանցքների տպավորություն են թողնում, ունեն 5–8 մ երկարություն, 2,5–3,5 մ լայնություն, կառուցված են հսկա (3,5 տոննանոց) ժայռաքեկորներից, ունեն կրկնակի գերաճածով տանիք և հսկայական սալքերից կառուցված կեղծ կամարակապ ծածկեր: Դրանց մի պատը շարվում էր հողարկավորությունից հետո, երբ առաջնորդների աճյունները դամբարան էին իջեցնում ցլերով լծված շքեղ դիակառքերով, որոնց վրա և շուրջը տեղավորում էին ճնշեցյալի արդուզարդը, հանդերձանքը, սպառազինությունը, ձիասարքը, առաջնորդի խորհրդանշանները: Դամբանախուցը պաստառապատում էին բեհեզյա գործվածքներով, ճնշեցյալին ծածկում էին ոսկեզարդ սավանով, դամբարանի հատակի վրա շաղ տալիս «խնկարկման» պաշտամունքային կրակարանների մոխիրը, ճնշեցյալների հագուստը ներկում էին կարմիր օխրայով: Երբեմն գերեզման էին իջեցնում նաև սպանված յուրայինների ու ստրուկների դիակները⁷⁴: Այս ամենը շատ նման է հայոց Արտաշես թագավորի թաղման կարգին⁷⁵:

Հասարակության շերտավորման, դասակարգային հարաբերությունների և պետականության ձևավորման հետ զուգընթաց զարգանում է պաշտամունքը: Հին ծեսերը և հավատալիքները պահպանվելով հանդերձ, հաճախ ստանում էին մեկնություն: Օրինակ՝ տիեզերական մարմինների պաշտամունքը կապվում էր նաև առաջնորդ-թագավորի պաշտամունքի հետ: Նույն իմաստն էին ստանում պտղաբերության հետ կապված ծեսերը, քանզի առաջնորդ-թագավորը ընկալվում էր որպես հպատակների հայր, երկրում կայունության և պտղաբերության երաշխավոր:

Հայկական լեռնաշխարհում ավելի վաղ, քան այլ երկրներում լայն կիրառություն գտավ երկաթը (Ք.ա. II հազարամյակի վերջ – I հազ. սկիզբ): Այստեղից են երկաթե իրերը արտահանվել Առաջավոր Ասիա:

Ք.ա. VIII դ. սկզբից Հայկական լեռնաշխարհը թևակոխեց **երկաթի լայն տարածման դարաշրջան**: Թուրակ-կալեի (Ռուսախինիլի) պեղումների ժամանակ հայտնաբերվել են հողամշակման և բերքահավաքի բարձր զարգացածության երկաթե գործիքներ՝ խոփեր, եռաժանիներ, մանգաղներ, բահեր, ուրագներ, նաև մթերքներ պահելու կավե ամաններ:

⁷⁴ Տե՛ս **Հ. Մարտիրոսյան**, Հայաստանը զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանում (Հայ ժողովրդի պատմություն, հ. I, էջ 224, 226):

⁷⁵ **Մովսես Խորենացի**, Հայոց պատմություն (թարգմանություն, ներածություն և ծանոթագրություններ ակադ. **Ստ. Մալխասյանի**), Երևան, 1961, էջ 216–217:

Թեյշեբանիի պեղումներից, Թոփրակկալեից, Հայկաբերդից, Շուշանցից հայտնաբերված հնագիտական նյութերը հավաստում են դաշտամշակության, այգեգործության, խաղողագործության, գինեգործության, բանջարաբուստանային կուլտուրաների մշակության բարձր զարգացած լինելու մասին: Թեյշեբանիի հացահատիկի շտեմարանների պաշարների տարողությունները չափվել են մի քանի հազար «կապի»-ներով⁷⁶: Այստեղ հայտնաբերվել են ձիթի, գինու և գարեջրի արհեստանոցներ: Մշակվել են մերկահատիկ և հնագույն ծագում ունեցող կլորահատիկ ցորենի մի քանի տեսակներ: Կորեկը և գարին ծառայել են նաև որպես հումք խմիչքներ պատրաստելու, իսկ քունջութը՝ ձեթ ստանալու համար⁷⁶: Էրեբունիում, Արգիշտիխիլիում հայտնաբերվել են գինու վիթխարի մառաններ՝ խոշոր կարասներով⁷⁷: Խեցեգործությունը հատկանշվում էր ձևերի ու չափերի, պատրաստման տեխնիկայի բազմազանությամբ: Պեղածո մնացորդներում առանձնապես աչքի են ընկնում ոսկեհատ (խարջի), մսխալի (Արարատ), հաշաբաշ սև խաղողի մի քանի տեսակներ, իսկ բանջարաբուստանային կուլտուրաների շարքում՝ ձմերուկ, սիսեռ, ոսպ⁷⁸: Հայկական լեռնաշխարհը ուներ ոռոգման լայն համակարգ: Բացի գետերից օգտագործվում էին նաև ջրային այն պաշարները, որոնք գոյանում էին լեռնային աղբյուրներից, լճակներից, լեռների ծալքերում մթնոլորտային տեղումներից կուտակված ջրերից: Ուրարտական ջրանցքները ճարտարապետական առումով բավական զարգացած համակարգեր էին: Դրանցից պահպանվել են բազմաթիվ, առ այսօր գործող կառույցներ, որոնց թվում են Շամիրամի, Մարանդի, Խոտանալուի ջրանցքները, Հոկտեմբերյանի ջրաբաշխական ցանցը և այլն: Ջրաբաշխական համալիրների մեջ մտնող առավել նշանակալից ջրամբարներից է Քեշիշ-գյուղ⁷⁹:

Թեյշեբանիի, Էրեբունիի և Արգիշտիխիլիի հնագիտական նյութերը հաստատում են, որ երկրագործության հետ մեկտեղ անասնապահությունը եղել է Վանի թագավորության բնակչության հիմնական տնտեսական զբաղմունքը: Անասնապահության մեջ կարևոր տեղ էին գրավում խոշոր ու մանր եղջերավոր անասունները: Կարևոր էր նաև ձիաբուծությունը: Ձիերը օգտագործվում էին ոչ միայն տնտե-

* Վանի թագավորությունում տարածված կշռի միավորը:

⁷⁶ Տե՛ս **Б.Б. Пиотровский**, Ванское царство, էջ 133-142, 163-164:

⁷⁷ Տե՛ս **К.Л. Оганесян**, Эребуни, Ереван, 1980, **А.А. Мартиросян**, Аргистихинили, Археологические памятники Армении, 8, Երևան, 1974:

⁷⁸ Տե՛ս **Б.Б. Пиотровский**, Ванское царство, 142-147

⁷⁹ Տե՛ս **Գ. Շիրմազան**, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962:

սության մեջ, այլև ռազմական գործում: Առանձին նշանակություն են ունեցել նաև ջորին, ավանակը, որոշ տեղերում՝ նաև ուղտը:

Ք.ա. VIII դարում Արգիշտի 1-ին արքայի օրոք (Ք.ա. շուրջ 786-764 թթ.) Վանի թագավորության կազմում ընդգրկված էր գրեթե համայն Հայկական լեռնաշխարհը իր բոլոր «երկրներով» (թագավորություններով), ցեղապետություններով և «քաղաք-պետություններով», որոնց ընդհանուր թիվը հասնում էր 170-ի⁸⁰:

Վանի արքաների իշխանությունը Ք.ա. IX դ. 2-րդ կեսերից մինչև – VII դ. լեռնաշխարհում հիմնվում էր ծայրագավառներով և կենտրոնով անցնող ճանապարհների մոտ նոր կառուցված քաղաքների վրա: Ուրարտական քաղաքները հիմնականում փռված էին բարձր բլուրների ստորոտներում, որոնց գագաթներին վեր էին խոյանում պարսպապատ միջնաբերդերը: Միջնաբերդի իշխող բարձր դիրքը նպատակ ուներ տեսադաշտում պահելու այն ճանապարհները, որոնք տանում էին դեպի տվյալ բնակավայրը: Մյուս կողմից՝ բլուրների գագաթները պարփակող պարիսպները բնակավայրի պաշտպանության երաշխիքն էին: Բերդերի հետագա հզորացումը արտահայտված է մի շարք արտաքին պաշտպանական պարիսպների կառուցումով⁸¹: Քաղաքաշինական ծրագիրը թելադրվում ու պայմանավորվում էր ոչ միայն տարածքների արժեքավորման տեղային հանգամանքներով, այլև՝ տվյալ տարածքի համակարգում փոխադարձաբար շաղկապված նրանց ռազմավարական դիրքով: Քաղաքի հիմքն էր կազմում պալատը՝ իր տաճարներով, բնակելի հարկաբաժիններով, հյուրասրահներով, լողասրահներով, արհեստանոցներով, հսկայական գինու մառաններով ու հացի շտեմարաններով: Քաղաքներն ունեին բնակելի թաղամասեր, ջրամատակարարման ու ջրահեռացման համակարգեր և այլն: Նրանց տարածքում էին գտնվում նաև ոռոգման ջրանցքներ, մշակվող դաշտեր, այգիներ, անտառներ, որոնք կազմում էին գյուղատնտեսական խոշոր միավորումներ: Կենտրոնական քաղաքներից՝ յուրաքանչյուրի մակերեսը, պեղումների տվյալների համաձայն, կազմում էր շուրջ 100-200 հեկտար: Արտակարգ մեծ չափերի էր հասել Արգիշտիիսինիլին՝ 400-500 հեկտար տարածքով, որի սահմանների մեջ են մտել նաև քաղաքի մոտակա գյուղական բնակավայրերը: Թագավորանիստ քաղաքների

⁸⁰ Տե՛ս **С.Г. Амаякян**, Ванское царство (Урарту). В кн. “У подножия Арарата” (Каталог выставки). Санкт-Петербург, 2008, с. 29-32.

⁸¹ Տե՛ս **Կ.Լ. Հովհաննիսյան**, Ուրարտական ճարտարապետություն, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1996, էջ 87-199:

թվին են պատկանում երկրի մայրաքաղաքները՝ Տուշպան, Ռուսա-խինիլին: Ուրարտական վարչատնտեսական խոշոր քաղաքներն էին Արգիշտիխինիլին, Թեյշեբահինին, Ալթըն-թեփեն, Օշականը և այլն, որոնք իրենց շրջակա բազմաթիվ գյուղական ավաններով կազմում էին գյուղատնտեսական հզոր համակարգեր՝ ստեղծելով քաղաքաշինական առունով տարածական միասնական համակարգ: Ուրարտական ամրակուռ ամրոցներից էին Երեբունին, Բաստամը (Ռուսա-խինիլի), Ագրաբ-թեփեն և այլն: Պաշտամունքային քաղաքներից են ուրարտական դիցարանի գերագույն երրորդության՝ Խալդիի, Թեյշեբայի ու Շիվինիի պաշտամունքային կենտրոնները: Խալդիի պաշտամունքային կենտրոնը Մուսասիր քաղաքն էր, կամ Արդինին, ինչպես այն անվանում են ուրարտացիները: Թեյշեբա աստվածության պաշտամունքի կենտրոնը Կունենու քաղաքն էր (Վանա լճից հարավ-արևելք), իսկ Շիվինիինը՝ մայրաքաղաք Տուշպան:

Քաղաքային կյանքին զուգահեռ նույնքան սրընթաց զարգանում էր ուրարտական մշակույթը և արվեստը: Արվեստում ձևավորվում էր երեք հիմնական ոճ, որոնցից առաջինը պալատական դասական ոճն էր, երկրորդը՝ ավանդական ուղղությունը՝ հիմնված տեղական, ծայրագավառային (հիմնականում՝ էթիունյան) ավանդույթների վրա, և երրորդը՝ այս երկուսի միաձուլմամբ ձևավորված անչափ հետաքրքիր «սինկրետիկ» արվեստը: Արդյունքում ի հայտ է գալիս ուրույն ու կատարյալ մի ճարտարապետություն, որմնանկարչություն, բարձրաքանդակային ու կիրառական արվեստ, քանդակագործություն ու պատկերագրություն:

Ուրարտուում ձևավորվում են արվեստի այնպիսի ոճեր, որոնք մեծ տարածում չունեին Առաջավոր Ասիայում, ինչպես, օրինակ, մոնումենտալ սյուժետային խմբաքանդակն է արձանագործության բնագավառում և կամ երկթեք տանիքով ու ճակտոնով, ակրոտերիայով ու ստիլոբատին (սյունաշար) հենված սյունաշարով օժտված տաճարները, որպիսին էր Խալդիի և Ուարուբանի-Բազմաշբու աստվածությունների տաճարը Մուսասիրում: ճարտարապետական հորինվածք, որի ունեցած հնարավոր ազդեցության մասին հունական արխայիկ տաճարաշինության վրա շատ է խոսվել⁸²:

⁸² См. **Г.А. Тирацян**, Культура древней Армении (VI в. до н.э. – III в. н.э.), Ереван, 1988, с. 22-27, **К.В. Тревер**, Очерки по истории культуры Древней Армении, с. 69-75, **Б.Б. Пиотровский**, Ванское царство, с. 202, **Դ. Գ. Ավետիսյան, Պ.Ս. Ավետիսյան**, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI-VI դդ., Երևան, 2006: **С.Г. Амаякян**, Ванское царство (Урарту). В кн.: “У подножия Арарата”, с. 29-32:

Ազգագրական առումով ուշագրավ են նաև ուրարտական բնակելի ճարտարապետության մասին եղած տվյալները:

Ուրարտուի բնակարանային ճարտարապետության մասին առաջին տեղեկությունները պահպանվել են Խորենացու մոտ և վերաբերում են Տուշպային: Վերջինս, ըստ պատմահոր հաղորդումների կոչվում էր Շամիրամի քաղաք՝ բավական մեծ, բարեկարգ, անառիկ մի բերդաքաղաք՝ բազմաթիվ երկհարկ և եռահարկ շենքերով*:

Ուրարտուի բնակելի ճարտարապետության մասին հնագիտական պեղումները պարզում են բնակելի տների հետևյալ երեք տիպեր՝ մենատներ, բնակելի տներ՝ խմբային կառուցապատումներով, և միահարկ ու բազմահարկ սեկցիոն տներ:

Մենատներն միավորում էին բնակելի, տնտեսական, պահեստային բնույթի սենյակներ, ընտանի կենդանիների համար հատկացված համապատասխան բաժիններ և կառուցվում էին ավանդական՝ հում աղյուսի պատերով, քարե գետնախարիսխների վրա, հարթ ծածկերով, վերևի լուսավորությամբ: Ամբողջությամբ վերցրած՝ ներկայացնում էին պարսպապատված ներքին տարածություններ՝ իրենց արտաքին միակ դռնով: Տան մեջ էր գտնվում նաև պաշտամունքային անկյունը՝ համապատասխան քանդակակերտ կուռքով: Հայտնի օրինակների թվին են պատկանում Արգիշտիխիլիի, Արագածի, Թեյշեբախնիի մենատները:

Բնակելի տները՝ խմբային կառուցապատումներով, ունեցել են բազմաթիվ բնակելի, տնտեսական, պահեստային սենյակներ, դահլիճ, բակ՝ տնտեսական կարիքների համար, և առանձին հատված՝ ընտանի կենդանիներ պահելու համար: Այսպիսի տներն ունեին քարե պատեր, հում աղյուսից կառուցված վերևի շարքերով, փայտյա հարթ ծածկ, այսինքն կառուցված էին ուրարտական ճարտարապետության ավանդական սկզբունքներով: Նման տների դասական օրինակները հայտնի են Թեյշեբախնիից և Բաստամից (Ուրմիա լճի ավազանում):

Ինչ վերաբերում է սեկցիոն բնակելի տներին, ապա դրանք ստեղծվել են բնակիչների կենցաղի անհատական պահանջների ընդհանրության հաշվառումով, ինչը պայմանավորված էր այնպիսի ապրելակերպով, երբ բնակիչը չուներ մասնավոր տնտեսություն և

* Օգտակար մասնագիտական խորհրդատվությունների համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում հնագետներ, պատմական գիտությունների թեկնածուներ Հայկ Հակոբյանին, Սիմոն Հմայակյանին, Արտակ Գնունուն, Արսեն Բոբոխյանին:

ենթակա էր պետական պարենավորման: Տվյալ դեպքում, հավանաբար, դրանք պետական ծառայության մեջ գտնվող ռազմիկներ էին⁸³:

Վերջին տասնամյակների պեղումները զգալիորեն ընդլայնեցին մեր պատկերացումները ուրարտական պալատների ճարտարապետության մասին: Պարզ դարձավ, որ ուրարտական պալատները մոնումենտալ կառույցներ էին՝ հաճախ երկհարկանի, որմնակարներով զարդարված ներքին տարածություններով, սյունազարդ բակերով ու դահլիճներով, նաև բազմաթիվ օժանդակ սենյակներով: Մեր այսօրվա գիտելիքները ուրարտական պալատների վերաբերյալ հնարավորություն են տալիս տարբերակելու երկու տիպ՝ 1) երկու բակ ունեցող շինությունների համալիրներ, որոնց շուրջ տարածվում են տարբեր նշանակության սենյակներ: Ընդ որում այդ բակերից մեկը (սյուներով շրջափակված է), և նրա շուրջ խմբավորված են պալատի բոլոր ամենակարևոր սենյակները (օրինակ՝ էրեբունի), 2) պալատական համալիր, որի միջուկը սյունազարդ դահլիճն է (Արգիշտիխիմիլի, Բաստամ, Ալթըն-թեփե):

Միջնաբերդերի տարածքում, որպես պալատական համալիրի կարևոր տարր, հիմնականում գոյություն են ունեցել պահեստներ՝ իրենց մեծածավալ կարասներով, որոնք նախատեսված են եղել գինու, հացահատիկի և այլ սննդամթերքի պահպանման համար:

Ինչ վերաբերում է պաշտամունքային շինություններին, ապա ուրարտական խոշոր տաճարները հավանաբար ընդարձակ համալիրներ էին, որտեղ պաշտամունքային կառույցները միավորվում էին աշխարհիկ, տնտեսական, արտադրական ու պահեստային շենքերի հետ: Քրմերի գործունեությունը տաճարներում չէր սահմանափակվում միայն կրոնական ծիսակատարություններով: Տաճարներն էլ, իրենց հերթին, միայն նյութական արժեքներ չէին պարունակում, այլև հանդիսանում էին ռազմական հզոր կենտրոններ⁸⁴:

Ուրարտուն լեռնային երկիր էր, հետևապես վիճափոր կառույցները կազմում են նրա շինարվեստի մի զգալի մասը: Այդ կառույցներն ունեին մույնիսկ իրենց հովանավոր աստվածությունը՝ Աիրաինին: Դրանց թվին են պատկանում ժայռափոր սանդուղքները, խորշերը, պաշտամունքային ու դամբարանային կարիքներին նվիրված արհեստական քարայրները, թունելները ևն:

⁸³ Տես Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1996, էջ 150:

⁸⁴ Տես **7.9. Ավետիսյան**, Արագածի և Արամուսի պաշտամունքային կառույցներն ու քարակոթողները, «ԲԵՅ», 2002, թիվ 2, էջ 52-56:

Վիմափոր կառույցների մի զգալի մասը եղել են դամբանային համալիրներ:

Ուրարտական ջրանցքները նույնպես ճարտարապետական առումով բավական զարգացած կառույցներ էին: Դրանք անցնում էին դաշտավայրերով, դժվար հաղթահարելի և տեխնիկապես բարդ մշակման ենթակա տեղանքներով՝ թունելներով, երբեմն էլ ստորգետնյա արհեստական ուղիներով:

Վանի թագավորության քաղաքներում խմելու ջրի մատակարարման գործը բավականին բարվոք վիճակում էր գտնվում: Այդ են հաստատում հնագիտական հետազոտությունների ընթացքում տարբեր տեղերում ջրատար խողովակների, ինչպես նաև զանազան չափերի ջրամբարների մնացորդների հայտնաբերումները: Դրանցից է Ջիվիստանի ջրամբարտակը, որ կերտված է միջնաբերդի ժայռի խորության մեջ, կամ Արգիշտիխիլիի խոշոր ամբարտակը: Էրեբունիի միջնաբերդում է հայտնաբերվել ուրարտական ջրատար համակարգի լավագույն օրինակը:

Պեղումներից հիմնականում բացահայտվել են պալատական, պաշտամունքային, քաղաքային մոնումենտալ շինությունների մնացորդներ, մինչդեռ գյուղական ժողովրդական հոծ զանգվածների կենցաղային պայմանները պատկերացնող հնագույն շենքերի մնացորդները մեզ քիչ են հասել՝ պարզունակ և ոչ մնայուն կառույցներ լինելու պատճառով: 1934թ. Գյումրի քաղաքում մսի կոմբինատ կառուցելիս հայտնաբերված հնագույն բնակատեղերի մնացորդները, ըստ հնագիտական իրեղեն տվյալների՝ պատկանել են բրոնզի դարին: Այստեղ հայտնաբերված բնակարանները եղել են կիսագետնափոր, խոշոր ու բոլորովին անմշակ քարերից շարված պատերով: Նրանց մեջ գտնված քարե պատվանդանները փայտե սյուների համար վկայում են, որ բնակարանների ծածկը եղել է փայտե գերաններից: Սրանք գրեթե նույնական էին Քսենոփոնի նկարագրած տներին⁸⁵: Հին հայկական գետնափոր կամ կիսագետնափոր գյուղական տները համատարած են եղել նաև ուրարտական և առավել վաղ դարաշրջաններում: Գետնափոր և մեկ ընդհանուր, գմբեթաձև գերանածածկ տանիքի տակ բազմաբաժին բնակարանը օբևան է ծառայել թե՛ մարդկանց, և թե՛ ընտանի կենդանիների համար և իր ծավալով ու դերով միանգամայն համապատասխանել է Հայկական լեռնաշխարհի բնակչության տնտեսական գործունեությանը, բնապահպանական

⁸⁵ Տե՛ս *Խ. Սամուելյան*, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 2, Երևան, 1941, էջ 191:

պայմաններին, հասարակական, ընտանեկան հարաբերություններին, շինարարական նյութերի հնարավորություններին:

Հարկ ենք համարում հակիրճ անդրադառնալ հնագույն զգեստին:

Զգեստի ծագման պատմությունը առհասարակ քիչ է ուսումնասիրված⁸⁶: Նույնը անվերապահորեն վերաբերում է հնագույն Հայաստանի զգեստին⁸⁷: Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչների տարազի վերաբերյալ կարելի է առանձնացնել հնագետներ Ս. Եսայանի և Ս. Հմայակյանի համատեղ հրատարակած «Ուրարտական զգեստը» վերնագրով հոդվածը⁸⁸:

Հեղինակները հիմնականում անդրադարձել են աստվածություններին ու զինվորներին վերաբերող զգեստին: Նյութի անբավարար լինելու պատճառով հասարակության մյուս խավերի հագուստին անդրադարձել են հպանցիկ կերպով:

Կարմիր բլուրից հայտնաբերված տարբեր նրբության գործվածքների պատառիկներն ու թելերի կծիկները՝ ներկված կարմիր, կապույտ, դեղին գույներով և դրանց նրբերանգներով, պատկերացում են տալիս ուրարտացիների օգտագործած կտորների ու նախընտրած գույների մասին: Աստվածները պատկերվել են մարդակերպ և հագուստներով, որոնք ձևով գրեթե չեն տարբերվել օգտագործված զգեստներից: Աստվածները պատկերվել են շքեղ ու ճոխ ասեղնագործված կտորներից կարված շորերով՝ բաճկոններ, թիկնոցներ, վերնաշապիկներ, գլխի հարդարանքներ և այլն՝ առավելագույնի հասցնելով մարդու և աստվածության միջև եղած արտաքին նմանությունը: Բաճկոնը (պատմունճան) ներկայացված է երկու ձևով՝ կարճաթև և երկար ձևով: Բաճկոնը (օրինակ՝ Էրեբունիի որմնանկարներում), օձիքը ասեղնագործված է, փեշերը երկնագույն ցուլերով կամ եռաշար եղևնազարդ նախշված:

Կարմիր բլուրից գտնված բրոնզե արձանիկներից մեկը պատկերված է կարճաթև բաճկոնով՝ խորանարդաձև զարդանախշով,

⁸⁶ Տե՛ս **И.П. Горбачова**, К вопросу о происхождении одежды, "Советская этнография", 1950, № 3, էջ 9:

⁸⁷ Այս առումով անչափ ուշագրավ են **Վ. Հացունու** «Պատմութիւն հին հայ տարազին», Վենետիկ, 1923 և **Ս. Պատրիկի** «Հայկական տարազը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը», Երևան, 1967, ուսումնասիրությունները: Հեղինակները գերազանցապես հենվել են անտիկ և միջնադարյան աղբյուրների վրա:

⁸⁸ Տե՛ս **Ս.Ա. Եսայան, Ս.Գ. Հմայակյան**, Ուրարտական զգեստը, ՊԲՀ, 1980, № 3, էջ 203-213:

քղանցքը՝ ծոպերով: Ծոպազարդ է մաս ուսով անցնող լանջագոտին, իսկ սաղավարտների վրայի պատկերները դրվագված են 11 կենաց ծառերով երկու կողմերում. բոլորն էլ կրում են լանջագոտիներ ունեցող երկար բաճկոններ: Բաճկոնի երկրորդ ձևը առանձնանում է փեշերի լայն բացվածքով: Վերնաշապիկները բաճկոններից տարբերվում էին իրենց կարճությամբ, բայց զգեստի դեր էին կատարում և հասնում էին մինչև ծնկները, նույնիսկ ծածկում էին ծնկները. զարդարված էին ամբողջովին վարդյակներով, փեշերը՝ ծոպերով: Ուրարտացիները օգտագործել են կարճ, մինչև գոտկատեղը հասնող վերնաշապիկներ: Վերնաշապիկները կարվել են նուրբ, իսկ բաճկոնները՝ խավոտ կտորից:

Մեզ են հասել ուրարտական զգեստի բազմաթիվ պատկերներ: Տղամարդու զգեստը կարճ թևերով է և երկար, մինչև կրունկները հասնող եղևնազարդ փեշերով: Մյունիսենի թանգարանի պաշտամունքային քիթեղներից մեկին պատկերված է աստվածների երկշարք երթ: Այստեղ նրանք կրում են սեղմիրան, երկարափեշ, մինչև դաստակները հասնող թևերով, վարդյակազարդ լայն ու ձիգ գոտիներով շորեր: Ծնկները ծածկող քիկնոցի տակ նկատելի է տաբատը:

Ուրարտական աստվածները գրեթե միշտ պատկերված են թիկնոցներով: Խալդին և Թեյշեբան կարճ վերնաշապիկների վրայից կրում են երկար, մինչև կրունկները ձգվող թիկնոցներ, որոնց թևերը հասնում են արմունկներին և ավարտվում բազկապաններով: Ջգեստը հարդարված է խորանարդիկներով, վարդյակներով ու ծաղկաթերթեր հիշեցնող զարդանախշերով:

Կարմիր բլուրից հայտնաբերված բրոնզե գոտու վրա խալդին կրում է բարձր, տափակ գագաթով գլխարկ, որը ծածկում է ճակատը և ծոծրակը, իսկ Էրեբունիի որմնանկարներում՝ հարթ գագաթով եղջյուրակիր գլխարկ: Հետևակ մարտիկները կրել են կարճաթև, լայն գոտիով, մինչև ծնկները հասնող գոտեկապերով սեղմված վերնաշապիկներ, որոնց տակից գծագրվում էին շալվարները: Մինչդեռ հեծյալներն ունեին երկար, մինչև կրունկները հասնող, կարճ թևերով ու ծոպազարդ քղանցքներով բաճկոններ:

Ուրարտական պալատականները հիմնականում կրել են թեք գծերով երիզված կարճաթև, երկար թիկնոցներ, որոնց տակից երևում էին երկար, ծոպերիզված բաճկոնները: Ունեին կիսակլոր, ծոպավոր, փափուկ թաղիքե գլխարկներ⁸⁹:

⁸⁹ Տե՛ս **Б.Б. Пуотроевский**, Искусство Урарту, էջ 40, նկ. 9:

Երեբունիի մեծ դահլիճի որմնանկարներից մեկում պատկերված տեսարանում նկատելի է քրմի հագուստը, որը կարճ, թեք եզրերով, լայն գոտիով բաճկոն է, որի ծոպազարդ քղանցքի տակից գծագրվում է գուլպաների մեջ առնված շալվարը, ուսերին՝ մորթե վերնագգեստ: Այստեղ պատկերվել է նաև որսորդի մի պատկեր, որը կրում է կարճաթև բաճկոն կամ վերնաշապիկ, գլխին՝ ուսերը ծածկող ճակատակալով գլխարկ:

Ուշագրավ է կանանց զգեստը, որը վերականգնվում է աստվածուհիների պատկերներից: Վառում գտնված աստվածուհու արձանիկը կրում է արմունկներին հասնող թևքերով, երկար, մինչև կրունկները իջնող զգեստ՝ ոչ մեծ, կլոր կտրված օձիքով: Կուրծքը զարդարված է ուլունքաշարով և խաչաձև զարդով: Չգեստի վերնամասը հարդարված է երկու զուգահեռ աղեղնաձև թակալակարով, իսկ ամբողջությամբ՝ գծագարդ խորանարդիկներով: Ունի գոտի և մինչև կոնքերն իջնող գլխաշոր⁹⁰: Այսպիսով, ուրարտական հագուստը հայտնի է հիմնականում աստվածությունների, զինվորների և հասարակության վերնախավի զգեստների օրինակներով: Զինվորական հանդերձանքի առանձնահատկությունն է սաղավարտի և զրահի առկայությունը, իսկ քրմությանը՝ մորթե թիկնոցները: Ուրարտացիները իրենց զգեստները կարել են վուշե և բրդե թելերից գործված կտորներից: Ուրարտական շրջանի զգեստները տե՛ս հավելվածում (աղյուսակ 12, նկ. 1-7):

Ք.ա. VI դարում երկիրը Ուրար/շթու անվանը զուգահեռ՝ ստանում է այլ անուն՝ Արմինա (Արմենիա): Քսենոփոնի և Մովսես Խորենացու հաղորդած տվյալներից գիտենք նաև, որ Ք.ա. VI-IV դդ. լեռնաշխարհը, չնայած ենթակա էր Աքեմենյաններին, կառավարվում էր երվանդունիների արքայատոհմի կողմից, որոնց նստավայրն էր Վանը և ապա Արգիշտիխիլի-Արմավիրը: Արքայատոհմ, որը հարատևեց մինչև Ք.ա. II դարը և կարողացավ պահպանել դեռևս Ք.ա. IX-VIII դդ. ձևավորված պետական, վարչական և մշակութային ավանդույթները ու դրանք փոխանցել Արտաշիսյաններին:

Անտիկ դարաշրջանի (Ք.ա. III – Ք.հ. III դդ.) ազգագրական տեղեկությունները հիմնականում ստացվում են օտար աղբյուրներից, որոնք այնքանով են անդրադարձել հայերին, որքանով գտնվել են նրանց քաղաքական, մասամբ տնտեսական հետաքրքրության շրջա-

⁹⁰ Տե՛ս **Б.Б. Пуотровский**, Ванское царство, с. 182-183, рис. 45, 46, **Ս.Ա. Եսայան, Ս.Գ. Դմայկյան**, նշվ. աշխ., էջ 203-215:

նակներում: Սրա հետ մեկտեղ՝ անտիկ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար էական նշանակություն ունեն հնագիտական տվյալները, որոնք և առատորեն ձեռք են բերվել բազմաթիվ հուշարձաններից, հատկապես Հին Արմավիրի, Երվանդաշատի և Արտաշատ մայրաքաղաքի պեղումներից⁹¹: Սրանք լուսաբանում են հայ ազգագրության գրեթե բոլոր բնագավառները: Սակայն հատկապես լավ են արտացոլում նյութական մշակույթի ոլորտները: Հայերի մարդաբանական տիպը, որն առնչվում է նաև հայ ազգագրությանը, ներկայացված է Պերսեպոլիսի հանդիսավոր աստիճանների ռելիեֆների վրա և Դուրա-Եվրոպոսի գրաֆիտներից մեկի վրա:

Հատկապես Արտաշատի պեղումների շնորհիվ մեզ է պատկերանում քաղաքային կյանքը իր մանրամասներով: Քաղաքները կառուցվում էին նախապես մշակված հատակագծով, ունեին կանոնավոր ցանց, տները բարեկարգ էին, հարմարավետ, գեղեցիկ ձևավորված: Արտադրական և կոմունալ կառույցները տեխնիկապես բավարար հագեցված էին:

Ազգագրական նյութի լուսաբանման մի ուրույն բնագավառ են Աքեմենյան և անտիկ դարաշրջանի դամբարանային կառույցները և այստեղ պահպանված մանրամասների օգնությամբ վերականգնվող թաղման ծեսը, որը թույլ է տալիս պատկերացում կազմել տվյալ ժամանակաշրջանի հայ ժողովրդի ներաշխարհի, տիեզերքի, գեղեցիկի, բարու, չարի, կյանքի հարատևման մասին պատկերացումների վերաբերյալ: Ազգագրական առումով ուշագրավ են այս դարաշրջանի բնակարանային ժողովրդական համալիրները, գլխատները, որոնք ազդեցություն են գործել հատակագծման, կառուցողական ոճի վրա⁹²:

Հնագիտական նյութի մի այլ բնագավառ են փոխադրամիջոցները, որոնց առանձին մնացորդներ հնարավորություն են տալիս հաստատել հետազայում ազգագրական նյութից հայտնի փոխադրամիջոցների վերաբերյալ տվյալների ժառանգականությունը:

⁹¹ Տես **Բ. Առաքելյան**, Հին Արտաշատ, Երևան, 1975, նույնի՝ Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, **Աշխարհբեկ Քալանթար**, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935, **Խ. Սամուելյան**, Հին Հայաստանի կուլտուրան, հ. Բ, Երևան, 1941, **К. Тревер**, Очерки по истории культуры Древней Армении, М.—Л., 1953, **Г. Турциян**, Культура древней Армении (V в. до н.э. — III в. н.э.), Ереван, 1988.

⁹² Տես **Հ. Հակոբյան**, Հին Հայաստանի սյունազարդ դահլիճները և Հողմիկի տաճարական համալիրը, Գևորգ Տիրացյանի հիշատակին, Երևան, 2001, էջ 49-56:

ԹԵՄԱ 2

ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԸ

ՇՈՒՄԵՐԱ-ԱՔՔԱԴԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ

Հայկական լեռնաշխարհի պատմության հնագույն շրջանի մասին ամենավաղ տեղեկությունները հաղորդում են Միջագետքի հաղավաքման շումերները՝ Ք.ա. III հազարամյակի սկզբից մինչև II հազարամյակի սկիզբը, և աքադացիները՝ Ք. ա. XXIV դարից: Սեպագիրը, որ ստեղծել են շումերները, նրանցից անցավ աքադացիներին, որոնք այն հարմարեցրին իրենց սեմական բարբառի առանձնահատկություններին: Աքադական սեպագրությունը Միջագետքում զարգացավ երկու ուղղությամբ. հյուսիսում՝ ասուրական, հարավում՝ բաբելական: Այդ պատճառով էլ աքադական սեպագրությունը հայտնի է նաև «ասուրա-բաբելոնյան» անվամբ: Դառնալով միջազգային հաղորդակցության միջոց՝ ասուրա-բաբելոնյան սեպագրությունը մուտք գործեց հին արևելյան մի շարք երկրներ⁹³: Մեծ ջրհեղեղի մասին գրի առնված հնագույն պատմությունը գալիս է շումերներից: Աստվածաշնչում փրկության վայրը Արարատի լեռներն են (Ծննդոց, Ը, 1-4), մինչդեռ միջագետքյան և նրանից ծագող ավանդություններում Հայաստանն է ներկայացվում որպես փրկիչ տարածք⁹⁴:

Ջրհեղեղի մասին շումերական բնագրում խոսվում է Արատտա երկրի և Ժողովրդի մասին: Ըստ Ա. Մովսիսյանի ուսումնասիրությունների՝ Արատտան Հայկական լեռնաշխարհի մինչ օրս հայտնի առաջին պետությունն է՝ Ք.ա. XXVIII-XXVII դդ., որը թե՛ անվամբ, թե՛ տեղագրորեն և թե՛ ջրհեղեղի հետ կապված ավանդությամբ զուգահեռելի ու նույնական է Աստվածաշնչի Արարատի հետ: Արատտա-Արատը փրկիչ երկիր է ինչպես շումերական, այնպես էլ աստվա-

⁹³ Տե՛ս *Ա. Մովսիսյան*, Նախամաշտոյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003, էջ 62-63:

⁹⁴ Տե՛ս *Ա. Մովսիսյան*, Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2006, էջ 5-6, 39-43, 66-71:

ծաշնչյան աշխարհընկալումներում⁹⁵։ Իրոք, չի բացառվում, որ շումերական աղբյուրներում հիշատակվող Արատտա երկիրը, որ, մի կողմից, կարևոր սակրալ (պաշտամունքային), մյուս կողմից էլ առևտրատնտեսական գոտի էր, առնչվի Հայկական լեռնաշխարհի, հատկապես նրա հարավային շրջանների հետ։

Ջրիեղեղի մասին շումերական բնագրում Արատտա երկրի ժողովրդին տրվում են հետևյալ բնորոշումները.

«Ժողովուրդն Արատտայի՝ գերադասված մյուս ժողովուրդներից, ժողովուրդ, որին Դումուզին⁹⁶ զատեց մյուս ժողովուրդներից, ժողովուրդ, որը կատարում է խոսքը լուսե Ինաննայի (սիրո, գեղեցկության, պտղաբերության և պատերազմի դիցուհին)»։

Արատտայում հարսանեկան մի նկարագրության մեջ ասվում է. հարսը հագնում էր սպիտակ զգեստ, նրա աչքերը ներկում էին ծարիրով⁹⁷։

Շումերա-աքքադական սկզբնաղբյուրներից Ք.ա. XXIII դ. Աքքադի արքա Նարամ-Սուենի թողած արձանագրության մեջ հիշատակվում է Վերին ծովի (Վանա լիճ) շրջանում կազմավորված Սուբարտու անվամբ պետական միավորը, որը հավանաբար համապատասխանում էր Սարգոն Աքքադացու աշխարհագրության մեջ հիշատակված Արմանի երկրին։ Աքքադական պետության արքա Նարամ-Սուենի բնագրերից մի քանիսում վկայվում է այդ արքայի՝ Հայկական լեռնաշխարհի հասնելը և այնտեղ Արմանում երկրին բախվելը։ («Արման(ում)-ը», ըստ երևույթին, Արմենիա երկրանվան մինչ օրս հայտնի ամենավաղ հիշատակությունն է)⁹⁸։

Ուշագրավ է Ք. ա. III-II հազարամյակներում Վանա և Ուրմիա լճերի միջնատարածքի հարավում Արամ երկրի հիշատակությունը⁹⁹։ Մի շարք ուսումնասիրողներ Ք.ա. III հազարամյակի Արամ(ե) երկիրը

⁹⁵ Արատտայի մասին մանրամասն տե՛ս **Ա. Մովսիսյան**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005, էջ 16-30, 56-60։

⁹⁶ Դումուզին համարվել է Հայա-Էնկի՝ շումերական ստորերկրյա ջրերի և իմաստունության գերագույն աստծո որդին, որը հունական աղբյուրներում համապատասխանեցվել է Օրիոնի հետ, իսկ Աստվածաշնչի ոսկեդարյան թարգմանության մեջ նույնացված է Հայկի հետ (տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը / կազմողներ՝ **Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան**), հ. 1, Երևան, 2007, էջ 48-49)։

⁹⁷ Տե՛ս **Ա. Մովսիսյան**, Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Երևան, 1992, էջ 52։

⁹⁸ Տե՛ս **Ա. Մովսիսյան**, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 32-43, 48-55։ Հայ ժողովրդի պատմության Քրիստոմատիա, հ. 1, 50-52, 56-59։

⁹⁹ Արամ անվամբ երկրի մասին համապատասխան հղումներով տե՛ս Ա. Մովսիսյան, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 41-42, 60։

նույնացնում են Արման(ի/ում)-ի հետ: Ըստ երևույթին, Արամ երկրանունը պետք է կապել հայկական ավանդության Հայկի թոռ Արամի հետ, որի անունով էլ, ըստ պատմահայր Խորենացու (զիրք Ա, գլուխ ԺԲ), օտարները կոչեցին մեր երկիրն ու ժողովրդին¹⁰⁰:

ԽԵՔԱԿԱՆ ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայկական լեռնաշխարհի քաղաքական և էթնիկական պատմության մեջ զգալի դեր է խաղացել խեթական սեպագիր արձանագրություններում հիշատակվող Հայասա պետական կազմավորումը: Հայասա երկրի մասին անչափ արժեքավոր տեղեկություններ են պահպանվել խեթական թագավորության արխիվներում, որոնք վերաբերում են Ք. ա. XV-XIII դարերին և որոշ պատկերացում են տալիս Հայասայի ոչ միայն քաղաքական պատմության, այլև հասարակական հարաբերությունների և տնտեսական կյանքի ու մշակույթի մասին:

Կա տեսակետ, ըստ որի հայ ժողովրդի ձևավորման համար որպես հիմք ծառայած հնագույն էթնիկական խումբը եղել է ցեղերի այն քաղաքական միավորումը, որը հայտնի է խեթական արձանագրություններից Հայասա-Ազգի անվանումով: Գր. Ղափանցյանի¹⁰¹ ուսումնասիրության համաձայն՝ այդ երկիրն է տվել հայ ժողովրդին նրա Hay ինքնանվանումը: Հիմնավորված է, որ Hayasa անունը բաղկացած է Haya կամ Hayo հիմքից և sa վերջավորությունից, որը տարածված վերջածանց է Փոքր Ասիայի տեղանուններում: Մեզ հետաքրքրող երկիրը խեթական արձանագրություններում անվանվում է «Հայասա (խայասա) քաղաքի երկիր» կամ «Ազգի քաղաքի երկիր». այստեղից կարելի է եզրակացնել, որ երկիրը կոչվել է իր քաղաքական կենտրոնների անունով¹⁰²: Այս տեսությունը Գր. Ղափանցյանը զարգացրել է իր գրքում: Թիլ-Հայասա (կամ՝ Թիլ-խայասա) քաղաքը տեղադրվում է հավանաբար հին հայկական Թիլ ավանի տեղում: Նախաքրիստոնեական դարաշրջանում այստեղ գտնվում էր

¹⁰⁰ Արամ երկրի մասին համապատասխան հղումները տես՝ *Ա. Մովսիսյան*, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում, էջ 41-42, Հայ ժողովրդի պատմության քրեատոմատիա, հ. 1, էջ 59-60:

¹⁰¹ Տես՝ *Գր. Капанцян*, Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1947.

¹⁰² Հայասայի տեղադրության վերաբերող արտահայտված բոլոր տեսակետների քննությունը տես՝ *Ռ. Դազարյան*, Հայասա. Քաղաքական և մշակութային պատմությունը, Երևան, 2009, էջ 14-34:

Նանե դիցուի ու տաճարը¹⁰³: Այս տեղորոշումը ցույց է տալիս, որ Հայաստան երկրի միջուկը և նրա սկզբնական տարածքը հավանաբար եղել է հին հայկական եկեղյաց գավառը: Թիլ ավանը տեղադրվում է Երիզա (Երզնկա) քաղաքից ոչ հեռու, որի տեղում հավանորեն գտնվելիս է եղել Հայաստան երկրի մյուս կենտրոնը՝ Ազգի քաղաքը: Նախաքրիստոնեական դարաշրջանում այստեղ գտնվում էր նաև Ամահիտ դիցուի ու պաշտամունքի վայրը:

Խեթական արձանագրություններում տեղեկություններ են հաղորդվում նաև ամուսնության ամենահին սովորույթների վերաբերյալ: Ահա դրանցից մեկը արտացոլված է խեթական արքա Սուպպիլուլիումաս Ա-ի (մոտավորապես Ք.ա. 1345-1322 թթ.) արձանագրություններից մեկում, որում խեթական արքան Հայաստաի արքա Խուկկանասին կնության է տալիս իր քրոջը և այդ առթիվ դրվում են մի շարք ուշագրավ պայմաններ.¹⁰⁴ «Իմ այն քույրը, որին ես՝ արևս, տվել եմ քեզ կնության, ունի շատ քույրեր, որոնք նրա հետ մույն տոհմից, մույն սերնդից են, իսկ այժմ նրանք նաև քոնն են, որովհետև դու ստացել ես նրանց քրոջը: Բայց խաթթի երկրում կա մի կարևոր օրենք՝ «եղբայրը իրավունք չունի մերձենալու իր քրոջը, դա մեղք է: Իսկ նա, ով այդպես վարվի՝ կմեռնի: Իսկ ձեր երկիրը բարբարոսական է և ձեզ մոտ սովորություն է, որ եղբայրը մերձենա իր քրոջը և իր զարմուհուն: Բայց խաթթուսասում դա արգելված է... Եվ երբ դու վերադառնաս Հայաստա, ապա հետագայում դու չպետք է մերձենաս քո եղբոր կանանց, քո քույրերին՝ խաթթուսասում դա արգելված է»:

Խեթական արքայի արձանագրությունից երևում է նաև, որ Ազգին կապված էր Հայաստաի հետ փոխադարձ ամուսնություններով: Ըստ որում, ոչ միայն Հայաստան կին էր վերցնում Ազգիից և Ազգին՝ Հայաստաից, այլև նրանց մոտ տիրում էր այն սովորույթը, որ ամուսինը իրավունք էր ստանում քենիների և իր տոհմի հետ ամուսնական կապերով կապված տոհմի մույն սերնդի մյուս կանանց նկատմամբ: Խեթական թագավորը հակառակվում է այս սովորույթին, նա չի ցանկանում, որ իր քրոջը Հայաստաի թագավորին կնության տալով՝ վերջինիս իրավունք տար խեթական թագավորական ընտանիքի և հարեմի մյուս կանանց նկատմամբ: Խեթական արքայադուստրը, այսինքն՝ Հայաստաի թագուհին, պետք է լիներ առաջին կինը:

¹⁰³ Կարևորում ենք Վ. Խաչատրյանի աշխատությունը (տե՛ս **В.Н. Хачатрян**, Восточные провинции Хетской империи, Ереван, 1971).

¹⁰⁴ Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՄՀ ԳԱ հրատ., Զ. 1, Երևան, 1971, էջ 198-199:

Նույն պայմանագրի տեքստից պարզվում է, որ հայասացիները հիմնականում երկրագործ էին, քանի որ նրանց կողմից պայմանները խախտվելու դեպքում խեթական թագավորը սպառնում էր ոչնչացնել ի թիվս այլոց «ծեր տները, ծեր դաշտերը, ծեր խաղողի այգիները, ծեր մարգագետինները, ծեր եղջերավոր անասունները, ծեր ոչխարները...»: Մի այլ տեքստից երևում է, որ Ազգիի զինվորները հետագայում ծառայել են խեթական բանակում որպես մարտակառք վարողներ, հետևաբար նրանց ծանոթ են եղել նաև ծին և մարտակառքը:

Հայասա երկիրը՝ տեղադրվել է Մեծ Հայք նահանգի, Փոքր Հայքի, հնարավոր է նաև հարակից այլ տարածքում: Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների շարքում Հայասան իր ուրույն տեղն ուներ՝ առաջին հերթին հիմքում կրելով «հայ» էթնոնիմը: Ոչ պակաս կարևոր էր Հայասայի կազմում Բարձր Հայքի տարածքի ընդգրկումը, որը հայոց նախաքրիստոնեական դիցարանի աստվածությունների պաշտամունքի գլխավոր և նախնական կենտրոններից էր: Այս մասին ուշագրավ ուսումնասիրություն ունի Ա. Վ. Քոսյանը¹⁰⁵:

Խեթական սեպագիր աղբյուրների տեղեկությունները թույլ են տալիս եզրակացնելու, որ Անի-Կամախը առնվազն Ք.ա. II հազարամյակի կեսերից եղել է Հայկական լեռնաշխարհի արևմտյան հատվածի կարևոր քաղաքական և պաշտամունքային կենտրոններից մեկը, որն իր նշանակությունը պահպանել է նաև հետագա ժամանակներում:

Ուշագրավ է, որ խեթական արձանագրություններում Ալսե, Ալ-ծիյա անվամբ է հիշատակվում հայկական Աղձնիքը, որտեղ վերջին «յա»-ն խեթերենի պատկանելությունն ցույց տվող ածանցներից է¹⁰⁶: Բացի այդ, խեթական հիերոգլիֆ արձանագրությունները հայագիտության համար ունեն եռակի կարևորություն: Նախ՝ լինելով հայերին ազգակից լեզվի հուշարձաններ՝ կարևոր սկզբնաղբյուրներ են վաղնջահայերենի ուսումնասիրության համար, ապա արժեքավոր վկայագրեր են Հայաստանի (հատկապես արևմտյան շրջանների) Ք.ա. II-I հազարամյակների պատմության վերականգնման տեսանկյունից, և ի վերջո՝ կիրառվելով նաև Հայկական լեռնաշխարհում՝ նպաստել են նախամաշտոցյան Հայաստանում գրային մտածողության զարգացմանը¹⁰⁷:

¹⁰⁵ Տե՛ս Ա. Վ. Քոսյան, Հայասայի աստվածները, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIV, Երևան, 2005, էջեր 444-457, *նույնի*՝ Անի-Կամախը խեթական դարաշրջանում, - ՊԲՀ, 2002, 3 (161), էջ 225-241:

¹⁰⁶ Տե՛ս Ռ. Նահապետյան, Աղձնիքը սեպագիր շրջանում, - ԼՂԳ, 1984, թիվ 1, էջ 55-61:

¹⁰⁷ Տե՛ս Ա. Մովսիսյան, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 61:

Ք.ա. XIX-XVIII դարերում Առաջավոր Ասիայի հյուսիսով՝ Աշուրից մինչև Քանեշ (Փոքր Ասիա) ձգվում էր մետաղի առևտրի գլխավոր մայրուղին: Աշուրից և Քանեշից գտնված բազմահազար բնագրերը վկայում են, որ նշված առևտրական մայրուղու հետ կապ են ունեցել Չայկական լեռնաշխարհի մետաղի արդյունահանման ու առևտրի համար բազմաթիվ իշխանություններ ու բնակավայրեր: Հին ասսուրերեն լեզվով սեպագիր գրված հազարավոր կավե սալիկները վկայում են Փոքր Ասիայի, Չայկական լեռնաշխարհի և Միջագետքի միջև Ք.ա. XIX-XVIII դդ. գոյություն ունեցած առևտրական հարաբերությունների մասին:

Չայկական լեռնաշխարհի հնագույն բնակչության, այստեղ ծնունդ առած վաղ պետական կազմավորումների և հինարևելյան խոշոր քաղաքակրթությունների հետ վերջիններիս փոխհարաբերությունների մասին, շնորհիվ ասորեստանյան սեպագիր արձանագրությունների, մեզ են հասել բացառիկ արժեքավոր և մեծածավալ տեղեկություններ: Դրանք վերաբերում են լեռնաշխարհի քաղաքական պատմությանը, հոգևոր և նյութական մշակույթին, սոցիալ-տնտեսական և հասարակական հարաբերություններին՝ սկսած Ք.ա. XIV դ. վերջերից ընդհուպ մինչև VII դ. երկրորդ կեսը: Դրանցում առավել հետաքրքրական է Ուրարտուի՝ Ք.ա. IX դ. պատմությունը: Ուրարտուն Ուրուատրի ձևով հիշատակված է Սալմանասար I արքայի գահակալության շրջանում (Ք.ա. 1263-1234), իսկ Թուկուլտի-Նինուրտա I արքայի գահակալության շրջանում (Ք.ա. 1233-1197) առաջին անգամ հիշատակվում է Նաիրի երկրի մասին: Այստեղ առաջին անգամ է գործածվում Նաիրի տերմինը՝ որպես Չայկական լեռնաշխարհի մի մասի ընդհանուր անվանումը ասուրական տեքստերում: Ասորեստանյան այդ շրջանի տեքստերում բազմիցս հիշատակված է Չայկական լեռնաշխարհի տարբեր անվանումներով երկրների մասին, ինչպես, օրինակ՝ *Կումմե* երկիրը Չայկական լեռնաշխարհի հարավում, ամպրոպի աստծո (Իշկուր-Թեշուր (Թեշեբա-Ադադ) պաշտամունքի հնագույն կենտրոններից մեկը, Ալզի-Ալշե-Ալզի(նի) անվանումներով երկիրը, որը նույնանում է պատմական Չայաստանի Աղծնիք նահանգի հետ, Նաիրի երկրները և բազմաթիվ այլ տեղանուններ: Կրճատումներով ներկայացնենք Թիզլաթպալասար (Թուկուլթի-ապալ-էշարրա) I արքայի (Ք.ա. 1114-1076) արձանագրությունը.

«...գերեցի նրա կանանց [Կադմուխի երկրի արքայի], նրա հարազատ որդիներին, նրա տոհմը, 180 պղնձե անոթ, 5 բրոնզե տաշտ, իրենց աստվածների, ոսկու և արծաթի, իրենց ունեցվածքի հետ (ես տա-րա)»: Այնուհետև նշում է, որ նույն Կադմուխի երկրում Ուրրատինաշ քաղաքի արքայից պատանդ է վերցրել նրա որդիներին, ընտանիքը և որպես հարկ ստացել է 60 պղնձե կաթսա, բրոնզե չաներ և բրոնզե մեծ տաշտեր, 120 մարդու, խոշոր և մանր եղջերավոր անասունների հետ միասին, 120 մարտականք՝ լծկան ձիերի հետ միասին: ...Ձիերի երամակները, ջորիներն ու ավանակները կենդանի ապրանքը նրանց արոտավայրերի, ես ետ բերեցի անհաշիվ քանակությամբ: ... 1200 ձի և 2.000 (խոշոր եղջերավոր) անասուն նրա վրա հարկ հաստատե-ցի...»¹⁰⁸:

Ք.ա. XI դարի արձանագրություններում վերստին հանդիպում ենք Ուրարտուի ցեղային միության հիշատակմանը: Ադադ-ներարի Բ-ի (Ք.ա. 911-890 թթ.) ժամանակներից սկսվում և Աշուրնասիրապալ Բ-ի (Ք.ա. 883-859 թթ.) օրոք սովորական է դառնում արդեն Ուրար-տու տերմինի հիշատակությունը, հաճախ Նաիրիի հետ միասին:

Սալմանասար III-ի (858-824) տարեգրության մեջ բազմաթիվ հիշատակություններ կան հայկական մի շարք տեղավայրերի վերա-բերյալ. «...ես տարա (իմ) մարտականքներն (ու) զորքերը այդ արա-հետներով (և) ցած իջա Իշուա (խեթական աղբյուրներում՝ Իսուվա, ուրարտականում՝ Օուփանի, անտիկ աղբյուրներում՝ Սոփենե, հայ-կական աղբյուրներում՝ Օոփք) երկրի Էնգիտե (Անձիտ գավառը) եր-կիրը: ...Շարժվելով Էնգիտե երկրից ես անցա Արծանիա (Եփրատի վտակ Արածանին) գետը (և) մոտեցա Սուխմե (որոշ հետազոտողներ այստեղից են բխեցնում վրացիների կողմից հայ ժողովրդին տրված «սոմեխի»¹⁰⁹ անվանումը) երկրին: ...ես մոտեցա Արծաշքուին (մաս-նագիտական գրականության մեջ նույնացվել է Արճեշի հետ) և Արա-մու ուրարտացու արքայական քաղաքին»¹¹⁰:

Սալմանասար III արքան տարեգրության մեջ հիշատակում է Ու-րարտու երկրանվան և նրա արքա Սարդուրի Ա-ի նկատմամբ տա-րած հաղթանակի մասին: Ասորեստանյան աղբյուրներում ուշագրավ

¹⁰⁸ «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, էջ 101-108:

¹⁰⁹ Տե՛ս **Գ.Բ. Ջահուկյան**, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակա-շրջան, Երևան, 1987, էջ 288:

¹¹⁰ Տե՛ս **Դ. Կարապոյան**, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նա-հանգներում), Երևան, 1998, էջ 21-24:

հաղորդումներ կան Ուրարտուում ջրանցքաշինության, երկրագործության, անասնապահության մասին: Այս առթիվ Սարգոն Բ արքան թողել է հայտնի վավերագիր՝ «Լուվրի աղյուսակը»: Նա նաև հաղորդում է ուրարտական քաղաքների հզոր պաշտպանական ամրությունների մասին՝ գրելով, թե ինքը տեսել է հզոր ու գեղեցիկ բերդեր՝ 120 շերտ աղյուս ունեցող պատերի բարձրությամբ (կազմում է շուրջ 18 մետր): Բերդերն ունեին 2–3 շարք պարիսպներ՝ իրենց աշտարակներով ու պատվարներով¹¹¹:

Ք.ա. XII-XI և VIII դարերի ասորեստանյան սեպագիր արձանագրությունները հաստատում են նաև նահապետական ընտանեկան մեծ համայնքներով կենցաղավարելու մասին: Արձանագրությունները վկայում են, որ Ասորեստանի թագավորները հպատակ երկրներում գերեվարում էին ամբողջ ընտանիքներ՝ տղամարդկանցով, կանանցով, երեխաներով ու արյունակից հարազատներով: Հյուսիսային Միջագետքում, Վանա և Կապուտան լճերի շրջակայքում բնակվող խուրի-ուրարտական ցեղային առաջնորդների և «թագավորական տների» (ընտանիքների) անդամների թիվը հասնում էր 120-260-ի: Հասկանալի է, որ աղբյուրները ներկայացնում են մեզ նահապետական ընտանեկան մեծ համայնքի քանակական կազմը, որի մեջ մտնում են մեկ հորից սերող մերձավոր բարեկամների երեքից-չորս սերունդ՝ իրենց կանանցով, երեխաներով, երբեմն նույնիսկ օտարամուտ մարդկանցով¹¹²:

ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի տարբերություն Հայկական լեռնաշխարհի մասին այլ գրավոր աղբյուրների՝ ուրարտական արձանագրությունների թիվը հասնում է մոտ ութ հարյուրի, որոնք կարևոր աղբյուր են Ուրարտուի պատմության ու մշակույթի վերականգնման համար: Դրանց մեծ մասը գրված է քարի վրա: Հանդիպում են նաև գրություններ մետաղյա և ոսկրե իրերի վրա, կավե սալիկների տեսքով (ռազմական հանդերձանքի մասեր, մետաղյա ամաններ, կնիքներ ու կնքադրոշմներ, խեցեղեն, կահույքի մասեր, պերճանքի առարկաներ և այլ իրեր): Չմայած արձանագրությունների մեծ քանակին՝ դրանցում փաստական նյութը շատ քիչ ու միօրինակ է:

¹¹¹ Տե՛ս *К.К. Кафадарян*, Заметки по урартской фортификации, «ՊԲՀ», 1972, թիվ 2, էջ 151–162:

¹¹² Տե՛ս *Հ.Ա. Մարտիրոսյան*, Հայաստանը զարգացած կամ ուշ բրոնզի ժամանակաշրջանում, ԶԺՊ, հ. 1, էջ 227: Նաև՝ *И.М. Дьяконов*, Ассирио-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, № 2-4:

Արձանագրությունների սկզբնամասերը, սովորաբար, նվիրվում են Խալդի գերագույն աստծուն, որի հետ են այս կամ այն կերպ կապվում ներկայացվելիք իրադարձությունները: Միջնամասում նկարագրվում է իրադարձությունների ընթացքը՝ հիմնադրում, կառուցում, նվիրաբերում, զոհաբերություններ, զորահավաք, արշավանք, հաղթանակներ, ավարառություն, հարկահավաքում և այլն: Արձանագրություններն ավարտվում են հաղթող արքայի հզորությունը ներկայացնող տիտղոսաշարով, կառուցող արքայի փառաբանմամբ կամ օրհնությամբ, կոթողը փչացնողին ուղղված անեծքով¹¹³:

Ուրարտական արձանագրությունները ունեն տնտեսական, շինարարական, ռազմական և ծիսապաշտամունքային բովանդակություն: Ինչքան էլ այդ տեքստերը իրար կրկնեն, անհնար էր այդուհանդերձ առանց այդ արձանագրությունների, միայն հնագիտական նյութերով վերականգնել Ուրարտուի պատմությունն ու լուսաբանել մշակույթային խնդիրները: Այդ արձանագրությունները թույլ են տալիս ասել, որ ուրարտացիների հիմնական զբաղմունքը արտաքին երկրագործությունն էր, որ նրանք ծանոթ էին ցանովի հիմնական մշակույթներին՝ ունեին երկրագործական ոռոգելի հզոր համակարգ:

Մենուայի ջրանցքի մասին պատմող բազմաթիվ արձանագրություններից մեկը, որ փորագրված է Ժայռին, վերաբերում է 72 կմ երկարությամբ և մինչև այժմ էլ գործող ջրանցքին: Այն անցկացվել է լեռների լանջերով, և տեղ-տեղ հունն ամրացվել է քարե պատնեշներով, ինչպես նաև ձորերի վրա կառուցված հատուկ կամուրջներով: Ջրանցքը խմելու և ոռոգման ջուր է մատակարարել Ուրարտուի մայրաքաղաք Տուշպա-Վանին: Հազարամյակների ընթացքում ժամանակ առ ժամանակ այն վերանորոգվել է և ոչ միայն մինչև օրս պահպանել է իր գոյությունը, այլև, Վանից բացի, իր ճանապարհին շարունակում է ապահովել 25 գյուղերի ցանքադաշտերի, պտղատու և խաղողի այգիների ոռոգումը հիմնավորջ Յայոց ձոր գավառում, նաև սպասարկում է 40 ջրաղացներ: Իր վիթխարիությամբ ու ջրառատությամբ Մենուայի ջրանցքը յուրահատուկ տեղ է գրավում ոչ միայն Ուրարտուի, այլև Հին Արևելքի ոռոգման համակարգում: Մովսես Խորենացին այն պարզապես «գետ» է անվանում, ճիշտ այնպես, ինչպես Ուրմիա լճից հյուսիս անցկացված Ուլխուի ուրարտական ջրանցքը Ասորեստանի թագավոր Սարգոն Բ-ն ուղղակի համեմատում է Եփրատի հետ:

¹¹³ Տե՛ս *Ա. Մովսիսյան*, Նախամշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 77-78:

Բերենք «Մինուայի ջրանցքի» անցկացման մասին պատմող արձանագրություններից մեկը. «Խալդյան զորությամբ Մինուա Իշպուլին-որդին այս ջրանցքը անցկացրեց: «Մինուայի ջրանցք» (է) անունը: Խալդյան մեծությամբ Մինուան արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի: Մինուան ասում է.- Ով այս արձանագրությունը ոչնչացնի, ով ջարդի, ով որևէ մեկին ստիպի դրանք անել, ով ասի՝ «Ես եմ այս ջրանցքն անցկացրել», թող Խալդին, Թեյշեբան, Շիվինին (բոլոր) աստվածները ոչնչացնեն նրան արևի տակ...»¹¹⁴: Արձանագրություններից տեղեկանում ենք, որ ուրարտական արքաները մեծ ուշադրություն են դարձրել ոռոգման համակարգերի անցկացմանը երկրի գրեթե ողջ տարածքում, այդ թվում՝ Վանա լճի հյուսիսային ափերին, Մանազկերտի շրջանում, Արարատյան բերրի դաշտավայրում: Արգիշտի Ա-ի արձանագրությունները պատմում են Արաքսի ձախ ափին՝ Արգիշտիխնիլի շրջակայքում, ծավալված ջրանցքաշինության մասին: Այստեղ ջրանցքների թիվը հասել է հինգի, որոնք բոլորն էլ սնվել են Արաքսի ջրերից:

Բերենք մի օրինակ-վկայագիր Արգիշտիխնիլի ամրոցի կառուցման մասին. «Խալդյան մեծությամբ Արգիշթի Մինուայորդին ասում է.- Հոյակապ ամրոց կառուցեցի, հաստատեցի Արգիշտիխնիլի անունը: Հողը չոր (°) էր, ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր): Գետից չորս ջրանցք անց կացրի, խաղողուտ (և) անտառ հիմնեցի, կատարեցի մեծագործություններ այնտեղ: Արգիշթի Մինուայորդին արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիայնիլի երկրի, տերը Տուշպա քաղաքի»¹¹⁵:

Արարատյան դաշտում աչքի է ընկնում նաև Ռուսա Բ-ի կառուցած Ումեշինի ջրանցքը, որը սկիզբ է առնում Իլդարունիա (այժմ՝ Հրազդան) գետի՝ Կարմիր բլրին հանդիպակաց ափից, կտրում ժայռափոր թունելը և այնուհետև ընթանում Երևան-Էջմիածին խճուղուն զուգընթաց¹¹⁶:

Երկրորդ տեղը տնտեսության մեջ գրավում էր անասնապահությունը: Ըստ Բ. Պիտրոպսկու՝ ուրարտացիները բուծել են բոլոր այն կենդանիները, որոնք Հայաստանում հայտնի են նաև այսօր: Կարևոր

¹¹⁴ **Н. В. Арутюнян**, Корпус урартских клинообразных надписей, Ер., 2001, с. 90-96. Ի դեպ, Ն. Հարությունյանի այս գիրքը ուրարտական սեպագիր աղբյուրների վերաբերյալ վերջին և ամենահամապարփակն է:

¹¹⁵ Նույն տեղում, էջ 207:

¹¹⁶ Տե՛ս **Г. А. Меликишвили**, Урартские клинообразные надписи. М., 1960, էջ 58, 127, 136-137, **Н. В. Арутюнян**, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, էջ 31-36, **Б. Б. Пиотровский**, Ванское царство (Урарту), էջ 135:

են ուրարտական ամրոցների, քաղաքների, պաշտամունքային վայրերի հիմնադրման վերաբերյալ արձանագրությունների տեղեկությունները: Դրանց շնորհիվ վերականգնված է ուրարտական քաղաքների հիմնման ճիշտ ժամանակաշրջանը: Թեև պաշտամունքին վերաբերող հարցերը սուղ են, այդ արձանագրություններում, սակայն դրանցում առանձնանում է ուրարտական խալդի աստծո պաշտամունքը: Ուրարտական արձանագրությունների մի մեծ խումբ գտնվել է Վասպուրականում: Ուրարտուում և ընդհանրապես Հայաստանում գտնված տարբեր լեզուներով արձանագրությունների նոր մեկնաբանություն է Հովհաննես Կարազյոզյանի հրատարակած «Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում» մատենաշարի առաջին գիրքը¹¹⁷:

Սարգուրի I-ի (Ք.ա. 840-825) արձանագրությունից պարզվում է, որ Տուշպա մայրաքաղաքը կառուցվել է Ք.ա. 840 թ., Վանա լճի արևելյան ափին¹¹⁸, որը հին աշխարհի մշակութային կարևոր կենտրոններից մեկն էր: Ուրարտական քաղաքներից առնվազն 30-ը ունեն իրենց հիմնադրման մասին պատմող արձանագրություններ¹¹⁹:

Իշպուհինի արքան (Ք.ա. 825–810 թթ.) թշնամական Ասորեստանի արքադական սեպագրի փոխարեն երկրում ճանաչեց Հայկական լեռնաշխարհի ամենահռչակավոր պաշտամունքային կենտրոններից մեկի՝ «Թեյշեբա աստծո քաղաքի» Կումենուի իշխանության սեպածն գիրը և լեզուն, որն այժմ հայտնի է ուրարտերեն անվամբ: Եվ հենց այս արքայի արձանագրություններից էլ գիտենք պետության իսկական անունը՝ Բիայնիլի, որից և ծագում է Վան քաղաքի անունը: Ուրարտուն երկրին տրված ասորեստանյան անվանումն է, Հին Կտակարանի Արարատյան թագավորությունը: Իսկ Տուշպա անունից են գալիս Վանա լճի անվան հայկական Տոսպ տարբերակը և Վան քաղաքի շրջակայքն ընդգրկող Տոսպ (Վան-Տոսպ) գավառակի անունը¹²⁰:

Իշպուհինի և իր որդու՝ Մինուայի (Ք.ա. 811–786 թթ.) համատեղ գահակալության տարիներին է, որ ընդունվեցին նոր օրենքներ, որոնք երկրին տվեցին նոր կրոն, ծիսակարգ, չափ ու կշռի ստան-

¹¹⁷ Տե՛ս **Դ. Կարազյոզյան**, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Երևան, 1998:

¹¹⁸ Հայտնի է, որ Ասորեստանի տիրակալ Սալմանասար III-ը որպես Ուրարտուի հիմնադիր Արամի արքայանիստ հիշատակում է Արծաշբու քաղաք-ամրոցը:

¹¹⁹ Տե՛ս **С.Г. Амаякян**, Ванское царство (Урарту), в кн.: У подножия Арарата, с. 30.

¹²⁰ Տե՛ս **Ա.Դ. Մորդուման**, Հայ բնեռածն արձանագրութիւնք, Կոստանդնուպոլիս, 1872, էջ 10:

դարտներ, օրացույց, կարգավորեցին պետական ու վարչական կառույցները, սեփականության հետ առնչվող հարցերը, հասարակությունը կազմող տարբեր խավերի իրավունքներն ու պարտականությունները¹²¹:

Ուրարտական առաջին սեպագրերից էր Միերի դռան արձանագրությունը, ուր ամբողջությամբ ու խստիվ կարգավորված-վերարտադրված էր ուրարտական դիցարանը: Միերի դուռը ընդհուպ մինչև XX դարը հայերի համար եղավ պաշտամունքի առարկա:

Ազգագրական առումով ուշագրավ է Վանից հարավ-արևելք, Կոտոր գետի ակունքների մոտ, ժայռի մեջ պատրաստված որմնախորշի վերին մասում փորագրված արձանագրությունը, ուր ասված է. «Խալդի տիրոջն իր Իշպուլինի Սարդուրորդին և Մինուա Իշպուլինորդին Խալդյան տաճարը կառուցեցին: Խալդյան զորությամբ Իշպուլինի Սարդուրորդին, (որ) արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիաինիլի [Վանի թագավորության անվանումը] (երկրի), իշխանը Տուշպա քաղաքի, հաստատեց կարգ.- Յուրաքանչյուր (°) ամսում (°) (մեկ) ուլ Խալդիին թող ողջակիզեն, (մեկ) եզ Խալդիին թող զոհաբերեն, (մեկ) կով՝ Արուբանիին [Ուրարտական դիցարանի գերագույն աստվածուհին, Խալդի աստծու կինը], (մեկ) ոչխար՝ Խալդյան դարպասներին, (մեկ) ոչխար՝ Խալդյան զենքերին»: Նշենք, որ պաշտամունքի գլխավոր կենտրոնն էր Արդինի (Մուծածիր) քաղաքը:

Ուրարտական արձանագրությունների ուսումնասիրությունից պարզորոշ երևում է, որ ուրարտական գլխավոր աստվածը Խալդին էր, որը բացարձակորեն գերիշխող դիրք ուներ մնացած բոլոր աստվածների նկատմամբ: Բազմաթիվ արձանագրություններում Խալդիի անվան կողքին հիշատակվում են Թեյշեբա և Շիվինի աստվածների անունները: Նրանք միասին կազմում են գերագույն աստվածների առաջին եռյակը:

Ուրարտական դիցարանի աստվածներին մատուցվող զոհաբերության վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկատվական բնույթի արձանագրություն է հայտնաբերվել Վանի հարավ-արևմտյան կողմում՝ ժայռի արհեստական որմնախորշում (Միերի դուռ), որտեղ հանգամանորեն նշված են ուրարտական դիցարանի աստվածները և նրանց զոհաբերվող կենդանիների տեսակն ու քանակը: Արձա-

¹²¹ Տե՛ս **С.Г. Амаякян**, Ванское царство (Урарту), в кн.: “У подножия Арарата”, էջ 29–32:

նագրություններում Ուրարտուի բոլոր աստվածություններին ամենամյա (Շիվինի աստծո ամսին) զոհերի մատուցման կարգն է սահմանված: Այստեղ կարգադրվում է զոհեր մատուցել նաև տարբեր «սրբությունների»՝ սրբատեղիների, ոգիների և կամ արդեն հիշատակված աստվածությունների պատվին՝ նրանց տալով այլ անուններ: Ներկայացնենք այն որոշ կրճատումներով. «Իշպուինին սահմանեց. — Արևի ամսին (ըստ երևույթին համապատասխանում է հետագայում հայկական Արեգ ամսվանը) տոնախմբություն կատարել Խալդիին, Թեյշեբային, Շիվինին և աստվածներին բոլոր. վեց ուլ Խալդիին թող ողջակիզեն: Տասնյոթ եզ և երեսունչորս ոչխար Խալդիին թող զոհաբերվի, Թեյշեբային՝ վեց եզ և տասներկու ոչխար, Շիվինին՝ չորս եզ և ութ ոչխար...», և այդպես թվարկվում են մի քանի տասնյակ աստվածներ ու աստվածություններ՝ զոհաբերվող և ողջակիզվող կենդանիների քանակով¹²²: Ուրարտական դիցարանը Զ.ա. IX դարի վերջին քառորդին կազմված է եղել 70 աստվածություններից՝ 35 աստվածների և 35 դիցուհիների զույգ խմբեից: Ուրարտական դիցարանի առաջին իզական եռյակին՝ գերագույն աստվածուհի Արուբանին՝ Խալդի աստծո կնոջը, Բաբային՝ Թեյշեբա աստծո կնոջը, և Տուշպուեային՝ Շիվինի աստծո կնոջը, հաջորդում են ևս քսանմեկ սրբություններ:

Մեերի դռան արձանագրության մեջ հիշատակված աստվածությունները, ըստ իրենց պատվին զոհաբերվող կենդանիների քանակի և գրաված տեղի, Գ. Ա. Ղափանցյանը բաժանել է վեց խմբի, որոնցից երեքը արական են, երեքը՝ իգական¹²³: Առաջին խմբի աստվածներն են Խալդին, Թեյշեբան և Շիվինին: Երկրորդ խմբի աստվածները, որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված է երկու ցուլ և չորս խոյ, վեցն են՝ Խուտուինի, Տուրանի, Ուա, Նալաինի, Շեբիթու, Արսիմելա: Երրորդ խումբը կազմված է 26 աստվածներից, որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված է մեկ ցուլ և երկու խոյ: Այդ աստվածություններն են՝ Ուանապշա, Դիդուաինի, Շիլարդի, Մելարդի, Աթինի, Կուեռա, Էլիպուրի, Թարաինի, Ադարութա, Իրմուշինի, Ալաիթուշինի, Էրինա, Շինիրի, Ունինա, Աիրաինի, Ջուզումարու, Խարա, Արածա, Զիուկունի, Ուրա, Արծիբիդինի, Առնի, Շուբա, Էլիաուա, Թալապուրա, Կիլիբանի:

¹²² Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, էջ 154-157:

¹²³ Տե՛ս Գ. Ա. Ղափանցյան, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940, էջ 46:

Աստվածուհիների առաջին խումբը կազմված է Արուբաինի, Խուբա, Տուշպեա դիցուհիներից, որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված է մեկ կով և մեկ ոչխար: Երկրորդ խմբում վեց աստվածուհիներ են՝ Աուի, Աիա, Սարդի, Ծինուհարդի, Իպխարի, Արդի, որոնցից յուրաքանչյուրին զոհաբերված է մեկ կով կամ երկու ոչխար: Աստվածուհիների երրորդ խումբը ներառում էր 26 դիցուհի, որքան նաև երրորդ խմբի աստվածներն էին: Այդ խմբի դիցուհիներին պետք է որ զոհաբերեին մեկական ոչխար, և, իսկապես, Բարծիա, Սիլիա, Արուա, Ադիա, Ուիա աստվածուհիներին զոհաբերված է մեկական ոչխար¹²⁴:

Երեբունի բերդաքաղաքի հիմնադրման վերաբերյալ Արգիշտի I-ի արձանագրությունը սեպվել է շինարարական քարի վրա, ուրարտական ամրոցի գլխավոր մուտքի մոտ: Այն համարվում է ներկայիս երևանի «ծննդյան վկայականը»՝ տրված Ք.ա. 782 թ.: Այնտեղ ասվում է. «Խալդյան մեծությամբ Արգիշտի Մինուա արքայի որդին այս ամրոցը հոյակապ կառուցեց: Հաստատեցի Երեբունի անունը՝ Բիաինիլի (երկրի) զորությունը լուլուական (բարբարոսական, թշնամական) ցեղերի մեջ ամրապնդելու (համար)»:

«Հողը ամայի էր, ոչինչ չկար կառուցած այնտեղ. հզոր ձեռնարկումներ կատարեցի այնտեղ. 6600 մարտիկների բնակեցրի այնտեղ՝ Խաթեից, Ծուպայից»¹²⁵:

Արժեքավոր է նաև Վանի ժայռի մեջ փորված Միեթի դռան խորշում տեղադրված Խոռխոռյան տարեգրությունը, որը ուրարտական ամենամեծ արձանագրությունն է: Այնտեղ հիշատակված են բազմաթիվ երկրանուններ (Ք.ա. 782-773 թթ. Արգիշտիի կողմից նվաճված երկրների), որոնց մի մասը գիտնականները ստուգաբանել են և տեղորոշել: Տեղեկություններ են տրվում բնակչության գերեվարությունների ու նոր վայրերում բնակեցումների, կենդանիների և ունեցվածքի ավարառության վերաբերյալ, ինչը նաև վկայում է այս երկրի անասնապահության զարգացածության մասին. «Տասնինը հազար երկու հարյուր հիսունհինգ պատանի (քջեցի), տասը հազար հարյուր քառասուն զինվոր երիտասարդ, քսաներեք հազար երկու հարյուր ութսուն ստրկուհի, ընդամենը հինգ բյուր երկու հազար վեց հարյուր յոթանասունհինգ մարդ (մեկ) տարում: Հազար հարյուր չորս ձի քջեցի,

¹²⁴ Տե՛ս *Ս. Գ. Չմայակյան*, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990, էջ 24-25:

¹²⁵ Տե՛ս *Դ. Իսրայելյան*, Երեբունի բերդ քաղաքի պատմություն, Երևան, 1971, էջ 156-157:

երեսունհինգ հազար տասնվեց անասուն, տասը բյուր հազար ութ հարյուր քսանհինը ոչխար: ...Սույն մեծագործությունները մեկ տարում կատարեցի»: Այա թվարկում է գրաված բազմաթիվ երկրների անուններ, որոնք գտնվում էին Սևանա լճին հարակից վայրերում և Ուրմիա լճի հարավարևելյան կողմերում և մինչև Եփրատ գետն ընկած տարածքներում, նաև դրա շրջակայքում: Այս արձանագրության մեջ կարևոր է նաև Արգիշտի I-ի կողմից «Ազայան» երկրում (հավանաբար Արարատյան դաշտում) Արգիշտիխիսիլի քաղաքի հիմնադրման և ջրանցքի կառուցման մասին հիշատակությունը:

Ք.ա. 776 թ. համարվում է Արմավիրի «ծննդյան» տարեթիվը, քանզի Արգիշտի I-ի հիմնադրած Արգիշտիխիսիլի քաղաքը տեղադրվում է Արարատյան դաշտի հարավարևելյան մասում, որտեղ Արգիշտիխիսիլի տեղում հետագայում բարձրացավ Մեծ Հայքի հնագույն մայրաքաղաքներից մեկը՝ Արմավիրը: Արձանագրության մեջ բառացի ասվում է. «Խալդյան մեծությամբ Արգիշտի Մինուա արքայի որդին ասում է.- Ամրոց հոյակապ կառուցեցի, հաստատեցի Արգիշտիխիսիլի անունը: Հողը չոր (°) էր, ոչ (մի) բան այնտեղ կառուցված (չէր): Գետից չորս ջրանցք անցկացրի, խաղողուտ (և) անտառ հիմնեցի, կատարեցի մեծագործություններ այնտեղ»: Այստեղ հիշատակված ջրանցքների հետքերը երևան եկան Արմավիրում կատարված պեղումների ժամանակ:

Ներկայացնում ենք Արգիշտի արքայի ևս երկու արձանագրություն՝ Գառնի և Դարանի բնակավայրերի վերաբերյալ.

«Խալդ աստծու մեծությամբ Արգիշտին ասում է. Նվաճեցի (ես) Գիարնիանի երկիրը – (կառավարչի) երկիրը: Սիլունի թշնամաց լեռներից երբ ես վերադարձա, տղամարդկանց (և) կանանց (ես) տարա»¹²⁶:

«Խալդի (աստվածն) արշավեց, իր զենքին հպատակեցրեց Էթիունի երկիրը: Խալդին ուժեղ է, Խալդիի զենքը ուժեղ է: Խալդյան զորությամբ արշավեց Արգիշտին, Մենուայի որդին, նվաճեց Ուլուանիի երկիրը՝ Դարանի քաղաքի երկիրը: Խալդյան մեծությամբ Արգիշտին, Մենուայի որդին, թագավոր (է) հզոր, թագավոր՝ մեծ, թագավոր՝ Բիայնիլիի, տերը՝ Տուշպա քաղաքի»¹²⁷:

Վանից արևելք արհեստական լճի կառուցման մասին Ռուսա I-ի սեպագիր արձանագրությունը ևս վկայում է այստեղ երկրագործու-

¹²⁶ Տե՛ս *Է.Ձ. Խանգաղյան*, Գառնի, Երևան, 1969, էջ 136–137:

¹²⁷ Տե՛ս *Է.Ձ. Խանգաղյան*, Էլառ-Դարանի, Երևան, 1979, էջ 9:

յան, մասնավորապես այգեգործության զարգացածության մասին. «Հողաշերտը կիտեցի լեռան ստորոտում, դաշտը հեղեղեցի, ուղղեցի ջրերը այնտեղ՝ առուների ու առվակների, դրեցի անունը Ռուսայի ծով: Անցկացրի ջրանցք այնտեղից դեպի Ռուսախիմիլի (քաղաքը)...»: Արձանագրության մեջ հիշատակված Ռուսայի ծովը արհեստական մեծ ջրամբար էր Վանից արևելք, որը գոյություն ունի մինչև այսօր:

Ռուսախիմիլի ջրանցքը, որի ընդհանուր երկարությունը շուրջ 25 կմ էր, հնարավորություն է ընձեռել այստեղ հիմնելու ցանքադաշտեր, խաղողի այգիներ և արհեստական անտառներ, որոնք գտնվել են Տուշպա-Ռուսախիմիլի ճանապարհին:

Ուրարտական արձանագրությունում հանդիպող ծեսերի մասին տեղեկությունները կարելի է դասակարգել մի քանի խմբի՝ 1. *թագադրության*, 2. *արշավանքների հետ կապված*, 3. *երկրագործաեղանակային*, 4. *թաղման*:

Թագադրության ծես

Ուրարտացիների պատկերացմամբ իշխանությունն աստվածային ծագում ունի և տրված է խալդի աստծո կողմից: Ուրարտուի արքաները հաճախ են նշում, որ խալդին է իրենց արքայություն տվել [տե՛ս օրինակ՝ «խալդի աստծո մեծությամբ տիրական, Արգիշտի Ռուսայորդին, ծառան խալդի աստծո ասում է. – խալդի աստծո զորությամբ տիրական..., որն ինձ հանձնեց (°) կարգադրությունները (օրենքները), որը ինձ տվեց թագավորություն հզոր, բազմեցի ես արքայական գահին... (խալդին) հաստատեց ինձ (համար) ծառ արքայական...»], և ուստի նրանք թագադրվում էին խալդիի պաշտամունքային կենտրոնում՝ Մուծածիր քաղաքում¹²⁸:

Գալով Մուծածիր՝ գահաժառանգը կառուցում է նոր տաճարներ և նվերներ մատուցում դրանց: Այնուհետև տաճարում կատարվում էր թագադրությունը. նրա գլխին էին դնում թագը և տալիս էին ուրարտական թագավորի գայիսոնը: Արարողությանը մասնակցում էր ժողովուրդը: Խալդիի տաճարի քուրմը նրա առջև (որպես աստծո) և աստվածների առջև զոհեր էր մատուցում: Տաճարում դրվում էր նրա արձանը: Նորածյալ արքան հիմնադրում է նոր տաճար, այնտեղ մատուցում զոհեր ու (որպես արքա) կատարում իր անդրանիկ արշավանքը:

¹²⁸ Տե՛ս **Ս. Գ. Դմայակյան**, Վանի թագավորության պետական կրոնը, էջ 75:

Արշավանքի հետ կապված ծեսեր

Յուրաքանչյուր արշավանք սկսվում էր արարողությամբ, որի ժամանակ արքան աղոթքով դիմում էր Խալդիին, Թեյշեբային, Շիվինին և մյուս աստվածություններին՝ բարձրաձայն հայտարարելով արշավանքի ուղղությունը և նպատակը, խնդրելով նրանից հովանավորություն՝ գործն իր նպատակին հասցնելու համար։ Այնուհետև հնչում էր ռազմակոչը՝ «Խալդին գորեղ է, Խալդի աստծո զենքը գորեղ է», և բանակը շարժվում էր առաջ։ զորքի առջևից տանում էին դրոշ, որը ներկայացնում էր Խալդիին։ Արշավանքի ավարտից հետո հաղթանակած բանակը վերադառնում էր Տուշպա։ Արքան Խալդի աստծո տաճարում բարձրաձայն զեկուցում էր արշավանքի արդյունքների մասին և հաղթանակը ձոնում Խալդիին։ Արքայի խոսքը արձանագրվում էր քարի վրա։ Այնուհետև տոն էր հայտարարվում¹²⁹, որի ծախսերը հոգում էր արքան՝ դա դիտելով որպես զոհաբերություն Խալդի աստծուն։

Երկրագործական-եղանակային ծեսեր

Այս ծեսերի կարգի ու անցկացման ժամանակի մասին տվյալներ կան Սիերի դռան արձանագրություններում։ Այստեղ հիշատակված են տարվա ընթացքում կատարվելիք երեք տոնակատարություններ՝ կապված այգեգործական աշխատանքների համապատասխան փուլերի հետ։ Առաջին տոնը կարգադրվում էր անցկացնել խաղողուտի էտունից հետո։ Խաղողի որթի էտունը Հայաստանում սկսվում էր մարտ ամսի վերջին տասնօրյակին և ավարտվում ապրիլի առաջին կեսին։ Այս ժամանակ Հայաստանում նշվում էր Բարեկենդանի տոնը (տոնվում էր մարտ ամսին, տևում էր 1-2 շաբաթ)՝ կապված նոր տարվա զալստյան հետ։ Բարեկենդանի ժամանակ կատարվում էին ծեսեր՝ ձոնված արևի կենարար ջերմությունը բորբոքելուն։

Մարտ ամիսը ձոնված էր արևին և կոչվում էր Արեգ։ Ամանորի տոնը հին Հայաստանում տոնվել է Արեգ (մարտ) ամսին, զարմանալին օրահավասարին¹³⁰։ Հավանաբար այդպես է եղել նաև Ուրարտուում, և տարվա առաջին տոնը, որ կատարվել է «Շիվինիի ամսին», նշանավորել է նոր տնտեսական տարվա սկիզբը ու ազդարար-

¹²⁹ Տե՛ս **Ս. Գ. Հմայակյան**, Վանի թագավորության պետական կրոնը, էջ 24-25։

¹³⁰ Տե՛ս **Ղևոնդ Ալիշան**, Հին հավատք կամ հեթանոսական կրոնը հայոց, Վենետիկ, 1895, էջ 139։ **Ա. Ա. Օդաբաշյան**, Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, - ՀԱԲ, թիվ 9, Երևան, 1978, էջ 9, 24-26, 48-49։

րել բնության զարթոնքը: Միերի դռան արձանագրությունում հիշատակված հաջորդ տոնը համապատասխանել է խաղողի այգու մշակման երկրորդ փուլի՝ խաղողուտի խչմարման աշխատանքի կատարման հետ: Խաղողուտը Հայաստանում խչմարվում էր մայիսին. հետևաբար, պետք է կարծել, որ ուրարտական այս տոնը ևս կատարվել է մայիսին: Հայաստանում մայիս ամսին էր տեղի ունենում Համբարձման տոնը, որը, չնայած իր քրիստոնեական բնույթին, ուներ շատ ավելի հին արմատներ. այն ջրի ու ծաղկի տոն է եղել և հետաքրքիր է, որ Վանա լճի շրջակայքում առնչվել է Միերի դռան պաշտամունքի հետ: Մ. Աբեդյանը նշում է, որ այդ օրը (Քրիստոսի համբարձման տոնին) սովորաբար գուշակություններ էին անում: Հավատում էին, որ գիշերվա ընթացքում ջրերը մեկ ռոպե դադար են առնում, լռում են: Ընդհակառակը, երկինքն ու երկիրը, լեռները, ծառերն ու ծաղիկները շարժվում են, ողջունում են իրար ու համբուրվում: Բոլոր բույսերն ու անշունչ առարկաները լեզու են առնում, սկսում են իրար հետ խոսել: Ջրերն այդ գիշեր՝ կեսգիշերին մոտ, ունեն ամենաբուժիչ ազդեցությունը: Եթե այդ ժամանակ հոսող ջրերը մեկ վայրկյան կանգ առնեն, ոսկի կդառնան: Կեսգիշերին տան ամենաավագը վերցնում էր ցորենով կամ գարիով լի մի անոթ, գնում գետափ, ապա հացահատիկը գետն էր թափում՝ ասելով. «Քեզի կուտամ ցորեն, գարի, դու ինձի տուր բարի»: Այդ հրաշալի պահին Միերի դուռը բացվում էր, կարելի էր ներս գնալ, տեսնել Միերին ու նրա նժույգը, աստղագարդ երկնքի անիվն ու բախտի անիվը, ձեռք բերել երջանկություն և հարստություն¹³¹:

Միերի դռան արձանագրությունում հիշատակված երրորդ տոնն առնչվել է խաղողի հասունացմանն ու բերքահավաքին: Խաղողի բերքը Հայաստանում հասնում և հավաքվում էր օգոստոս ամսից սկսած: Բերքահավաքի ու տնտեսական տարվա ավարտը նշող հին հայկական տոնը կատարվում էր Նավասարդ (օգոստոս-սեպտեմբեր) ամսին: Այս տոնի արարողություններից մեկն էր խաղողօրհները. ծես, որը կատարվում էր Աստվածածնի տոնին (օգոստոսին), և միայն այս օրվանից սկսած էր թույլատրվում վաճառել կամ օգտագործել խաղողի բերքը:

Բացի Միերի դռան արձանագրությունից, այլ սեպագրերում ևս կան վկայություններ երկրագործական-եղանակային տոների մասին. «Մինուլան ասում է. — երբ խաղողուտը (խաղողի բերքը) հասնի,

¹³¹ Տե՛ս Մ. Աբեդյան, Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. է, Երևան, 1975, էջ 54-58:

ցուլ և երեք խոյ թող զոհաբերվի խալդի աստծուն և արարողություններ թող կատարվեն ինչպես խալդի աստծու դարպասների, այնպես էլ կոթողի առջև. երբ խաղողը հավաքվի, տոն թող կազմակերպվի խալդի աստծու դարպասների մոտ, տոն՝ Ուարուբաինի դիցուհուն, տոն՝ խալդի աստծուն, կոթողի առջև»¹³²:

Թաղման ծես

Ուրարտական թաղման ծեսի մասին գրավոր աղբյուրներում որևէ տվյալ չկա: Պետք է ենթադրել, որ թաղման ծեսը համապատասխանել է մահվան մասին ուրարտացիների ունեցած պատկերացումներին: Ուրարտացու պատկերացմամբ մարդու մահվանից հետո նրա հոգին շարունակում է ապրել՝ տեղափոխվելով այս աշխարհից մյուսը: Այդ մասին է վկայում «Յոգիներ տեղափոխող աստծու» գոյությունը Ուրարտուում:

Ուրարտուում օրենքի ուժ ունեցող ժայռափոր դամբարաններում մահացածին թաղելու սովորույթը: Ժայռափոր տաքեր սրահներում դրվել են արքաների ու ազնվականների աճյունները, իրենց հագուստով, զենքով, զարդերով ու կատարված զոհաբերություններով:

Ուրարտուում եղել են նաև այլ ծեսեր, որոնց մասին տվյալները ավելի սակավ են կամ բոլորովին բացակայում են. հայտնի է միայն որ զոհաբերություններ են կատարվել քաղաքների, տաճարների, տների ու այլ շինությունների հիմնադրման ժամանակ ու կառուցումն ավարտելուց հետո¹³³: Բ. Բ. Պիոտրովսկին, քննելով ուրարտական կնիքների պատկերագրությունը, ուշադրություն է դարձրել կենաց ծառի պաշտամունքին առնչվող արարողությունները պատկերող փորագրություններին. հետաքրքիր է, որ այդ արարողություններին մասնակցել է նաև արքան՝ առյուծի ուղեկցությամբ. վերջինս, ինչպես ենթադրվում է, պահվել է ուրարտական տաճարներում որպես սուրբ կենդանի¹³⁴:

Յին աշխարհում ծիսական արարողությունները հաճախ ուղեկցվում էին մրցությամբ (մարզական խաղերով). այդպես էր և՛ Յալաստանում, և՛ Խեթական թագավորությունում, ուր «մրցություններով» էին ուղեկցվում գրեթե բոլոր տոները, հեթիթները մրցում էին վազքում, հեծելավազքում, ըմբշամարտում և այլն: Ամենայն հավա-

¹³² Տե՛ս **Ս. Գ. Ղմայակյան**, Վանի թագավորության պետական կրոնը, էջ 78:

¹³³ Տե՛ս նույն տեղում, էջ 82:

¹³⁴ **Б. Б. Пиотровский**, Ванское царство, էջ 229:

նականությամբ, Ուրարտուում ևս նման տոնակատարություններն ուղեկցվում էին մարզական խաղերով, որոնց մասնակցում էր նաև արքան. այս մասին է վկայում Մենուա արքայի՝ իր Արծիբինի ծիսուն հեծած քսաներկու կանգուն ցատկելու մասին արձանագրությունը (1 կանգունը մոտ 52 սմ է, այսինքն՝ նժույզը ցատկել է մոտ 11 մ 39 սմ): Ուշագրավ է նաև այն, որ ծիու անունը Արծիբինի է, որն, ըստ երևույթին, կապ ունի ներկայիս «արծիվ» բառի հետ: Արգիշտի II-ը (713-685)՝ Ռուսա I-ի որդին, նետը արձակել է «ինը հարյուր հիսուն կանգուն» հեռավորության վրա, այսինքն՝ մոտ 492 մ: Ս. Հմայակյանի կարծիքով այս արձանագրությունները արված են մրցություններում արքաների տարած հաղթանակների կապակցությամբ¹³⁵:

Վանի թագավորության պետական կրոնը ներառում էր ուրարտական պետության կազմում ընդգրկված տարբեր ցեղերի ու ժողովուրդների կարևորագույն աստվածությունների պաշտամունքը, որը միաժամանակ Հայկական լեռնաշխարհի բնակչության համախմբմանը նպաստող հանգամանքներից մեկն էր: Այդ կրոնի ինացությունը կարող է օժանդակել ինչպես ուրարտական, այնպես էլ Հայկական լեռնաշխարհում նրան նախորդած ու հաջորդած ժամանակաշրջանների մշակույթի ուսումնասիրությանը, ուրարտական պետության կազմում ընդգրկված տարբեր ժողովուրդների էթնիկական պատկանելության որոշմանը, հայ ժողովրդի կազմավորման ընթացքի և ավարտի հետ կապված որոշ հարցերի լուսաբանմանը և այլն:

ԲԵՅԻՍԹՈՒՆՅԱՆ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Հին պարսկերեն հիշատակարանները մեզ են հասել Աքեմենյան դինաստիայի թագավորների սեպագիր արձանագրություններով, որոնք ներառում են Ք.ա. 521-330 թվականները: Պարսկաստանի հին մայրաքաղաքներում՝ Պերսեպոլիսում, Սուզայում (Շոշ), Էկբատանում եղած արձանագրություններից բացի, արձանագրություններ կան նաև այլ վայրերում, ժայռերի վրա, ինչպես Բեհիսթունյանը՝ Էկբատանի (Համադան) մոտ, որը մեծագույնն է:

Բեհիսթունյան արձանագրությունը (բիսթունյան, բիստունյան) հայ ժողովրդի հնագույն պատմության կարևորագույն սկզբնաղբյուրներից մեկն է: Արձանագրությունը թողել է Պարսից Դարեհ I Վշտաս-

¹³⁵ Տե՛ս Ս. Գ. Հմայակյան, Վանի թագավորության պետական կրոնը, էջ 83:

այան թագավորը (Ք.ա. 522-486)՝ իր իշխանության հենց սկզբին և փորագրված է Բեհիստուն բարձրադիր ժայռի վրա՝ ներկայիս Քերմանշահ քաղաքից ոչ հեռու: Հին պարսկական սեպագիր արձանագրություններից կարևորագույնն է: Գրված է երեք լեզուներով՝ հին պարսկերեն, էլամերեն և աքքադերեն: Արձանագրությունը բաղկացած է հսկայական 9 սյունից, որոնցից 5-ը գրված է հին պարսկերենով (76 պարագրաֆ, 414 տող), երեքը՝ էլամերեն և մեկը՝ բաբելերեն:

Բեհիստունյան արձանագրության՝ արմեններին վերաբերող մասը (վեց պարագրաֆ) հայերեն թարգմանել է Կ. Բասմաջյանը¹³⁶, որը և ամբողջությամբ մեջբերված է Հ. Մանանդյանի «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության» Ա հատորում: Նկատի ունենալով նշված արձանագրության մյուս հատվածների կարևորությունն ու դրանց հայերեն թարգմանության բացակայությունը՝ Գ. Նալբանդյանը¹³⁷ այն թարգմանեց ամբողջությամբ: Այդ տեքստերում կան որոշ տարբերություններ, հակասություններ: Հայաստանի նկատմամբ Դարեհ I-ի կիրառած քաղաքականության հետևանքով ծագեցին 5 ապստամբություններ: Արձանագրության բաբելական (աքքադական) բնագրում, ի տարբերություն հին պարսկական բնագրի՝ «Արմինա»-ի, հանդիպում է Ուրաշտու, այսինքն՝ Ուրարտու ձևը, էլամական բնագրում՝ Հարմինույա: Պարսկերեն տեքստում արմեններն ու նրանց երկիրը Արմինիա կամ Հայաստան ձևով հիշատակվում է պարագրաֆ 26-30-ում¹³⁸:

Ձարմանալին այն էր, որ Ուրարտուն կործանվել էր և դուրս եկել պատմության թատերաբեմից, մինչդեռ տեքստում օգտագործվում է այդ անվանումը: Ուշագրավ են արձանագրություններում հանդիպող մի քանի տեղանուններ, մասնավորապես այն 5 վայրերի, որտեղ տեղի են ունեցել ճակատամարտերը: Սակայն այդ տեղանունների վայրերը առայսօր բացահայտված չեն: Ըստ արձանագրության՝ մի մասը բուն Հայաստանում էր, մյուսը՝ սահմանների մոտ, մինչդեռ այդ տեղանունների բացահայտումը հնարավոր կդարձներ ճշգրտելու Հայաստանի ընդգրկած տարածքը, նրա սահմանները: Չափազանց կարևոր են արձանագրություններում եղած հարկերի, տուրքերի տեսակները, որոնք Հայաստանը պարտավոր էր վճարել Պարսկաստա-

¹³⁶ Տե՛ս Կ. Բասմաջյան, Դարեհի արշավանքն ի Հայս, Բանասեր, հ. Ա, Պարիս, 1899, էջ 6-45: Տե՛ս նաև Գ. Халатяни, Очерк истории Армении, М., 1910, էջ 85-88:

¹³⁷ Դարեհ Վշտասպի Բիսթունյան արձանագրությունը, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Ս. Նալբանդյանի, Երևան, 1964:

¹³⁸ Տե՛ս նույն տեղում, էջ 14-15:

նին: Այլ աղբյուրների հետ համեմատած, մասնավորապես հունահռոմեական պատմիչների տվյալներով, հնարավոր է դառնում ճշտել ոչ միայն հարկահանության եղանակները, այլ նաև տեսակները: Հայաստանը Պարսկաստանին հարկ էր վճարում ձիու քուռակներով, որոնք զոհաբերվում էին Սիիր աստծո տոնակատարություններին:

Այս արձանագրության վկայություններից երևում է, որ արմենները եղել են ռազմիկ ժողովուրդ, ձգտել են ազատ ու անկախ լինել և, օգտվելով բարեհաջող հանգամանքներից, պարբերաբար ապստամբել և աշխատել են թոթափել օտար տիրապետության լուծը: Արմենների խիզախության և ռազմունակության մի պարզ վկայություն է այն, որ նրանց ապստամբությունը Դարեհ 1-ինի զորավարները կարողացել են ճնշել միայն հինգ ճակատամարտերից հետո միայն, որոնք տեղի են ունեցել Ք. ա. 521-520 թթ.: Բերենք արձանագրությունից մի հատված:

«Դարեհ թագավորն ասում է. – Սրանք են այն երկրները, որ իմ հպատակները եղան, Ահուրամազդայի (իրանական դիցարանի գերագույն աստվածը) շնորհիվ ես նրանց թագավորն եմ. Փարս (Պարսկաստան), Խուզիան (Էլամ), Բաբելոն, Ասուրեստան, Արաբիա, Մուդրայ (Եգիպտոս), Սպարդա (Լիդիա), Իոնիա (Հին Հունաստանի փոքրասիական շրջանները), Մեդիա, Արմինա (Հայաստան), Կապադովկիա, Պարթևստան, Ջրանկա (Դրանգիանա), Հարուիվա (Արիեա), Խորեզմ, Բակտրիա, Սողդ, Գանդիարա, Սագաստան (Սկյութիա)... բոլորը միասին 23 երկիր»:

Պարագրաֆ 26-ում ասվում է. «Դարեհ թագավորն ասում է. – Դադարշիշ անունով հայ (արմինացի) իմ ծառայողին ես ուղարկեցի Արմինա: ... Արմինայի մեջ Ջուզա (բնակավայր Աղձնիք կամ Կորճայք նահանգներում) անունով մի ավան կա, ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: ... Թուրավահարա ամսի 8-ին էր (521 թ. Ք.ա., ապրիլի 19-ին), երբ այսպես ճակատամարտը տեղի ունեցավ»: Պարագրաֆ 27-ում ասվում է, թե 2-րդ ճակատամարտը տեղի ունեցավ Տիգրա անունով մի բերդում (բերդ Աղձնիքում)...: Բեհիսթունի արձանագրության մեջ առանձին կարևորություն ունեն աշխարհագրական վայրերի հիշատակումները: Գիտնականները նշում են, որ այդ հինգ ճակատամարտերի վայրերը՝ Ջուզա, Տիգրա, Ուլիյամա, Իզալա և Աուտիյարա, գտնվել են պատմական Հայաստանի Աղձնիք և Կորճայք նահանգներում և հարևան շրջաններում¹³⁹:

¹³⁹ Տե՛ս 7. *Մանանդյան*, Զննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 53:

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏԵՎՈՂ ՕՏԱՐԱԼԵԶՈՒ ԱՐԶԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ
(Ք.Ա. IV – Ք.Յ. III դդ.)

Ք.ա. IV - Ք.հ. III դդ. Հայաստանի մասին ուշագրավ վկայություններ են հաղորդում օտարալեզու արձանագրությունները: Թեև դրանք շատ չեն, բայց արժեքավոր են: Առաջօր գտնվել են շուրջ 10 արամեատառ սահմանաքարեր, 8 լատինական և 16 հունական արձանագրություններ: Դրանք, որպես կանոն, այդ ժամանակաշրջանի խոշոր կառույցների, քաղաքների ու բերդերի ընդարձակման, պաշտամունքի, տնտեսական զբաղմունքների, գանձվող հարկերի մասին են: Առանց այդ տեղեկությունների անհնար է հստակ պատկերացում կազմել հելլենական դարաշրջանի Հայաստանի քաղաքների, դրանց հասարակական կազմի, քաղաքների հիմնադրման, այստեղ ծավալվող առևտրի և փոխանակության, քաղաքներում ինքնավարության մարմինների գոյության մասին: Արձանագրությունների մի խմբում չափազանց կարևոր վկայություններ են պահպանվել Արմավիրի՝ հելլենական դարաշրջանի նշանավոր կենտրոնի մասին: Հայտնաբերվելով տարբեր ժամանակներում՝ դրանք ուսումնասիրվել են, գիտական շրջանառության մեջ դրվել, օգտագործվել այդ դարաշրջանին վերաբերող ամենատարբեր խնդիրների բացահայտման նպատակով: Մեր պատկերացումները հելլենական դարաշրջանի քաղաքների հիմնադրման ու վերաբնակեցման մասին թերի կլինեին առանց սինոյկիսմոսի (համաբնակեցում) խնդրի լուսաբանման: Սինոյկիսմոսը, որպես քաղաքականություն, կիրառվում էր անտիկ դարաշրջանում, երբ քաղաքներ հիմնելիս՝ թագավորները մտահոգված էին դրանք անհրաժեշտ թվով բնակչությամբ ապահովելու հարցով, ուստի և այդ դարաշրջանին բնորոշ էր սինոյկիսմոսը, երբ արշավանքների ժամանակ գրավված քաղաքներից կամ այլ բնակավայրերից նոր հիմնված քաղաքներ էին տեղափոխվում և տեղավորվում հազարավոր մարդիկ՝ բնակեցնելով քաղաքների թաղամասերը: Նրանց տրվում էին լայն իրավունքներ՝ արհեստագործության այս կամ այն ճյուղը զարգացնելու նպատակով: Հայտնի է, որ այս ճանապարհով է բնակեցվել Տիգրանակերտը, Արտաշատը:

Պահպանվել է հավանաբար Ք.ա. VIII դարի վերջին գրված արամեերեն արձանագրության մի հատված, որը բացառապես առնչվում է կենցաղին: Դա անեծքների մի յուրօրինակ բանաձև է: «1. Թող յոթ կին մեկ օջախ ունենա հաց թխելու համար, – այսինքն՝ երկրում այնքան քիչ հաց լինի (սով լինի), – որ յոթ ընտանիքին մեկ

օջախը շատ լինի: 2. Թող օջախի ծուխը մարի, – այդպիսի անեծք ունեցել են հին հայերը: 3. Թող երկանքը չշրխկա նրա երկրում, – այսինքն՝ աղալու ցորեն չլինի, – Թող յոթ կով կերակրեն մեկ հորթի, և այն թող չկշտանա»¹⁴⁰: Արամեերեն այս արձանագրությունը հիշատակում է նաև Խալդի աստծո անունը: Ըստ այդմ՝ կարծիք կա, որ Խալդի աստծո պաշտամունքը պարտադրվում էր ոչ միայն նվաճված, այլև դաշնակից երկրներին:

Սովսես Խորենացին հիշատակում է, որ նախքան հայ գրերի գյուտը, կային պարսից և հունաց գրերը, «որոնցով գրված՝ այժմ գտնվում են մեզ մոտ անթիվ քանակությամբ գրություններ, գյուղերի ու գավառների, յուրաքանչյուր տների սեփականության, ընդհանուր վեճերի ու դաշինքների, մանավանդ սեպուհական ազնվականության ծագման վերաբերյալ»¹⁴¹: Արամեերեն լեզուն Աքեմենյան կայսրությունում միջազգային լեզվի դեր էր խաղում: Արամեերենն, ինչպես տեսանք, օգտագործվել է Հայկական լեռնաշխարհում դեռևս ուրարտական ժամանակաշրջանում: Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները նպաստավոր պայմաններ ստեղծեցին Արևելքում հունարենի տարածման համար: Հավանաբար Ք.ա. III դարի սկզբից, Հայաստանում արամեերենին զուգահեռ՝ հունարենը դարձավ պաշտոնական գրասենյակային լեզու: Համենայն դեպս, Արմավիրի արձանագրությունները վկայում են, որ Ք.ա. III դարի վերջերին երվանդունիների պետական գրասենյակային լեզուներից մեկը հունարենն էր: Սևանա լճի շրջակայքում, ինչպես նաև Զանգեզուրում, Սպիտակի մոտ և Թեղուտից հայտնաբերված Արտաշես Ա-ի (Ք.ա. 189-160)՝ սահմանաքարերի վրա փորագրված արամեական արձանագրությունները վկայում են, որ արամեերենը տակավին պահպանում էր իր կենսունակությունը որպես պետական-վարչական լեզու¹⁴²: Հայաստանից գտնված արամեատառ արձանագրությունների մեջ մեծ թիվ են կազմում վերը հիշատակված սահմանաքարեր համարվածները (10 նմուշ), որոնք ընդունված տեսակետի համաձայն վերաբերում են Արտաշես 1-ինի ժամանակաշրջանին:

¹⁴⁰ Տես **Ն. Տիրացյան**, Խալդի աստծո հիշատակությամբ արամեերեն մի արձանագրության շուրջ. Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր (Գևորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ), Երևան, 2001, էջ 5-12:

¹⁴¹ **Սովսես Խորենացի**, Պատմություն Հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանցի, գիրք Ա, գլուխ Գ, Երևան, 1940, 1968, էջ 83:

¹⁴² Տես **Գ. Տիրացյան**, Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, «Տեղեկագիր ՀԳԱՀ», 1957, թիվ 10, էջ 108:

Հայտնի է, որ Արտաշեսը Սևանի ափին գտնված արամեերեն արձանագրություններում իրեն անվանում է «Արտաշես արքա, Ջարեհի որդի Երվանդական», իսկ Սիսիանի արձանագրության մեջ նաև՝ «Քարի»,¹⁴³ որով իրեն համարում է իր իսկ տապալած Երվանդ Վերջին թագավորի դինաստիայի շառավիղ: 1977 թ. Սպիտակի մերձակայքից գտնված մի նոր սահմանաքար-կոթողի վրա գրված է. «Արտաշես արքա, Երվանդունի վեհը, որդի Ջարեհի, բաժանող հողը, այստեղ (այսինչ) գյուղի մեջ...»¹⁴⁴: Առ այսօր հայտնաբերվել է հողաբաժան 16 սահմանաքար, որոնց մի մասի վրա չի պահպանված արձանագրություն: Այս առնչությամբ Խորենացու Պատմության Բ գրքի ծգ գլխում կարդում ենք. [Արտաշեսը] «հրամայում է որոշել գյուղերի և ագարակների սահմանները, որովհետև բազմամարդացրել էր Հայոց աշխարհը՝ բազմաթիվ ազգեր ներմուծելով և բնակեցնելով լեռներում, հովիտներում և դաշտերում: Եվ հաստատեց սահմանների այսպիսի նշաններ. հրաման տվեց կոփել քառակուսի քարեր և վրաները պնակած փոսեր անելով, տնկել հողի մեջ, իսկ դրանց վրա կանգնեցնել երկրի մակերևույթից փոքր բարձրություն ունեցող քառակուսի աշտարակներ.... Եվ ասում են, – եզրափակում է հեղինակը, – որ Արտաշեսի օրոք Հայոց աշխարհում անմշակ հող չկար՝ ոչ լեռնային, ոչ էլ դաշտային, այնքան շեն էր երկիրը»:

Գ. Խ. Սարգսյանի կարծիքով, Խորենացին, բացի բուն սահմանաքարերից, օգտվել է նաև նրանց մասին Օղյունյա քրմի «Մեհենական պատմությունում» եղած տվյալներից, որտեղից էլ առել է նրանց մեկնաբանությունը: Սրանով, հասկանալի է, վերջինիս արժեքը կրկնապատկվում է¹⁴⁵:

Հին Հայաստանի մշակույթի ուսումնասիրության առումով արժեքավոր է 1945 թ. Գառնիում հայտնաբերված հունարեն արձանագրությունը: Ըստ դրա՝ Մեծ Հայքի Տրդատ Ա (66-88) թագավորը իր գահակալության 11-րդ տարում (77 թ.) կառուցում է (իմա՝ վերակառուցում է) ամրոցը¹⁴⁶: Առանձնակի ուշադրության են արժանի 1953 թ. հայտնաբերված Գառնիի բաղնիքի հանդերձարանի առասպելա-

¹⁴³ Տե՛ս Գ. Տիրացյան, նշվ. աշխ., էջ 108:

¹⁴⁴ Տե՛ս Գ. Տիրացյան, Արտաշես 1-ինի և մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, ՊԲՀ, 1977, թիվ 4, էջ 254-259:

¹⁴⁵ Տե՛ս Գ. Խ. Սարգսյան, Յելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 186:

¹⁴⁶ Տե՛ս Դ. Մանանդյան, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 19-20:

դիցաբանական բովանդակությամբ խճանկարի հունարեն գրությունները: Խճանկարում պատկերված են ծովային աստվածություններ, ջրահարսեր, տղամարդու տեսքով, ձիու իրանով և ձկան վերջավորությամբ առասպելական էակ, ձկնորս, ձկներ և այլն: Խճանկարի կենտրոնում եղջյուրավոր տղամարդու և կնոջ տեսքով պատկերված են Օվկիանոսը (ըստ հոմերոսյան շրջանի պատկերացումների՝ բոլոր աստվածների նախահայրը՝ Օվկիանոսը, համարվել է նաև երկիրը շրջապատող գետ, որից սկիզբ էին առնում բոլոր ջրերը) և Ծովը (որից ծնվել է սիրո դիցուհի Ափրոդիտեն): Կենտրոնական մասում՝ Օվկիանոսի և Ծովի վերևում արձանագրված է. «Աշխատեցինք՝ չստանալով ոչինչ»: Խճանկարի վերին եզրաշերտում կան հետևյալ գրությունները. «Ծովի խորք», «Ծովի անդորր», Գլավկոս (ձկնորսներին և ծովագնացներին հովանավորող աստվածություն), Պելևս և Թետիս (Ափլլեսի հայրն ու մայրը), «Ծովի ափ»: Աջ եզրագծի սկզբին նակագրված է՝ «գեղեցկություն», ստորին եզրաշերտում՝ «ցանկություն» բառերը: Արձանագրության և խճանկարի ուսումնասիրողների կարծիքով արևմտյան պատի երկայնքով ձգվող եզրաշերտում պահպանված գրության ու պատկերների բեկորների վերլուծությունից հնարավոր է վերականգնել, սիրո աստված Էրոսի, սիրո և պերճախոսության աստվածուհի Պիթոյի և ցանկության աստված Պոթոսի, նաև Ափրոդիտեի և ամուսնության աստված Հիմենայոսի պատկերներն ու անունները: Փաստորեն «Գառնիի խճանկարը ներկայացնում է մի կենսահաստատ տեսարան, որը խորհրդանշում է կյանքի սկզբնավորում՝ ըստ հին հունական պատկերացումների՝ օվկիանոսից ու ծովից, և նրա հարատևությունը սիրո և ամուսնության միջոցով»¹⁴⁷:

Ուշագրավ է նաև Ապարանի հունարեն արձանագրությունը, որում ասվում է, որ Տրդատ արքան, Գնթունիների նախարարական տոհմին, տիտղոսներով հանդերձ, ժառայության դիմաց շնորհում է Նիգ քաղաքը¹⁴⁸:

Արմավիրի արձանագրությունները վաղագույն վկայություններ են Արմավիրում արևի պաշտամունքի մասին: Արմավիրում գտնված հունարեն յոթ արձանագրություններից մեկը բարոյախրատական բո-

¹⁴⁷ Տե՛ս **Բ.Ն. Առաքելյան**, Ակներկներ հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, գլուխ VII և գումավոր նկարներ XXIII – XXVIII: **Ա. Մովսիսյան**, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 139-142:

¹⁴⁸ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, էջ 462-463:

վանդակություն ունի, ուր «դատապարտվում է ժառանգական գույքի անարդար բաժանումը և խրատում է մոտիկ ազգականներին՝ ապրել խաղաղ ու համերաշխ և աջակցել ու օգնել միմյանց»¹⁴⁹:

Արձանագրություններից մեկի վրա կարդում ենք մակեդոնական օրացույցի 13 ամիսների անունները:

1898-1899 թթ. Արևմտյան Հայաստանում Վանք գյուղի (Մալաթիա) հին ամրոցի մերձակա ժայռի հունարեն 10-տողանոց բանաստեղծական չափով գրված տապանագրում ասվում է.

1. Այստեղ հանգչում է տիրուհի Աթենաիսը, որի հետ ես ժամանակին
2. փոխադարձ ձգտմամբ ամուսնացա:
3. Նրան, ով անցնելով՝ կնիվիրի [նրան] վարդ կամ այլ
4. ծաղիկ, թող բարեհաճ լինեն բոլոր երկնաբնականները:
5. Եթե որևէ մեկը գա՝ վատը խորհելով,
6. նրան թող պատժեն բոլոր ստորերկրյա աստվածները:
7. Սա գրեց Դեյմարիտը՝ [որդին] նույնանուն հոր,
8. որի համար նա իր կարճ կյանքում եղել է սիրելի կին
9. Հայրը նրա նույնանուն էր իմ հորը,
10. Մայրը նրա՝ Անտոնինան, դուստրն էր Լուկիոսի¹⁵⁰:

Ինչպես նկատելի է, այս արձանագրությունը ոչ միայն կարևոր գրական հուշարձան է, այլ նաև պատմական ուշագրավ սկզբնաղբյուր II դարի հայ ազնվականության՝ սիրո հիման վրա ստեղծված ընտանիքի վերաբերյալ:

Այսպիսով, չնայած սահմանափակ տեղեկատվությանը, տվյալ ժամանակաշրջանի ամենատարբեր կենցաղամշակութային խնդիրների բացահայտման համար կարևոր սկզբնաղբյուր են օտարալեզու արձանագրությունները: Դրանք վավերագրերի արժեք ունեն, քանի որ ժամանակակից են արտացոլված իրադարձություններին: Ա. Մովսիսյանը դրանք դասակարգել է ըստ բովանդակության հետևյալ խմբերի՝ 1. արքայական արձանագրություններ՝ նվիրված աստվածների պաշտամունքին, 2. թագավորական նախնիներին ձոնված արձանագրություններ, 3. թագավորական իշխանության և

¹⁴⁹ Տե՛ս **Հ. Մանանդյան**, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Եր., 1946 (հայերն և ռուսերեն):

¹⁵⁰ Տե՛ս **К. В. Тревер**, Очерки по истории культуры древней Армении (II в. до н.э. – IV в. н.э.), М. – Л., 1953, с. 245-250.

արքայի անձի աստվածացմանը վերաբերող արձանագրություններ, 4. արքայական արձանագրություններ քաղաքների, սրբավայրերի և այլ շինությունների հիմնադրման մասին, 5. նոր օրենքներ ու կարգեր սահմանող արձանագրություններ, 6. արքայական նվիրատվական արձանագրություններ, 7. հոգևոր-պաշտամունքային բնույթի բնագրեր, 8. ժամանակագրական-օրացուցային արձանագրություններ, 9. ընծայագրեր, 10. բարոյախրատական բովանդակությամբ չափածո ստեղծագործության հատվածներ, 11. տապանագրեր և այլն¹⁵¹։

ՎԻՍՎԱԼՆ ԱՅԼ ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վիմական բնագրերը տասնյակ հազարներով սփռված են Հայկական լեռնաշխարհի բազմաթիվ վայրերում կառուցված տաճարների, ամրոց- դղյակների, կամուրջների, խաչքարերի, տապանաքարերի և հասարակական շենքերի վրա։ Դրանք հնագույն ժողովուրդների պատմության փաստագրերը կամ վավերագրերն են, քանզի արտացոլում են հասարակական կյանքի ամենատարբեր ոլորտները։ Ամենավաղնջական վիմագիր տեքստերը կարելի է համարել Ք.ա. VII -ից I հազարամյակների ժայռապատկերները, որոնք իրավամբ համարվում են «քարե հանրագիտարաններ»։

Վիմական արձանագրությունները հայ իրականության մեջ հանդիպում են V դարից սկսած և, ուսումնասիրողների կարծիքով, բաժանվում են 3 խմբի՝ 1) V-VII դդ. 2) IX-XI դդ. 3) XI-XIV դդ.։ Թեև 1-ին խմբի արձանագրությունները շատ ու բազմաբնույթ չեն և հիմնականում ունեն նվիրատվական ու շինարարական բովանդակություն, սակայն Հայաստանին վերաբերող այլ աղբյուրների վկայությունների հետ միասին չափազանց կարևոր են այդ ժամանակահատվածի ընդհանուր բնութագիրը հստակեցնելու համար։ IX-XI դարերում վիմական արձանագրությունները զգալիորեն ավելանում են։ Առաջօր վերծանվել ու հրատարակվել են մեր եկեղեցական կառույցների և այլ տնտեսական օբյեկտների վրա եղած վիմական արձանագրությունները, որոնց բովանդակությունը առավել բազմաբնույթ է։ Այստեղ կարելի է հանդիպել հարկերի և տուրքերի, ամուսնության և ընտանիքի, տնտեսական զբաղմունքների և ընդհանրապես հասարակա-

¹⁵¹ Տե՛ս *Ա. Մովսիսյան*, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, էջ 163։

կան կենցաղին վերաբերող բազում բառերի ու տերմինների, որոնք շրջանառության մեջ դրվելով՝ այլ գրավոր աղբյուրների, վկայությունների նման թույլ են տվել ուսումնասիրողներին հետաքրքիր եզրահանգումներ անել հայոց ավանդական ընտանիքի, օժիտի, վճարվող հարկերի ու տուրքերի, ջրամատակարարման և տնտեսական ու հասարակական կենցաղին վերաբերող բազում այլ ոլորտների մասին: Վիմական արձանագրությունների զարգացումը իր գագաթնակետին է հասել 3-րդ փուլում՝ XI-XIV դդ.: Դրանք շուրջ հազարի են հասնում և պարունակում են ուշագրավ վկայություններ տարբեր խնդիրների մասին: Սկսած XIV-XV դարերից՝ վիմական արձանագրություններ հավաքել ու վերծանել է Սեդրակ Բարխուդարյանը իր «Դիվան հայ վիմագրության» եռահատոր աշխատությունում, որում օգտագործելով արձանագրությունների վերծանման տասնամյակների փորձը՝ կատարել է հարյուրավոր ճշտումներ: Այդ արձանագրությունները շրջանառության մեջ են դրվել տարբեր խնդիրների մեկնաբանման ժամանակ: Անի քաղաքի արձանագրությունը հրատարակել ու վերծանել է Հովսեփ Օրբելին:

2000 թ. վիմագրագետ Գր. Գրիգորյանը հրատարակել է «Հայկական վիմագրություն» ուսումնական բուհական ձեռնարկը¹⁵², որը շատ օգտակար է պատմաբան և բանասեր ուսանողների համար, ուստի մենք հարկ համարեցինք այս բաժինը շարադրել շատ համառոտ:

¹⁵² Տե՛ս **Գր. Գրիգորյան**, Հայկական վիմագրություն, Երևան, 2000:

ԹԵՄԱ 3

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆԶԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Աստվածաշունչը Ք.ա. XIII դարից մինչև Ք.հ. II դարը գրված տա-րալեզու և տարաբնույթ երկերի ժողովածու է, որը բաժանվում է եր-կու հիմնական մասի՝ Հին Կտակարան (39 գիրք) և Նոր Կտակարան (27 գիրք)։ Կրոնական բովանդակությամբ հանդերձ՝ Աստվածաշուն-չը կարևոր աղբյուր է Մերձավոր Արևելքի երկրների, այդ թվում Հա-յաստանի վաղ անցյալի ուսումնասիրության համար։ Նրանում մեծ տեղ են գրավում նաև պատմական, կենցաղային-ազգագրական, կրոնա-բարոյական բնույթի նյութերը։ Հայերեն թարգմանվել է V դա-րում Մեսրոպ Մաշտոցի, Սահակ Պարթևի և նրանց աշակերտների կողմից։ Հայերեն թարգմանությունն այնքան կատարյալ ու հմտալից է, որ համարվել է «թարգմանությունների թագուհի»։ Աստվածաշուն-չը հայերեն թարգմանվել է բազում անգամ։

Ըստ Աստվածաշնչի՝ Հայկական լեռնաշխարհը ներկայացվում է որպես արարչագործության վայր՝ Եդեմ-դրախտավայր, որտեղ գտնվել են իմացությունը և անմահությունը խորհրդանշող ծառերը, արևի ելման երկիր, համաշխարհային ջրհեղեղից հետո մարդկույթ-յան փրկության ու վերածննդի երկիր։ Բերված հատվածները տրվում են ըստ Աստվածաշնչի արևելահայերեն մոր թարգմանության (Ս. Էջ-միածին, 1999)՝

Ծննդոց, գլուխ Բ.

«8. Աստված դրախտ տնկեց Եդեմում՝ արևելյան կողմում»։ Ծննդոց գրքի մեկ այլ հատվածում (Ծննդոց, ԺԱ, 1-9) պատմվում է, որ Նոյի տապանը փրկվեց Արարատի լեռներում՝ Հայաստանում, հե-տո դեռևս մեկ լեզվով խոսող մարդիկ «արևելքից» գնացին Սեմաա-րի երկիր և որոշեցին կառուցել երկնահաս «բաբելոնյան աշտարա-կը»։ Ա. Մովսիսյանի ուշագրավ մեկնությամբ՝ Միջագետքից ու Պա-ղեստինից հյուսիս տարածվող Հայկական լեռնաշխարհը համարվել է «արևելք» ոչ թե բառի աշխարհագրական կողմը ցույց տվող, այլ «արևի ելքի երկիր» իմաստով¹⁵³։

* Տե՛ս Աստվածաշունչ, Մատեան, Հին և Նոր կտակարանների, 1991։

¹⁵³ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ.1, էջ 40-41։

«9. Տեր Աստված երկրից աճեցրեց նաև ամեն տեսակի գեղեցկատեսիլ ու համել մրգեր տվող ծառեր, իսկ կենաց ծառը՝ բարու և չարի գիտության ծառը, տնկեց դրախտի մեջտեղում»: Կենաց ծառը խորհրդանշում էր անմահությունն ու իմաստությունը: Անմահության ու իմաստության խորհուրդները Հայկական Լեռնաշխարհի հետ են կապվում նաև այլ աղբյուրներում¹⁵⁴:

«10. Գետ էր բխում Եդեմից, որպեսզի ոռոգեր դրախտը, և այնտեղից բաժանվում էր չորս ճյուղերի»: 11. «Մեկի անունը Փիսոն էր...»: «13. Երկրորդ գետի անունը Գեհոն էր...»: «14. Երրորդ գետը Տիգրիսն է... Զորորդ գետը Եփրատն է»: Եդեմի չորս գետերից երկուսը հստակ են՝ Տիգրիսն ու Եփրատը, որոնք սկիզբ են առնում Հայկական Լեռնաշխարհից: Մյուս երկուսի (Գեհոն և Փիսոն) վերաբերյալ վիճաբանությունները դեռ չարունակվում են: Քանի որ Եդեմից սկիզբ առնող երկու հանրահայտ գետերը ծնունդ են առնում Հայկական Լեռնաշխարհում, ուստի այնտեղ էլ գտնվել է Աստվածաշնչի Եդեմ-դրախտը: Դա համահունչ է հնագույն միջագետքյան պատկերացումներին, որոնց համաձայն ևս արարչագործության կենտրոնը Հայկական Լեռնաշխարհն է¹⁵⁵:

«17. Երկրի վրա քառասուն օր ու քառասուն գիշեր ջրհեղեղ եղավ...»: «23. Աստված բնաջնջեց երկրի երեսին գտնվող ամեն մի էակ՝ մարդուց մինչև անասուն, սողուններից մինչև երկնքի թռչունները: Նրանք վերացան երկրի երեսից: Կենդանի մնաց միայն Նոյը, նաև նրանք, որ նրա հետ տապանում էին»: «24. Ջուրը հարյուր հիսուն օր ողողեց երկիրը»:

Ծննդոց, գլուխ Ը.

«1. Աստված հիշեց Նոյին, նրա հետ տապանում գտնվող բոլոր գազաններին, բոլոր անասուններին ու բոլոր թռչուններին.... 3. Ջուրը գնալով իջնում, քաշվում էր երկրի վրայից, և հարյուր հիսուն օր անց այն նվազեց: 4. Յոթերորդ ամսի քսանյոթին տապանը նստեց Արարատ Լեռների վրա»: Ա. Մովսիսյանի ուսումնասիրության համաձայն՝ աշխարհակործան ջրհեղեղի մասին պահպանված ավանդագրույցներում իբրև տապանի փրկության վայր մատնանշվում է Հայկական Լեռնաշխարհը¹⁵⁶:

¹⁵⁴ Տե՛ս Ա. Մովսիսյան, Սրբազան Լեռնաշխարհը, էջ 43-49:

¹⁵⁵ Տե՛ս նույն տեղում, էջ 7-16:

¹⁵⁶ Տե՛ս նույն տեղում, էջ 5-6, 39-43, 66-71 և այլն:

Աստվածաշնչում արժեքավոր տեղեկություններ կան Հայաստանի Բ.ա. VII-VI դարերի անվանումների, հայոց պատմության ու մշակույթի հնագույն շրջանի վերաբերյալ: Այսպես, Աստվածաշնչի Թագավորությանց չորրորդ գրքի գլուխ ԺԹ. 36-37-ում ասվում է. «Ասորեստանի Սենեքերիմ արքան (Սինախերիբ արքան՝ 705-681) չվեց ու գնաց բնակվեց Նինվեում: Նրա որդիներ Ադրամելիքն ու Սարասարը, նրան սրով հարվածեցին և Արարատի երկիրը փախան»: Խոսքը այստեղ Ուրարտու-Արարատյան թագավորության մասին է: Այստեղ եբրայական բնագիրը և լատինական թարգմանությունը հայրասպան որդիների ապաստարան երկիրն անվանում են Արարատ, հունական և արաբական թարգմանությունները՝ Արմենիա, իսկ ասսուրականը և քաղդեականը՝ Կարդու: Այսինքն՝ Արարատ, Արարադ և Կարդու երկրանունները գործածվում են որպես Արմենիա-Հայք երկրանվան հոմանիշներ:

Երեմիա, գլուխ ԾԱ, 27.

«Դրո՛շ բարձրացրեք երկրի վրա, փող փչեցեք բոլոր ազգերի մեջ, զորագնդեր կանչեցեք նրա (Բաբելոնի) դեմ: Իմ կողմից հրաման տվեք Այրարատյան թագավորություններին և Աքքանազյան գնդին»: Այրարատյան թագավորությունը, որին Երեմիան Բ.ա. 594-592 թթ. հորդորում է ընդդեմ Բաբելոնի, ամենայն հավանականությամբ, երվանդունիների նորաստեղծ հայկական պետությունն էր:

Աստվածաշնչի մեկ այլ տեղում (Եզեկիել, գլ. ԻԷ, 14) հիշատակվում է «Թորգոմա տուն»: Հայ և օտար մատենագիրներն ու պատմագիրները հայերին սերած էին համարում հիշյալ Թորգոմի տոհմից: Դրա համար էլ նրանք հաճախ Հայաստանը անվանում են «Տունն Թորգոմաց», իսկ հայերին՝ «Որդիք կամ ազգն Թորգոմայ», «Թորգոմածին», «Թորգոմեան»: Թորգոմը բիբլիական Նոյ Նահապետի Հաբեթ որդու սերնդից էր: Հայկական ժողովրդական ավանդությունը ևս հայերի նախահայր Հայկին համարում է Թորգոմի որդի, իսկ «Թորգոմայ տունը»՝ Հայաստանի հոմանիշ¹⁵⁷:

¹⁵⁷ Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատի, հ. 1, էջ 40-41:

ԹԵՄԱ 4

ՀՈՒՆԱ-ՀՈՌՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿՋԲՆԱԴՔՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Հայաստանում ապրող ցեղերի և բուն հայ ժողովրդի հնագույն կենցաղին ու մշակույթին վերաբերող տվյալներով առավել հարուստ է հունա-հռոմեական անտիկ մատենագրությունը:

Պատմագրությունը, որպես այդպիսին, ծնունդ է առել Հունաստանում Ք.ա. VI-V դարերում: Հին Արևելքի քաղաքակրթությունները՝ եգիպտականը՝ իր հիերոգլիֆ բազմահարուստ դպրությամբ, սեպագրականը՝ իր շումերական, բաբելոնաասուրական, խուռիական, ուրարտական, խեթական ու հին պարսկական ճյուղավորումներով, մնացել են առանձին իրադարձությունների կամ միատարր երևույթների շարանների արձանագրման մակարդակի վրա:

Հունական պատմագրության դերը հին Հայաստանի տնտեսամշակութային կյանքի և պատմության լուսաբանման գործում չափազանց մեծ է: Առավելապես կարևոր են Հերոդոտոսի, Քսենոփոնի և Ստրաբոնի հաղորդումները, որոնք մոտիկից ծանոթ են եղել Հայաստանին: Բացառիկ պատմագիտական արժեք ունեն նաև հելլենիստական դարաշրջանի հռոմեական սկզբնաղբյուրները:

ՀԵՐՈՂՈՏՈՍ

Հերոդոտոսի «Պատմությունը» տեղեկություններ է պահպանել նաև հին Հայաստանի ու հայերի մասին, որոնք թեև մեծաքանակ չեն, բայց շատ կարևոր են: Դրանք արժեքավոր են նրանով, որ հունական պատմագրության էջերից մեզ հասած հնագույն տեղեկություններն են մեր երկրի մասին, և պահպանվել են ոչ թե մի այլ պատմիչի, այլ պատմահայր Հերոդոտոսի երկում¹⁵⁸:

Ծնվել է Փոքր Ասիայի հունական Հալիկառնաս քաղաքում՝ Ք.ա. 484 թ., վախճանվել Ք.ա. մոտ 425 թ.: Պատմագրության հիմնադիր

¹⁵⁸ *Պազիկ Սարգսյան*, Պատմահայր Հերոդոտոսը (տե՛ս *Հերոդոտոս*, Պատմություն ինը գրքից, թարգմանությունը՝ Ս. Մ. Կրկյաշարյանի, Երևան, 1986, էջ 553-578 (այսուհետև՝ Հ. գիրքը և էջը):

Յերոդոտոսի երկը բովանդակում է հին աշխարհի պատմությունը մինչև Ք.ա. V դարը՝ ներառյալ հույն-պարսկական պատերազմների մանրամասն նկարագրությունը: Պատմահայրը շատ է ճանապարհորդել. եղել է Փոքր Ասիայի պետություններում, Պարսկաստանում, Բաբելոնում, Պաղեստինում, Փյունիկիայում, Եգիպտոսում. Լիբիայում, Հունաստանում, Էգեյան ծովի կղզիներում, Սիցիլիայում, Բոսֆորում և այլուր: Տեսածի և լսածի հիման վրա նա գրել է իր հռչակավոր «Պատմություն» աշխատությունը, որը հետագայում Ալեքսանդրիայի գիտնականները բաժանել են ինը գրքերի: Յերոդոտոսի «Պատմությունը» պարունակում է հսկայական քանակությամբ պատմական, ազգագրական, աշխարհագրական նյութեր հին աշխարհի երկրների վերաբերյալ: Մեծ հետաքրքրություն ներկայացնող վկայություններ կան նաև հին Հայաստանի պատմական աշխարհագրության, տնտեսության ու հասարակական-քաղաքական հարաբերությունների մասին: Դրանք թեև բազմաքանակ չեն, սակայն հույժ կարևոր են: Դրանցից ենք տեղեկանում, որ Ք.ա. V դարում Հայաստանը բաժանված էր Աքեմենյան XIII և XVIII սատրապությունների միջև: Պատմիչը գրում է Հայաստանի տնտեսությանն ու առևտրին վերաբերող զանազան հարցերի, գանձվող հարկերի մասին և այլն:

«Պատմության» VII գրքում նա գրում է. «Փռյուզիացիների սպառազինումը բավականին նման էր պափլագոնիականին (բնակվում էին Փոքր Ասիայի մերձնածովյան ափերին), միայն մի փոքր տարբերությամբ: Փռյուզիացիները, ինչպես մակեդոնացիներն են ասում, երբ իրենց հարևանությամբ ապրում էին Եվրոպայում, անվանվում էին բրիգներ: Իսկ Ասիա վերաբնակվելուց հետո»¹⁵⁹ նրանք երկրի հետ միասին փոխեցին և իրենց անունը՝ կոչվելով փռյուզիացիներ:

Արմենները, լինելով փռյուզիական գաղութաբնակներ, զինված էին փռյուզիացիների նման: Այս երկուսի առաջնորդն էր Արտոքմեսը,¹⁶⁰ որն ամուսնացած էր Դարեհի (խոսքը Աքեմենյան տերության թագավոր Դարեհ I Վշտասայանի (522-486) մասին է) դստեր հետ (Հ. VII, 409): Նրանք ունեցել են զենք ու հանդերձանք՝ հյուսված սաղավարտներ, փոքր վահաններ, կարճ նիզակներ, տեգեր, սրեր և բարձր ճութավոր կոշիկներ:

¹⁵⁹ Հնդեվրոպական լեզվաընտանիքին պատկանող ժողովուրդ, որ Փոքր Ասիա էին անցել Թրակիայից Ք. ա. XIII-XII դարերում, բնակվեցին Լիդիայի և Կապադոկիայի միջև:

¹⁶⁰ Արտոքմես անունը, Ս. Կրկյաշարյանի կարծիքով, պետք է կարդալ Արտաշես (տես Ս. Կրկյաշարյան, Երվանդունիների արքայատոհմը Հայաստանում, - ՊԲՀ, 1973, թիվ 4, էջ 185):

Հետազոտողներն ամենից ավելի ուշադրություն են նվիրել հայերի մասին Հերոդոտոսի այն հաղորդմանը, ըստ որի նրանք «փոյուզիական վերաբնակիչներ» են, որից ենթադրվում է, թե իբր հայերը ծագում են փոյուզիացիներից, և հայոց լեզվի ու փոյուզերենից պահպանված տարրերի համադրությամբ կարծիք է ձևավորվել, որ դրանք ազգակից լեզուներ են և թրակերենի հետ կազմել են հնդեվրոպական լեզվաընտանիքի ճյուղերից մեկը՝ թրակափոյուզահայկական ճյուղը¹⁶¹:

Հերոդոտոսի ամենածավալուն հաղորդումը Հայաստանի մասին վերաբերում է բաբելոնցի առևտրականների ճանապարհորդություններին մեր երկիր: Պատմագիրը որակում է այդ տեղեկությունը որպես Բաբելոնում իր լսածներից ամենազարմանալի «Նավերը, որոնցով (ասորեստանցիները) նավում են գետն ի վար դեպի Բաբելոն, կլոր են և ամբողջովին կաշվեպատ: Արմենիայում, որը գտնվում է Ասորեստանից դեպի վերև, նրանք կտրում են ուռիները, (որոնցով) պատրաստում են նավի կողերը և դրանք պատում կաշվե ծածկով, նավի հատակի նման: Նրանք ոչ նավի ետնամասն են լայնացնում, ոչ էլ նրա առաջամասը նեղացնում, այլ տալիս են դրան վահանի նման կլոր ձև: Ամբողջ նավը լցնում են ծղոտով, բեռնում այն և թողնում հոսանքն ի վար: Նրանք մեծ մասամբ փոխադրում են գինի կարմիր կարասներով: Նավերը վարում են երկու լայնաբերան թիակներով կանգնած երկու մարդ. նրանցից մեկը թիակը քաշում է դեպի իրեն, մյուսը՝ հրում իրենից: Այդ նավերը պատրաստվում են և՛ շատ խոշոր, և՛ առավել փոքր: Դրանցից ամենախոշորները կշռում էին հինգ հազար տաղանդ (բաբելոնյան տաղանդը հավասար է 30,3 կգ-ի), այսինքն՝ 151,5 տոննա: Յուրաքանչյուր նավի մեջ կա մեկ կենդանի գրաստ, իսկ խոշորների մեջ՝ մի քանիսը: Նավերով Բաբելոն հասնելուց և բեռը ծախելուց հետո նրանք վաճառքի են հանում նաև նավի կմախքը և ամբողջ ծղոտը, իսկ կաշիները բարձում են գրաստների վրա և վերադառնում արմենների մոտ: Քանզի գետն ի վեր ոչ մի կերպ հնարավոր չէ նավել՝ գետի արագության պատճառով: Այդ է պատճառը, որ նրանք նավերը պատրաստում էին ոչ թե փայտից, այլ կաշվից: Երբ նրանք, գրաստները քշելով, ետ են դառնում արմենների մոտ, նույն ձևով պատրաստում են ուրիշ նավեր» (Հ. I, 79-80):

¹⁶¹ Տե՛ս *Պագիկ Սարգսյան*, Պատմահայր Հերոդոտոսը, էջ 569:

Յերոդոտոսը եղել է Բաբելոնում, նրա պատմածը կասկածի ենթակա չէ: Այս հաղորդումից կարելի է պնդել, որ Բաբելոնի և Յայաստանի միջև կանոնավոր առևտրական երթևեկություն է եղել: Պատմագիրը հիշատակում է միայն բաբելոնցի առևտրականներին, բայց դրանով ամենևին չի բացառվում հայ առևտրականների կողմից այդ ուղիներն օգտագործելու հանգամանքը: Ընդսին երթևեկությունը կատարվել է ոչ միայն գետի հոսանքով, այլև ցամաքով, ավանակների քարավաններով: Նավերի կառուցման համար օգտագործվող նյութը ամբողջությամբ հայթայթվել է Յայաստանում՝ և՛ ուռննու ճյուղերը, և՛ մորթիները, և՛ հարդը: Դա հաստատվում է նաև Յերոդոտոսին հաջորդած Քսենոփոնի և Ստրաբոնի ու նրանից շատ առաջ՝ ասորեստանյան և ուրարտական սեպագիր արձանագրությունների վկայություններով՝ Յայաստանում ձիաբուծության և տեղական ձիերի բարձր համարման, ավանակաբուծության մասին: Ինչ վերաբերում է բաբելոնացի առևտրականների օգտագործած մորթուն, ապա Յերոդոտոսը «Պատմության» V գրքում ուղղակի ասում է. «Արմենները առատ հոտեր ունեն» (Յ. V, 49, 305): Որպես առևտրի հիմնական առարկա պատմագիրը հիշատակում է գինին: Գ. Սարգսյանը կարծում է, որ «փյունիկյան» սափորների մասին հիշատակելիս պատմագիրը հավանաբար նկատի է ունեցել «փյունիկյան» ձև ունեցող անոթները կամ կարմիր սափորները, որոնք արտադրվում էին Յայաստանում: Այլապես գրաստների ծանրաբեռնումը կավանդներով իրեն չէր արդարացնի¹⁶²:

Գ. Սարգսյանի կարծիքով մորթիներից բացի ավանակների քարավանները պետք է որ Բաբելոնում բեռնվեին ետդարձի համար նաև այլ ապրանքներով, ամենայն հավանականությամբ՝ արծաթով:

Այն, որ, իրոք, Յայաստանը եղել է գինու հայրենիքներից մեկը, խոսվում է նաև Յերոդոտոսից կես դար անց Յայաստանով ճանապարհորդած Քսենոփոնի «Անաբասիսում», որը շեշտում է հայկական գինիների տեսականու գոյության և բարձր որակի մասին: Որ Յայաստանի միջով իրոք անցել են առևտրական բանուկ ճանապարհներ, վերստին հաստատում է Յերոդոտոսը՝ Փոքր Ասիայից Պարսկաստան տանող հռչակավոր «Արքայական պողոտան» նկարագրելով: Այդ ճանապարհը ունեցել է վարչական, ռազմական ու առևտրական նշանակություն: Այն հիմնականում սալահատակ էր, նրա երկայնքով

¹⁶² Տե՛ս Գ. Սարգսյան, Պատմահայր Յերոդոտոսը, էջ 569-570:

ծգվում էին օթևան-կայանները՝ կառուցված ճանապարհորդների հանգստյան և ճանապարհի անվտանգության համար: Այդ ճանապարհի մի խոշոր հատվածը՝ շուրջ 340 կմ (ըստ Հերոդոտոսի՝ 56,5 փարսախ. փարսախը հավասար է մոտավորապես 5 կմ-ի, մեկ ժամվա ճամփա), որի վրա կառուցված էր 15 օթևան-կայան, անցնում էր Հայաստանի տարածքով: Այն ծգվում էր արևմուտքից արևելք՝ Հայաստանի հարավային գոտում, Եփրատի արևմտյան կեռմանի գետանցից սկսած և շարունակվում Տիգրիսի վերին հոսանքի երկայնությամբ: Բնականաբար, այդ ճանապարհը մեծ դեր է խաղացել Հայաստանի տնտեսական կյանքում¹⁶³:

Երրորդ գրքում Հերոդոտոսը հաղորդում է պարսկական տերության 20 սատրապություններից արքային տրվող արծաթի տաղանդներով հարկի քանակի մասին: Նա գրում է. «Պակտյուլիեից (ուսումնասիրողները նույնացնում են Կորդուքի հետ), արմեններից և հարևաններից մինչև Եվքսինյանը (Պոնտոս՝ Սև ծով) ստացվում էր 400 տաղանդ (մոտ 12 տոննա արծաթ). սա 13-րդ նահանգն էր» (Հ. III, 93, 197): Տարեկան շուրջ 12 տոննա արծաթը հսկայական գումար էր, նույնիսկ եթե հաշվի առնենք, որ ծանրությունն ընկնում էր ոչ միայն հայերի վրա, այլև հարևան որոշ երկրների, որովհետև սրանց մեջ թվով, տարածքով և կարողությամբ գերակշռում էին հայերը: Պետք է հաշվի առնել, որ հայերի արևելյան հատվածը, երկու ուրիշ ժողովուրդների հետ կազմելով տերության XVIII սատրապությունը, արքային վճարում էր ևս 200 տաղանդ (6 տոննա արծաթ): Այդ ամբողջը վճարելու համար պետք է առկա լինեին միջոցներ և դրա աղբյուրներից մեկն էլ, ըստ Գ. Սարգսյանի, Բաբելոնի հետ Հայաստանի միջազգային առևտուրն էր¹⁶⁴:

Հայաստանի մասին Հերոդոտոսի տվյալներից կարելի է եզրակացնել, որ Հայաստանը ներկայանում է որպես հարուստ, զարգացած գյուղատնտեսություն, առևտրական արտաքին կապեր ու ապրանքային տնտեսության որոշակի մակարդակ ունեցող երկիր:

Ազգագրական առումով անչափ ուշագրավ է Հերոդոտոսի նկարագրությունը որոշ ժողովուրդների սովորույթների մասին: Այսպես, օրինակ՝ խոսում է հույների շրջանում առևանգմամբ ամուսնության

¹⁶³ Տե՛ս **Я. А. Манандян**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Вв. до н.э. - XV в. н. э.), Ереван, 1954, с. 16-18.

¹⁶⁴ Տե՛ս **Գ. Սարգսյան**, Պատմահայր Հերոդոտոսը, էջ 571:

գոյության (Յ, գ.Ա, 5, 6), Դելփյան աստծո կարեկցանքը շահելու համար երեք հազար ընտիր անասուն զոհաբերելու (Յ, գ. Ա, 50, 22), պարսիկների կողմից աստվածներին զոհեր մատուցելու (Յ, գ. Ա, 132, 57), բազմակնության պարսկական սովորույթների մասին: Ըստ պատմիչի հաղորդման՝ «պարսիկի դիակը չէին թաղում, մինչև շները կամ հավերը այն չեն քրքրել: Ես հաստատ գիտեմ, որ մոզերն այդպես են վարվում. քանզի նրանք բացահայտ են այդ անուն: Այսուհանդերձ, պարսիկները դիակը նախապես մոմով պատելուց հետո են հողին հանձնում» (Յ., Ա, 140, 60): Դիակը մոմով պատելու սովորույթը պարսիկները վերցրել են բաբելացիներից: Դիակը գազանների հոշոտմանը հանձնելու սովորույթը այդ ժամանակ գոյություն ուներ միայն հյուսիս-իրանական ցեղերի ու մոզերի մոտ: Դիակները գազանների հոշոտմանը լքելու մոզերի սովորույթը ծագել է կասպիական ցեղերի թաղման ձևերից (Յ., ծան. 101, էջ 584):

Պատմահայրը մանրամասնորեն նկարագրում է նաև բաբելոնական հանդերձանքը. «Հագնում են նրանք մինչև ոտները հասնող վուշե խիտոն (ներքնաշապիկ), իսկ վրայից մեկ ուրիշ բրդե խիտոն, դրա վրայից էլ հագնում են սպիտակ թիկնոց. նրանց կոշիկները տեղական են, նման բեռվտիական մաշիկների: Նրանք պահում են երկար մազեր, գլուխներին կապում չալմա և ամբողջ մարմինը օծում անուշահոտ յուղով: Ամեն մեկն ունի կնիք և գավազան: Ամեն մի գավազանի վրա փորագրված է խնձոր, կամ վարդ, կամ շուշան, կամ արծիվ և կամ մեկ այլ բան: Քանզի ընդունված չէ առանց նշանի գավազան ունենալը» (Յ., գ. ա, 195, 80):

Անչափ ուշագրավ է բացառիկ նկարագրությունը է թողել աղջիկներին վաճառելու ամուսնական սովորույթի մասին. «Տարին մեկ անգամ յուրաքանչյուր գյուղում մի վայրում հավաքում էին ամուսնական տարիքի հասած բոլոր կույսերին, նրանց շուրջը կանգնում էին այրերի խմբեր, իսկ քարոզողն ամեն մեկին առանձին կանգնեցնելով, վաճառում էր, նախ ամենագեղեցիկին. իսկ երբ արդեն դրա դիմաց նա շատ ոսկի էր ստանում, կանչում էր մյուսին, որը հետևյալն էր իր գեղեցկությամբ: Նրանք վաճառվում էին ամուսնության համար: Բաբելոնացի փեսացուներից հարուստները, իրար ընդհատելով, զինն էին բարձրացնում և գնում ամենագեղանիներին: Իսկ հասարակ ժողովրդի թվից փեսացուները, որոնք չէին ընկնում գեղեցկության հետևից, առնում էին ոչ գեղեցիկներին և հավելյալ

դրան չէին ծախսում: Ամենագեղեցիկ աղջիկներին վաճառելուց հետո քարոզողը կանգնեցնում էր ամենատեղին կամ հաշմվածին և հայտարարում, թե ո՞վ սրան կվերցնի իրեն կին նվագագույն դրամով, և վերցնում էր նա, ով բոլորից քչին էր համաձայնվում: Այդ դրամը գոյանում էր գեղեցիկ կույսերից. ուստի գեղեցիկներն ամուսնացնում էին տգեղներին և խեղանդամներին» (Հ., գ. Ա, 196, 80-81):

Ըստ պատմահայր Յերոդոտոսի՝ բաբելոնացիները հանգուցյալներին թաղում էին մեղրի մեջ:

Ամեն անգամ իր կնոջ հետ կենակցելուց հետո բաբելոնացին նստում էր ծխացող խնկանոթի առաջ, նույնը նրա դիմաց (նստած) անում էր կինը: Այնուհետև արշալույսին նրանք լվացվում էին, քանզի առանց լվացվելու նրանք ոչ մի անոթի չէին հավում: Այդպիսի սովորություն ունեն մաս արաբները (Հ., գ. Ա, 198, 81):

Մեկ այլ ավանդույթի համաձայն՝ բաբելոնացի կինը իր կյանքում մեկ անգամ պետք է նստի Ափրոդիտեի սրբավայրում և խառնվի օտարերկրացի այրի հետ: Շատ կանայք, որոնք պարծենում էին իրենց հարստությամբ և անարժան էին համարում խառնվել մյուսներին, երկծի ծածկված սայլակներով գալիս և կանգնում են սրբավայրի մոտ: Նրանց հետևում են մեծ թվով սպասավորներ: Կանանց մեծ մասը վարվում է հետևյալ կերպ: Նստում են Ափրոդիտեի սրբավայրում՝ գլուխներին պարանից (հյուսած) պսակ դրած: Նրանց մի մասը գալիս է, մյուսը՝ գնում: Բոլոր ուղղություններով ուղղագիծ անցումներ կան հավաքված կանանց միջև, որոնց միջով անցնելով՝ օտարերկրացիները ընտրություն են կատարում: Եթե կինն այստեղ նստեց, ապա նա չի կարող իր տուն վերադառնալ մինչև որ օտարերկրացիներից մեկը նրա փեշի մեջ արծաթ նետելով՝ սրբավայրից դուրս չխառնվի նրա հետ: Արծաթը նետելիս նա պետք է ասի. «Ես քեզ կանչում եմ հանուն Մյուլիտտա (Ափրոդիտե) աստվածուհու»: Արծաթի քանակը նշանակություն չունի: Կինն իրավունք չունի այն մերժելու: Խառնակվելուց հետո, իր սրբազան պարտքը աստվածուհու առաջ կատարած լինելով, նա վերադառնում է տուն, որից հետո նրան չես կարող տիրանալ, ինչքան էլ մեծ գումար տաս: Արդ, գեղեցիկ և բարեկազմ եղողները շուտով տուն են վերադառնում, իսկ տգեղները երկար սպասում են, այնքան մինչև ընդունված կարգը կատարվի: Այդ սպասումը կարող է տարիներ տևել (Հ., գ. Ա, 199, 81-82):

Յերոդոտոսը ուշագորավ վկայություններ է հաղորդում մաս մասագետների՝ սկյութական ցեղերի սովորույթների մասին: Բերենք

դրանցից մի քանիսը. «Սրանք սովորաբար ապրում են հում ձուկ ուտելով, օգտագործում են փոկի կաշուց պատրաստված հագուստ», «...այստեղ կան այնպիսի ծառեր, որոնց տերևները մանրացնելով, խառնում են ջրին և դրանով իրենց զգեստների վրա նկարներ գծում: Այդ նկարները չեն լվացվում, այլ մաշվում են բրդե գործվածքի հետ, ասես դրանք սկզբից ևեթ գործված լինեին միասին: Այս մարդիկ իրար հետ բացահայտ խառնվում են, ինչպես անասունները» (Հ., գ. Ա, 202-203, 83):

«Մասնագետները սկյութականի նման նման զգեստ են կրում և նրանց նման կենցաղ վարում:

...Նրանցից յուրաքանչյուրն ամուսնանում է մեկ կնոջ հետ, բայց կանանցից օգտվում են բոլորը՝ ընդհանուր ձևով: Արդ եթե որևէ մասնագետ այր ցանկանա որևէ կնոջ, ապա նա իր կապարճը կապելով նրա սայլին՝ անխռով խառնվում է նրան:

Նրանց մոտ տարիքի ոչ մի սահման չկա: Բայց եթե որևէ մեկը շատ է ծերանում, ապա նրա բոլոր ազգականները հավաքվում են և մորթում ծերունուն, նրա հետ նաև ոչխարներ, և ամբողջ մսերը եփելով՝ խրախճանք սարքում: Սա նրանք համարում են ամենատեղի մահը. իսկ հիվանդությունից մահացածին չեն ուտում, այլ հողով ծածկում են և սգում, որ նա չհասավ զոհվելու տարիքին:

Նրանք ոչինչ չեն ցանում, այլ սնվում են անասուններով ու ձկներով. Արաքս գետում առատ ձուկ է լինում: Նրանք նաև կաթնախում են:

Աստվածներից միայն պաշտում են արևին, որին էլ ձիեր են զոհաբերում: Այդ զոհաբերման իմաստն այն է, որ ամենաարագընթաց աստծուն պետք է զոհաբերել արարածներից ամենաարագընթացին» (Հ., գ. Ա, 216, 87-88):

Ըստ Չերոդոտոսի Արաքս գետում աճում էր Արաքսա անունով մի բույս, որ օժտված էր զարմանալի հատկություններով. երբ աղջիկներն այն գտնում էին, ապա նրանց մոտ արյունահոսություն էր առաջացնում, և ապա խամրում էր: Չորմոնալ հատկություններով օժտված այս մոզական բույսից բացի, ըստ Չերոդոտոսի վկայության, Արաքսի ափերին աճում էին այնպիսի ծառեր, որոնց պտուղներն ունեին թմրանյութի հատկություն. տեղացիներն իրենց խնջույքների ժամանակ այդ պտուղները նետում էին կրակը, ապա սրանց բուրմունքը շնչելով, հարբում էին, ինչպես գինուց, ու սկսում պարել և երգել¹⁶⁵:

¹⁶⁵ Տե՛ս *Ս. Վարդանյան*, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000, էջ 31:

«Ատտիկյան մեղու» բնութագրումն ստացած պատմագիր, փիլիսոփա, բանաստեղծ ու գրող Քսենոփոնը Թուկիդիդեսի և Հերոդոտոսի հետ մեկտեղ համարվում է հունական պատմագրության 3-րդ գագաթը: Բայց նրանցից ոչ մեկը այնքան չի ուսումնասիրել Հայաստանը և կարևոր տեղեկություններ թողել նրա ներքին կյանքի մասին, որքան այդ արել է Քսենոփոն Աթենացին (ծնվել է Ք. ա. մոտ 430 թ., վախճանվել՝ 356 թ.)¹⁶⁶: Քսենոփոնի թողած հարուստ պատմագրությունից մեզ համար մեծ հետաքրքրություն են ներկայացնում երկուսը՝ «Ամաբասիս» («Բյուրի նահանջը») և «Կյուրոպեդիա» («Կյուրոսի վարքը») երկասիրությունները: Մեծ է «Ամաբասիս» արժեքը որպես պատմական սկզբնաղբյուր և գրական-գեղարվեստական ստեղծագործություն. հայ ժողովրդի պատմության և տնտեսամշակութային կյանքի մի ամբողջ դարաշրջան է լուսաբանվում շնորհիվ հեղինակի արժանահավատ վկայությունների: Քսենոփոնը գրել է իր լսածի ու տեսածի անմիջական տպավորությունների ներքո: «Ամաբասիս» թարգմանությունն ու ընդարձակ ծանոթագրությունները կատարել է Ս. Կրկյաշարյանը¹⁶⁷:

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայկական լեռնաշխարհի էքնիկ պատկերի վերաբերյալ Քսենոփոնի վկայությունները: Նրա տվյալներով Ք. ա. V դարի վերջին Հայկական լեռնաշխարհի մեծ մասը, նրա միջնաշխարհը բնակեցված էր հիմնականում մեկ ժողովրդով՝ հայերով: Հույների նահանգի ճանապարհի նկարագրությունից երևում է, որ Արևելյան Տիգրիսից մինչև Արաքսի վերին հոսանքը

¹⁶⁶ Քսենոփոնը հունական վարձկան զորախմբի կազմում մասնակցել է պարսկական սատրապ, պարսից արքաներայր Կյուրոս Կրտսերի ձեռնարկած ռազմական արշավանքին դեպի Պարսկաստան (Ք.ա. 401 թ.): Կյուրոսի նպատակն էր՝ տապալել իր եղբայր Արտաքսերքսես II Մեծնոնին (404-358) և տիրանալ գահին: Արշավանքը անհաջողությամբ է ավարտվում. Կունաքսայի ճակատամարտում Կյուրոս Կրտսերը սպանվում է:

Տասնհազարանոց վարձկան հունական զորաբանակը, որի մեջ էր նաև Քսենոփոնը, ստիպված է լինում բռնել դեպի հայրենիք նահանգի երկու ուղիներից ամենադժվարանցանելի լեռնային ուղին՝ թշնամու հետապնդումներից խույս տալու համար: Նահանջող հույները կտրում-անցնում են նաև Հայոց լեռնաշխարհը՝ հարավից հյուսիս-արևմուտք, Վանա լճից հարավ ընկած կարդուխների երկրից՝ Հայաստանի տարածքով դեպի Սև ծովի ափերը: Այս նահանգի նկարագրությունը Քսենոփոնը տվել է իր ստեղծագործությունների գլուխգործոց «Ամաբասիս» («Նահանջ Բիւրու») աշխատությունում:

¹⁶⁷ **Քսենոփոն**, Ամաբասիս, Երևան, 1970 (այսուհետև՝ Ք. և էջը):

և ավելի հյուսիս հույները անցել են հայկական գյուղերով¹⁶⁸։ Հայերը, որոնք դեռ Ք.ա. VI դարում ապրում էին դասակարգային հասարակության և պետականության պայմաններում, ժողովուրդ էին։ Հայերից բացի Հերոդոտոսը հիշատակում է սասպերյների, ալարոդների, մատիենների, իսկ Քսենոփոնը՝ Հայկական լեռնաշխարհում էթնիկական մի շարք այլ խմբերի. խալդայներ, խալյուբներ, կարդուխներ, մարդեր, տաոխներ, փասիաներ, հեսպերիտներ։ Այս ցեղերի ծագումը դեռ վերջնականապես պարզված չէ, բայց, ըստ երևույթին, ալարոդները ուրարտացիներ էին, մարդերը իրանական ծագում ունեին, մատիենները և տաոխները՝ խուրրիական, սասպերյները կամ հեսպերիտները, փասիաները, խալդայները (խալիբները) թերևս՝ քարթվեական։ Հիշատակված բոլոր ցեղերը և առաջին հերթին ալարոդները, ընդգրկվելով հայ ժողովրդի կազմավորման գործընթացի մեջ, հետագայում մեծ մասամբ ձուլվեցին հայերի հետ՝ հետքեր թողնելով լեզվի, մշակույթի, մարդաբանական տիպի մեջ¹⁶⁹։ Ուշագրավ է, որ այդ ցեղերի անվանումները պահպանվեցին Հայկական լեռնաշխարհի մի շարք տեղանուններում։ Այսպես, օրինակ՝ ալարոդներից առաջացել է Արարատը, մարդերից՝ Մարդաստան կամ Մարդուցայք և, ըստ երևույթին, Մարդուղի գավառները, փասիաներից՝ Բասենը, տաոխներից՝ Տայքը, խալդայներից՝ Խաղտիքը, սասպերյներից կամ հեսպերիտներից՝ Սպերը և այլն¹⁷⁰։ Այսպես, Քսենոփոնի նկարագրած կարդուխների երկիրը համապատասխանում է հին հայ պատմիչների հիշատակած «Կորդուք»-ին կամ «Կորդուաց» աշխարհին, իսկ խալդայները Հայկական հյուսիսային և հյուսիսարևմտյան ծայրամասերում բնակվող ցեղախումբ էին, որից հետագայում առաջացավ պատմական Հայաստանի Խաղտիք երկրամասը։ Պատմագիտության մեջ կատարված փորձերը՝ խալդայներին նույնացնելու ուրարտացիների հետ, այժմ վերջնականապես մերժվում են։ Խալյուբները Սև ծովի հարավարևելյան ափերին և Բարձր Հայքի ու Փոքր Հայքի լեռներում բնակվող ցեղեր են եղել։ Հունական սկզբնաղբյուրների համապա-

¹⁶⁸ Քսենոփոնի հաղորդումների հիման վրա Գ. Տիրացյանը «Անաբասիսը» և Հայաստանը՝ ուշագրավ ուսումնասիրությունում փորձել է ընդգծել V դարի վերջերին Հայաստանի սահմանը և էթնիկ կազմը (տես **Գ. Տիրացյան**, «Անաբասիսը» և Հայաստանը»։ Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970, էջ 221-241)։

¹⁶⁹ Տես **Գ. Տիրացյան**, Հայաստանի ներքին կյանքը Արեւմտյանների տիրապետության ժամանակաշրջանում, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 455։

¹⁷⁰ Նույն տեղում։ Հմմտ. **Դ. Մանանդյան**, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, Երևան, 1945, էջ 69-72։

տասխան տեղեկությունների քննությունը ուսումնասիրողներին հանգեցրել է այն եզրակացության, որ խալդայների և խալուբների անվան տակ պետք է հասկանալ միևնույն ցեղախումբը: Տաոխները խոռոչական ծագում ունեցող լեռնային այն ցեղերն էին, որոնք բնակվում էին Հայկական լեռնաշխարհի հյուսիսում՝ Հարփասոս (ճորոխ) գետի ակունքների և միջին հոսանքի շրջանում: Սրանց երկրամասը ասորեստանյան և ուրարտական արձանագրություններում հիշատակվում է Դայաննի և Դիաուխի անուններով: Տաոխների երկրի անունից ծագել է Մեծ Հայքի Տայք աշխարհի անունը: Փասիաները Արաքս գետի վերին հոսանքի շուրջը բնակվող ցեղերն են: Փասիաների անունից ծագել է պատմական Հայաստանի Բասյան (Բասեն) գավառի անունը¹⁷¹:

Խալդայների վերաբերյալ պատմիչը հայտնում է, որ ազատ են և խիզախ, նրանք զինված էին հյուսկեն (ծառերի ճյուղերից հյուսված) կաշեպատ երկայն վահաններով և նիզակներով: Ասում էին, որ նրանք ամենառազմիկ ժողովուրդն են այդ երկրում ապրող բնակիչներից: Նրանք ծառայում են զորքի մեջ վարժով, եթե մեկը նրանց աջակցության կարիքը ունենա, որովհետև նրանք խիստ ռազմունակ լինելով՝ միաժամանակ աղքատ են. նրանց երկիրը լեռնոտ է և հարուստ է միայն չնչին մասը (Ք., IV, 89):

Հայերի վերաբերյալ Քսենոփոնի հաղորդումները առնչվում են հայ-արմենների մատակյաց և երկրագործ լինելուն: Պատմիչը խոսում է Հայաստանի տնայնագործության ու արհեստների, անասնապահության, որսորդության, հայերի բնակավայրերի, շենքերի, զգեստների, ուտեստի, խմիչքների, հյուրընկալման, զենքերի, ռազմական սովորությունների, կրոնական հավատալիքների, ընտանիքի, հասարակական հարաբերությունների և այլ հարցերի մասին:

Անցնելով Հայկական լեռնաշխարհով՝ սկզբնական շրջանում հունական մահանջող զորքը դիմում է բռնությունների՝ այրելով ու թալանելով հայկական գյուղերը, սակայն, ի վերջո, հայերի հետ զալիս են համաձայնության, ըստ որի հույները չեն ավերի հայկական բնակավայրերը, իսկ հայերը պարտավորվում են մահանջող զորքին ապահովել սննդամթերքով (Ք. IV, 93): Քսենոփոնը Արմենիան անվանում է «ընդարձակ ու բարեկեցիկ երկիր»: «Այստեղ գտնվող բազմաթիվ ու բարեշեն տներում առատ պարեն կար: Այնքան մեծ քանակությամբ

¹⁷¹ Տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, էջ 253-254:

գինի կար այնտեղ, որ պահում էին ծեփված հորերում» (Ք. IV, 88): Քսենոփոնը անդրադարձել է ազգագրության գրեթե բոլոր բնագավառներին՝ տնտեսական կենցաղին, նյութական մշակույթին, հասարակական, ընտանեկան հարաբերություններին և հումանիտար մշակույթի որոշ հարցերին: Այսպես, նա նկարագրում է, որ Արմենիայում «պարենն առատ էր», «Այստեղ նրանք արդեն ունեին անհրաժեշտ բոլոր տեսակի պարենի և բարիքների առատություն, մորթելու անասուններ, հաց, անուշահոտ հին գինիներ, չամիչ, ամեն տեսակ ընդեղեն» (Ք. IV, 93): Հույները, սովորության համաձայն, մարզական վարժությունների ժամանակ մաշկը յուղով օծելու համար յուղի պակասություն չեն զգացել. «Քանզի այստեղ [Արմենիայում. – Ռ.Ն.] յուղի շատ տեսակներ կային, որ գործածում էին ձիթայուղի փոխարեն. խոզաճարպ, քնջութի և դառն ճշի և բևեկնի յուղ: Կար նաև սրանցից պատրաստված մեռոն... Այնուհետև որոշվեց դարձյալ տեղավորվել [գյուղերի] տներում: Այնժամ զինվորները մեծ աղմուկով և ուրախությամբ դիմեցին դեպի բնակարաններն ու պարենամթերքը: Իսկ նրանք, ովքեր նախապես հեռանալիս անմտաբար այրել էին հայ-արմենների տները, պատժվեցին նրանով, որ վատ պայմաններում հայտնվեցին» (Ք. IV, 94): Թեպետ հունական զորքը նահանջել է ձմռանը, սակայն Քսենոփոնը նկարագրել է, որ հայերի սեղանները չափազանց առատ էին հացի տարբեր տեսակներով: Նա գրում է. «...Այդ գիշեր բոլոր զինվորները տեղավորվելով տներում՝ քնեցին ամեն տեսակ պարենի առատության մեջ...»: Քսենոփոնի՝ իբրև ականատեսի վկայություններից երևում է, որ հայ ընտանիքն ի բնե հյուրասեր և օտարականների համար գթառատ է եղել: Հայ գյուղապետը վստահում է նույնիսկ իրեն ձերբակալության մեջ պահող Քսենոփոնին, լիառատ կերուխումի է արժանացնում հույն զինվորներին, թաղված կարասներից հրամցնում անուշահամ գինիներ: Այդպիսի ուշադրության են արժանանում բոլոր այն զինվորները, որոնք Հայաստանի ծանր ձմռան պայմաններում հյուրընկալված էին արմենների տներում: Քսենոփոնը «որ գյուղ էր մտնում՝ գնում էր գյուղերում եղողների [իսկ զինվորների] մոտ և ամեն տեղ գտնում էր նրանց կերուխում անելիս և ուրախ: Եվ ոչ մի տեղից բաց չէին թողնում՝ մինչև չմատուցանեին նրանց ամենաընտիր կերակուրները.... Սպասավորություն էին անում արմենների երեխաները բարբարոսական զգեստներ հագած, իսկ երեխաներին նրանք նշաններով ցույց էին տալիս, ինչպես մուկների, թե ինչ անել: Չկար մի տեղ, որ սեղանին միաժամանակ չդնեին գառան, ուլի, խոզի, հորթի և հավի միս, մեծ քանակությամբ ցորենի ու գարու հացի հետ: Ու եթե

որևէ մեկը մտերմաբար ցանկանում էր խմել մյուսի կենացը, ապա նրան քարշ էր տալիս կարասի մոտ և կռանալով պետք է խմեր այն-տեղից՝ եզան նման ծծելով» (Ք. IV, 98): Այս մասին պատմիչը ավելի մանրամասն է պատմում. «Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կրատերների [կարաս.- Ռ.Ն.] գարուց պատրաստված գինի, որի երեսին [կարասի շրթներին հավասար, ամանի բերանին.- Ռ.Ն.] լողում էին գարու հատիկներ. կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգնի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին. իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ընպելիք էր» (Ք. IV, 97): Սա գարեջրի վերաբերյալ մեզ հայտնի առաջին գրավոր հիշատակությունն է: Նա նաև վկայում է, որ հայերը ունեին գինին հորելով պահելու սովորույթ (Ք. IV, 98):

Փաստորեն Հայաստանը գյուղատնտեսական մթերքներով հարուստ երկիր էր, այդ իսկ պատճառով Քսենոփոնն ու իր հայրենակիցները սննդամթերքի հայթայթման գործում առանձին դժվարությունների չեն հանդիպել: Նրանք առատորեն գտել են մսացու անասուններ, կենդանական ճարպեր, քնջութի և նուշի յուղ, հաց, անուշահամ գինիներ, մրգեր, ընդեղեն, անասնակեր և այլն: Պատմիչը հետաքրքիր տեղեկություն է թողել հայերի կողմից օգտագործվող մսամթերքի տեսակների և հույներին անծանոթ գարեջրի մասին:

Մթերքների այս թվարկումը ցույց է տալիս հին Հայաստանում երկրագործության զարգացման համեմատաբար բարձր աստիճանը և նրա բազմաճյուղությունը: Հացահատիկային բույսերի մշակումից զատ՝ լայնորեն տարածված էր խաղողագործությունը, որի զարգացման բարձր աստիճանի մասին են վկայում հատուկ մշակմամբ պատրաստված հին գինիները: Խմիչքի, ընդեղենի և տեխնիկական կուլտուրաների գոյությունը ևս ապացույց է վերելք ապրող երկրագործության, քանի որ այդպիսի կուլտուրաների մշակումը ոչ միայն աշխատատար էր, այլև պահանջում էր դարավոր փորձ և մեծ հմտություն: Քսենոփոնի տեղեկությունները նկատի ունենալով՝ Գ. Տիրացյանը գրում է, թե V-IV դարերի սահմանագծին Հայաստանի երկրագործության, նրա զարգացման աստիճանի, ինչպես նաև մշակվող կուլտուրաների բազմազանության մասին տեղեկությունները փոխարձագանքում են ուրարտական երկրագործության մասին մեզ հայտնի թե՛ գրավոր և թե՛ հնագիտական հարուստ տվյալների հետ¹⁷²:

¹⁷² Գ. Տիրացյան, «Անաբասիսը» և Հայաստանը, էջ 234:

Քսենոփոնի հաղորդման համաձայն հայերի տնտեսության երկրորդ ճյուղը եղել է անասնապահությունը: Պատմիչը զանազան առիթներով ցույց է տվել, որ զարգացած է եղել ձիաբուծությունը՝ հեծելազորը սեփական ձիերով ապահովելու, ինչպես նաև Պարսկաստանին ձիահարկ տալու նպատակով: Գեղջավազին ուղղված հարցին, «թե ձիերը ո՞ւմ համար են բուծվում, նա պատասխանեց. թե՛ [պարսից] արքայի համար իբրև տուրք» (Ք. IV, 98): Քսենոփոնը նաև հաղորդում է, որ գեղջավազը իրեն և մյուս զորավարներին ու վաշտապետներին ևս տվել է մեկական մտրուկ: «Այստեղ [նկատի ունի Հայաստանը,- Ռ. Ն.] ձիերը փոքր էին պարսկականներից, բայց ավելի աշխույժ: Այստեղ իսկ գեղջավազը սովորեցրեց ձիերի և գրաստների ոտքերին, ձյան միջով գնալիս, պարկեր փաթաթել. քանզի առանց պարկերի անասունները մինչև փորը խրվում էին ձյան մեջ» (Ք. IV, 98),- գրում է պատմիչը: Հերոդոտոսը հայերին անվանում էր «անասուններով հարուստ ժողովուրդ», իսկ Քսենոփոնը թվարկում էր իր տեսածը հայերի տներում՝ կով, այծ, ոչխար, ձի, թռչուններ, այնուհետև՝ ոչխարի, այծի և խոզի միս, խոզի ճարպ: Սովորություն է եղել ձմռանը պահել մսացու անասուններ, որոնք անկասկած ծառայել են թե՛ սննդի ապահովման և թե՛ վաճառահաման ու ապրանքափոխանակման համար: Անասնապահության զարգացածությունը երևում է և այն բանից, որ, ըստ Քսենոփոնի՝ արմենները կարիք ունեին լրացուցիչ արոտների:

Քսենոփոնի հիշատակություններից երևում է, որ հայերի զբաղմունքներում կարևոր տեղ էր գրավել նաև որսորդությունը: Հայկական գյուղերից մեկի գյուղապետի փեսան, ըստ Քսենոփոնի, զնացել էր նապաստակ որսալու, իսկ հայերի տներում հույները ճաշակել են որսի միս (Ք. IV, 97):

Քսենոփոնը հիշատակում է նաև Հայաստանի արհեստավորներին՝ հյուսներին և քարագործ վարպետներին:

Ուշադրության են արժանի Հայաստանում ներքին և արտաքին առևտրի գոյության մասին եղած թռուցիկ ակնարկները:

Քսենոփոնի տեղեկություններից իմանում ենք նաև հնագույն ժամանակներում երթուղիների անցման ժամանակի և նրանց հեռավորության որոշման չափանիշների մասին: Այսպես, խոսելով Հայաստանով և այլ երկրներով հունական բազմահազարանոց բանակի նահանջի մասին՝ տարբեր առիթներով բազմիցս շեշտում է, թե քանի փարսախ (փարսախը մոտ 5 կմ է) ճանապարհ անցան և թե դա քանի

օրվա ճանապարհ էր: Նա գրում է. «Այստեղից գնացին երկու օրվա ճանապարհ, տասը փարսախ, մինչև որ անցան Տիգրիս գետի ակունքները: ...Այնուհետև գնացին երեք օրվա ճանապարհ, 15 փարսախ մինչև Տելեբոաս (Մեղրագետ, այժմ՝ Կարասու) գետը, ապա՝ նրանք գնացին յոթ օրվա ճանապարհ, օրական հինգ փարսախ» (Ք. IV, 27, նաև՝ 41, 48-50, 74, 79, 82, 93) և այլն¹⁷³:

Քսենոփոնի երկում որպես երկարության չափի միավոր են արձանագրվում նաև գրկաչափը, որը հավասար է մոտավորապես 1.85 մետրի, և ոտնաչափը¹⁷⁴:

Քսենոփոնը խոսում է հայերի կողմից հյուրերին անվտանգ, ապահով ճանապարհելու, վտանգավոր և անծանոթ տեղանքներում ուղեցույց-առաջնորդ տրամադրելու սովորույթի մասին: Նկարագրելով Հայկական լեռնաշխարհով հունական զորքերի նահանջը՝ Քսենոփոնը գրում է, որ ինքը «գյուղի ավագին սեղանակից դարձրեց ու նրան խորհուրդ տվեց չվիատվել, ասելով, որ նա իր զավակներից չի զրկվի և փոխարենը հեռանալիս իրենք նրա տունը կլցնեն մթերքներով, եթե նա լավ ծառայություն մատուցի զորքին և դառնա ուղեցույց, մինչև իրենք կհասնեն մի այլ ժողովրդի երկիր: Եվ գեղջավազը խոստացավ այդ... Քսենոփոնը գյուղապետին որպես ուղեցույց հանձնեց Խեյրիսոփոսին, իսկ նրա տնեցիներին բաց թողեց, բացի նոր չափահաս դարձող որդուց» (Ք. IV, 98-99):

Մեծ հետաքրքրություն են ներկայացնում Հայաստանի աքեմենյան ժամանակաշրջանի նյութական մշակույթի ուսումնասիրման համար Քսենոփոնի հաղորդած տեղեկությունները գյուղական բնակարանաշինության, զենքերի և կենցաղային առարկաների մասին: Ըստ Քսենոփոնի վկայության՝ թե Արևելյան, թե Արևմտյան Հայաստանում կային բազմաթիվ մեծ ու փոքր շեն ու ավեր գյուղեր, որոնց միջով անցնում էին հույները: Մեծ գյուղերում նստում էին թագավորները, Արևելքում՝ Օրոնտը, իսկ Արևմուտքում՝ Տիրիքազը: Մեծ գյուղերից Արևելյան Հայաստանում նշանավոր է եղել նաև սատրապանիստը: Մյուս գյուղերը, որոնք կառավարվում են իրենց առանձին իշխաններով կամ գյուղապետներով («քոմարիսես») ցրված էին երկրի զանազան կողմերում: Մեծ ու փոքր գյուղեր, ըստ մեծի մասի, շինված էին ջրառատ տեղերում, գետի ափերին: Բայց քանի որ այդ գյուղերը թշնամիների կողմից

¹⁷³ Հմմտ. **7. Մանանդյան**, քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 322, 384:

¹⁷⁴ Նույն տեղում, էջ 27, 48:

միշտ ենթակա էին լինում ամեն տեսակ ասպատակությունների, կողոպուտի ու հափշտակությունների, ինչպես, օրինակ՝ անում են Քսենոփոնի իշխանության տակ եղած զորքերը, պարզ է, որ պետք է շինված լինեին ամուր տեղերում, լեռների վրա: Մեծ գյուղերն, ինչպես երևում է նկարագրածից, ունեցել են ամրության ու պաշտպանության համար շինված բերդեր, կամ թե շատ տների վրա եղել են աշտարակներ, ինչպես սատրապանիստ գյուղում: Հայաստանի հարավային սահմաններով անցնելիս, «այն գյուղը, ուր նրանք հասան, մեծ էր և ուներ ապարանք սատրապի համար, իսկ տների մեծագույն մասի վրա կային աշտարակներ» (Ք. IV, 93): Քսենոփոնի այս նկարագրությունը ենթադրել է տալիս, որ այս խոշոր բնակավայրը եղել է Հայաստանի հնագույն քաղաքներից մեկը: Այն, որ Քսենոփոնը դա համարում է գյուղ, պետք է բացատրել այն հանգամանքով, որ հելլենները քաղաք չէին համարում այն բնակավայրը, որը շրջապատված չէր պարսպով:

Գյուղական տների ակնարկային նկարագրությունից երևում է, որ Հայկական լեռնաշխարհի հարավային շրջանների տները տարբերվում էին կենտրոնական և հյուսիսային շրջաններից: Այդ առանձնահատկությունը սահմանամերձ շրջաններում բացատրվում է պաշտպանական նկատառումներով: Այդպիսի աշտարակավոր բնակարանները, որ կոչվում էին քոշք, բնորոշ էին Սասունին, նաև Պոնտական Հայաստանին: Դրանք 2-3 հարկանի ամրոցատիպ տներ էին, որոնց առաջին հարկը կթու և լծկան անասուններին էր հատկացվում, երկրորդը՝ մարդկանց, իսկ երրորդը, որ կոչվում էր **ռոշ**, գյուղատնտեսական մթերքների պահպանմանը և վտանգի դեպքում՝ պաշտպանվելուն¹⁷⁵: Ըստ երևույթին, նման տների կառուցվածքի ակունքները պետք է որոնել ուրարտական ճարտարապետության մեջ, որին քաջ ծանոթ էին աշտարակաձև կառույցները, այդ թվում, հավանաբար, աշտարակաձև բնակարանը¹⁷⁶:

Առանձնապես հետաքրքրական է տների նկարագրությունը: Հայկական լեռնաշխարհի կենտրոնական և հյուսիսային մասերի տները, ըստ Քսենոփոնի գետնափոր էին. «Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը փորված էր [գետնի միջով], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով»: Տներում կային այ-

¹⁷⁵ Այս մասին մանրամասն տես *Ռ. Նահապետյան*, Աղձնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004, էջ 43-51 և գրչանկարների հավելված, էջ 222-227:

¹⁷⁶ Տես *Пуотровский Б. Б.*, Искусство Урарту, М., 1962, ցկ. 55, 56:

ծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ծագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով» (Ք. IV, 97):

Այս, ինչպես նաև Հայկական լեռնաշխարհի ուշ բրոնզի և վաղ երկաթի ժամանակաշրջանի հնագիտորեն ուսումնասիրված տների մեջ հետազոտողները տեսնում են հայկական ժողովրդական տան վաղ օրինակը, որը ճարտարապետական ավելի զարգացած ձևի՝ գլխատան նախատիպն է¹⁷⁷: Հարյուրամյակների ընթացքում գետնափոր բնակարանը վերածվեց գլխատան՝ իր տարբեր ծածկերով:

Ըստ Գ. Ղազարյանի ուսումնասիրության՝ «Եթե այդ նկարագրված տների հետ համեմատելու լինենք ներկայումս [XX դարի սկզբին] Շիրակում, Ապարանում և ուրիշ հայկական գավառներում գտնվող բազմաթիվ գյուղերի տները, կամ «օդա»-ները, որոնք նույն դերն են կատարում, ինչ կատարում էին Քսենոփոնի նկարագրածները, կը տեսնենք, որ հայ գեղջուկի տունը գրեթե նույնն է մնացել, ինչ եղել է դեռ այդ խավար ու մութ դարերում: Իսկ թե ի՞նչ համգամանաքներ են նպաստել հայ գեղջուկին մնալու զարգացման նույն աստիճանի վրա, որ եղել է նախնական դարերում, հարցի պատասխանն, անշուշտ, պատմական կյանքի զանազան աննպաստ պայմաններում պետք է որոնենք»¹⁷⁸:

Այսպիսի տների մասին ուշագրավ աշխատություն ունի Փարսադան Տեր-Մովսիսյանը¹⁷⁹:

Քսենոփոնը հիշատակում է բազմաթիվ գյուղեր, սակայն չի նշում բերդերի, ամրոցների, քաղաքների մասին, հավանաբար պատճառը այն է, որ նահանջող զորքը խուսափել է մոտենալ խոշոր բնակավայրերին, որոնք դիմագրավելու մեծ կարողություն ու բնակչություն ունեին:

Նա ուշագրավ տեղեկություններ է թողել հայոց տարազի և զարդարանքի առանձնահատկությունների մասին: Այսպես, Քսենոփոնը գրում է արմեն երեխաների «բարբարոսական զգեստների» մասին (Ք. IV, 98): Հայաստանով նահանջող հույների մասին Քսենոփոնը հաղորդում է, որ զինվորները իրենց ոտնամանները փոխարինել էին տեղականով: «Հին ոտնամանները մաշվելուց հետո, - գրում է նա, - նրանց (հույների) ոտնամանները գեղջկական էին՝ եզան նոր կաշուց

¹⁷⁷ Գ. Տիրացյան, «Ամաբասիսը» և Հայաստանը, էջ 234:

¹⁷⁸ Տե՛ս Գր. Ղազարյան, Հայաստանը և հայերը ըստ Քսենոփոնի, Թիֆլիս, 1908, էջ 21:

¹⁷⁹ Տե՛ս Փարսադան Տեր-Մովսիսյան, Հայ գիւղական տունը, թարգմ. հ.բ.վ. Պիլեզիկ-Շեան, Վիեննա, 1894:

պատրաստված» (Ք. IV, 96): Հայերի հետ հարաբերությունները լավացնելուց հետո հայերի խորհրդով լեռնաշխարհի ծյունառատ վայրերը կտրել-անցնելու և ծյան մեջ չխրվելու համար հույները հագել էին հյուսածո ոտնամաններ կամ հաստ թաղիքով փաթաթել են անասունների և իրենց ոտքերը: Ակնարկել է նաև Տիգրանի խույրի մասին: Նրա մի ակնարկից պարզվում է, որ հայ ունևոր կանայք զարդեր կրելու սովորություն են ունեցել: Իսկ Կյուրոսի հետևյալ խոսքից երևում է, որ զարդեր կրել են նաև տղամարդիկ: «Դու ուղարկիր որդուդ զորքի մեջ (ասում է Կյուրոսը հայոց թագավորի կնոջը) ու ոսկե դրամներով ամենագեղեցիկ կերպով նրան զարդարիր»:

Պատմիչը որոշ տեղեկություններ է հաղորդում նաև Հայկական լեռնաշխարհի բնակիչներից խալուբների տարազի և զենքի մասին. «Ունեին վուշից պատրաստած զրահ, որը պաշտպանում էր մինչև փորը, իսկ զրահածայրերին կային խիտ հյուսքով քուղեր: Ունեին նաև տռնապաններ և սաղավարտներ, գոտուց կախված դաշույն՝ լավադեմոնական կեռ դանակի (մանգաղաձև փոքր դանակ) մեծությամբ, որով սպանում էին ում որ հաղթել կարողանային, և կտրելով գլուխները, վերցնում էին ու գնում. և նրանք երգում էին ու պարում, երբ թշնամու տեսադաշտում էին գտնվում: Ունեին նաև մեկ ծայրով միզակ՝ հինգ կանգուն երկարությամբ: ...Իսկ մակրոնները ունեին հյուսկեն վահաններ և միզակներ և մազից պատրաստած խիտոններ...» (Ք. IV, 105): Քսենոփոնը երկու ակնարկ է անում նաև հայկական գեղարվեստական մետաղագործության, մասնավորապես արծաթյա ըմպանակների մասին (Ք. IV, 3, 4, 24, 25, 98):

Հետաքրքիր է հայ զինվորների ճարպկության նկարագրությունը. «Նրանք այնքան ճարպիկ էին, որ ամբան մոտիկ լինելիս կարողանում էին փախչելով ազատվել. քանզի նրանք ուրիշ ոչինչ չէին կրում, բացի աղեղներից ու պարսատիկներից: Նրանք գերազանց նետածիգներ էին, ունեին համարյա երեք կանգուն [1 կանգունը մոտավորապես մեկ արշին կամ 1 մետր է] երկարությամբ աղեղներ և ավելի քան երկու կանգուն երկարությամբ նետեր: Նետարձակման ժամանակ նրանք լարը ձգում էին, ձախ ոտքը դնելով աղեղի ցածի ծայրի վրա: Նրանց արձակած նետերը ծակում էին վահաններն ու լանջապանակները: Հելլենները, երբ այդպիսի նետեր էին ձեռք բերում, ապա կաշվե փոկեր հարմարեցնելով դրանց՝ օգտագործում էին տեգի փոխարեն» (Ք. IV, 88):

Հիշատակվում է նաև հայոց կառավարչի բանակում ծառայող պարսիկ զինվորի կրած զենքն ու զրահը՝ պարսկական աղեղ, կապարձ և երկսայր տապար, ինչպիսին ունեն ամազոնուհիները (առասպելական կին ռազմիկներ, որոնց հայրենիքը հույները համարում էին Կովկասը) (Ք. IV, 94): Հունական նահանջող զորքի զորատեսակներից մեկը կոչվում էր **պելտաստեր**՝ թեթև կլոր վահան (պելտե) կրող զինվորներ և **հոպլիտներ**՝ զորատեսակ, որտեղ ծառայողները կրում էին դաշույն, սուր և վահան (ծանրազեն հետևակային) (Ք. IV, 94):

Ուշագրավ են պատմիչի վկայությունները Հայաստանի հասարակական կարգի վերաբերյալ: Բնական է, որ հին Հայաստանի հասարակության ուսումնասիրողները իրենց ուշադրությունը սևեռում են այն կարևոր տվյալների վրա, որ թողել է Քսենոփոնը գյուղական կենցաղի և կացութաձևի վերաբերյալ:

Այդ վկայությունների առաջին լուրջ ուսումնասիրողը եղել է Նիկողայոս Ադոնցը: Նա հանգել է այն եզրակացության, որ Քսենոփոնի նկարագրած Հայաստանի գյուղերը եղել են տոհմական, իսկ հիշատակված գյուղապետերը՝ կոմախներ՝ տոհմի առաջնորդներ, տոհմապետեր և այլն:

Հ. Մանանդյանը այս հարցում հիմնականում համերաշխ էր Ն. Ադոնցի հետ՝ նշելով աքեմենյան ժամանակաշրջանի հայկական գյուղերի տոհմական կազմակերպությունը: Ս. Երեմյանը և արդի հայագիտությունը բացահայտել են, որ Քսենոփոնի նկարագրած գյուղերը ոչ թե տոհմային կապերի վրա հիմնված միավորներ էին, այլ տարածքային և տնտեսական հատկանիշներով միավորված գյուղական համայնքներ: Քսենոփոնի նկարագրությունից իսկապես երևում է, որ մեծամուսնության վրա հիմնված ընտանիքները ունեին իրենց տները, անասունները, գյուղատնտեսական մթերքները: Այլ կերպ ասած՝ առանձին ընտանիքներ արտադրության միջոցների, սպառման առարկաների նկատմամբ մասնավոր սեփականության իրավունք ունեին: Նման ընտանիքների ամբողջությունից էլ հենց կազմվում էր գյուղական այն համայնքը, որը միավորված էր նախ և առաջ տնտեսական և ապա միայն (այն էլ մասնակիորեն) ազգակցական կապերով: Սակայն այդ վկայություններից էլ երևում է, որ գյուղական համայնքների մեջ դեռ շատ ուժեղ էին տոհմային համայնքի վերապրուկները¹⁸⁰:

¹⁸⁰ Տե՛ս 4. *Տիրացյան*, Հայաստանը Աքեմենյան Պարսկաստանի տիրապետության ներքո, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971, էջ 457-463:

Քսենոփոնը զգալի տեղեկություններ է հաղորդում նաև իին հայկական ընտանիքի և ժառանգական իրավունքի մասին: Նա իր մյուս գրքում՝ «Կյուրոպեդիա»-ում արմեն թագավորի ընտանիքի՝ լեռներում թաքնվելու, Կյուրոսի կողմից գերվելու և ապա դատվելու մասին խոսելիս բացահայտում է այդ գերդաստանի ներքին կապերը: Ներկայացնենք Կյուրոսի և հայոց թագաժառանգի երկխոսությունը.

«Դու ևս, ո՛վ Տիգրան,- ասում է Կյուրոսը,- ասա՛ ինձ, որքան կվճարես, որպեսզի ստանաս կնոջդ: Եվ Տիգրանը (թագավորի որդին), որը նոր էր ամուսնացել և շատ էր սիրում իր կնոջը, ասաց՝ «Ես, ո՛վ Կյուրոս, իմ անձը գլխովին կտամ, որպեսզի իմ կինը երբեք ծառա չլինի»:

«Դու, Տիգրան, – ասում է Կյուրոսը, – ա՛ն կնոջդ, ես չեմ համարում, որ նա գերի է բռնվել, որովհետև դու երբեք չես լքել մեզ: Դու ևս, ո՛վ Արմենների թագավոր, տար կնոջդ ու զավակներիդ առանց որևէ վճարի, որպեսզի նրանք տեսնեն, որ ազատ վերադառնում են քեզ մոտ»¹⁸¹: Այս խոսակցությունից հետո խանդից դրդված թագավորազն Տիգրանը իր կնոջը հարց է ուղղում, թե «Իսկ քեզ, ո՛վ, Արմենուհի, նույնպես Կյուրոսը գեղեցիկ թվաց»:

«Վկա է Ձևը (Յ. Մանանդյանը թարգմանել է «Արամազդ», հավանաբար այն պատճառով, որ հայկական միջավայրում Արամազդը համարվում է գերագույն աստված, ինչպես հույների մոտ՝ Ձևը),- ասաց կինը, որ ես նրան չէի նայում»: «Հապա ո՞ւմ էիր նայում,- հարցրեց Տիգրանը: - Վկա է Ձևը,- ասաց կինը,- որ ես նրան էի նայում, ով ասաց, թե իր կյանքը կտա, որ ես ստրուկ չլինեմ»¹⁸²: Ուրիշ ուղղակի վկայություն գրավոր աղբյուրներում Արամազդ աստծո պաշտամունքի վերաբերյալ առ այսօր հայտնի չէ:

Ուշագրավ է, որ թագավորազն Տիգրանը Կյուրոսի բանակ է մեկնում կնոջ հետ: Իսկ կինը, որ արիաբար կռվել էր, Կյուրոսի կողմից զարդ-նվերների է արժանացել: Ակնարկ կա նաև մահվան ու հուղարկավորության՝ հայերի հեթանոսական սովորույթի վերաբերյալ: Երբ արքայազն Տիգրանը լսեց հորը՝ հայ-արմենների արքային մահապատժի ենթարկելու մասին, «պոկեց խույրը գլխից և սկսեց զգեստը պատառոտել, իսկ կանայք աղաղակելով ճանկռոտում էին երեսները՝ կարծելով, որ արդեն կորստյան էր մատնվել իրենց հայրը և կորչում էին իրենք ևս» (Ք. IV, 97):

¹⁸¹ **Քսենոփոն**, Կյուրոպեդիա, գիրք երրորդ, գլ. առաջին, թարգմանությունը և ծանոթագրությունները Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 2000, էջ 105-106:

¹⁸² Տե՛ս նույն տեղում:

Ուշագրավ է նաև աստվածներին զոհաբերություն կատարելու հունական մի սովորության վերաբերյալ ակնարկը. Կենտրիտես (Արևելյան Տիգրիս) գետի հաջող գետանցը ապահովելու համար «Քսենոփոնը իսկույն հեղում կատարեց ու [նրանց ուղեկցող] պատանիներին և թելադրեց լցնել բաժակները և մաղթանք անել երազները և գետանցը հայտնած աստվածներին ու ցանկալ, որ իրենց բոլոր ձեռնարկումները բարեհաջող վախճան ունենան» (Ք. IV, 90): Հին Հունաստանում հեղում կատարելը աստվածներին ամարյուն զոհ մատուցելու ձև էր, որը հաճախ կատարում էին դեռևս Հոմերոսի հերոսները: Այսպիսի դեպքերում բաժակի մեջ լցրած գինու մի մասը գետին էին թափում, միաժամանակ աստվածներին մաղթանք մրմնջում և աղոթում:

Գետը անվտանգ անցնելու համար հույների զորավարը [Խելյրի-սոփոսը] կատարում է ևս մեկ ծիսական արարողություն. «զլխին պսակ դրեց (սպարտական կարգերը գովաբանող իր երկում Քսենոփոնը վկայում է, որ թշնամու դեմ գնալիս սպարտացի մարտիկները զլուխները զարդարում էին պսակով), զգեստները հանեց, զենքերը վերցրեց և հրամայեց մյուս բոլորին ևս նույնը անել»: «Մինչ այդ գուշակները զոհ մատուցեցին գետի վրա»: Մյուս ժողովուրդների նման հույները ևս աստվածացրել են բնության տարբեր երևույթները, այդ թվում նաև գետերը: Այս դեպքում հույները զոհ են մատուցում տվյալ գետի աստծուն, որպեսզի սա հեշտացնի իրենց գետանցը:

Ինչպես նշեցինք, Հայաստանով անցած Քսենոփոնի գրառումները, տպավորություններն ու տեղեկությունները «Անաբասիսից» բացի տեղ են գտել Կյուրոս Մեծի՝ Աքեմենյան տերության հիմնադրի վարքում՝ «Կյուրոպեդիայում»: «Կյուրոպեդիայի» բավականին ծավալուն բաժինը, որ վերաբերում է Հայաստանին, հայոց պատմության և մշակույթի համար ևս կարևոր արժեք ունի: Այստեղ հանդես է գալիս Ք. ա. VI դարի կեսերի հայկական թագավորությունը, տեղեկություններ է տրվում հայկական զորքի՝ այրուծիու և հետևակի թվաքանակի մասին, արքունի հարստությունների, Մարաստանի և հարևան այլ երկրների ու ժողովուրդների հետ հայերի փոխհարաբերությունների մասին և այլն: Ինչպես «Անաբասիս»-ում, այնպես էլ «Կյուրոպեդիա»-ում Հայաստանին և հայերին վերաբերող վկայությունները ոչ միայն արժանահավատ են, այլև շատ հաճախ՝ եզակի: Այսպես, ըստ Քսենոփոնի հայերի զինված ուժերը բաղկացած էին հեծելազորից և հետևակից. հեծելազորը հասնում է 8000-ի, իսկ հետևակը՝ 40.000-ի, տեղեկություններ, ո-

որոնք լիովին համընկնում են Մովսես Խորենացու հաղորդած տվյալներին: Կասկածից վեր է, որ պատմիչ-գորավարի տեղեկությունների մեծ մասը Քսենոփոնը քաղել է Հայկական լեռնաշխարհով անցնելիս, այն տեղեկությունների հետ միասին, որոնք «Անաբասիսի»՝ Հայաստանին վերաբերող բաժնի հիմքն են կազմում և Քսենոփոնի անուրանալի ավանդն են հայ ժողովրդի պատմության աղբյուրագիտական զանձարանի հարստացման գործում: Թեև ժամանակակից պատմագիտությունը ժխտում է «Կյուրոպեդիայի» աղբյուրագիտական արժեքը, սակայն կասկածից դուրս է, որ այնտեղ ներկայացվող տեղեկությունների մեծ մասին Քսենոփոնը ականատես է եղել, ուստի դրանք հայ ժողովրդի պատմության, կյանքի բոլոր կողմերի համար անուրանալի աղբյուրագիտական արժեք ունեն¹⁸³: Այսպես, Հ. Մանանդյանը ասում է, որ «Կյուրոպեդիայի» հաղորդած տվյալները արժանի են ուշադրության, քանի որ դրանք հազվագյուտ դրական վկայություններ են արմենների մասին Ք. ա. VI դարի առաջին կեսում¹⁸⁴: Ըստ Ի. Մ. Դյակոնովի՝ «Կյուրոպեդիայի»՝ Հայաստանին վերաբերող մասի հիմքում ընկած են Ք. ա. VI դարի պատմական իրական դեպքերը¹⁸⁵:

ՄՏՐԱԲՈՆ

Հույն նշանավոր պատմագիր ու աշխարհագիր Ստրաբոնը ծնվել է Ք.ա. մոտ 63թ. Պոնտոսի Ամասիա քաղաքում: Ստրաբոնը գրել է «Պատմական հիշատակարաններ» վերտառությամբ մի աշխատություն՝ բաղկացած 43 գրքից, սակայն այն չի պահպանվել: Մոտավորապես Ք.ա. 7 թ. նա սկսում է աշխատել հռչակավոր «Աշխարհագրության»¹⁸⁶ վրա և ավարտում այն մահից քիչ առաջ՝ Ք.հ. 20 թվականին: «Աշխարհագրությունը» բաղկացած է 17 գրքից: Ստրաբոնը այստեղ, փաստորեն, շարադրում է Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի երկրների ֆիզիկական ու պատմական աշխարհագրությունը, ինչպես նաև հաղորդում է բազմափարուստ տեղեկություններ այդ երկրների քաղաքական պատմության ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ:

¹⁸³ Գ. Տիրացյան, «Անաբասիսը» և Հայաստանը, էջ 238-239:

¹⁸⁴ Տես Դ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Ա, էջ 39:

¹⁸⁵ Տես Ի. Մ. Դյակոնով, История Мидии. М.-Л., 1956, էջ 350-351:

¹⁸⁶ Ստրաբոն, Աշխարհագրություն (քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան), Երևան, 1940 (այսուհետև՝ Ստր. և էջը):

Ստրաբոնի «Աշխարհագրությունը» անգնահատելի ու ճշմարտապատում աղբյուր է նաև Հայաստանի պատմության, աշխարհագրության և հատկապես տնտեսամշակութային բնութագրի ուսումնասիրության համար: Որոշ դեպքերում նրա հաղորդած տեղեկությունները եզակի են:

Մեզ հետաքրքրող հարցերի շրջանակից Ստրաբոնը անդրադարձել է հայ ժողովրդի ծագումնաբանության հարցին: Նա համամիտ էր իր ժամանակներում տարածված գտած այն վարկածի հետ, թե արմեններն ունեն թեսսալական ծագում, և որ նրանց անվանադիր նախնին եղել է Արմենոս Թեսսալացին: Վերջինս առասպելական անձնավորություն է, Յասոնի (Թեսսալիայի արքա Էսոնի որդին: Ըստ դիցաբանության «Արգո» նավով ճանապարհորդեց Կողքիս (Կոլխիդա)^{*} ոսկեգեղմը բերելու) զինակիցը, արգոնավորդների՝ արշավի մասնակիցը: Ըստ առասպելի նա Յասոնի մահից հետո հավաքեց նրա ցրված զորքերը և անցնելով Հայաստան՝ բնակություն հաստատեց Եկեղիք ու Սպեր գավառներում, որից էլ իբր ծագել է երկրի «Արմենիա» և ժողովրդի «արմեն» անվանումները: «Ասում են, թե Յասոնը՝ Թեսսալացի Արմենոսի հետ դեպի Կողքիս նավարկության ժամանակ [= Արգոնավորդաց արշավանքին] առաջացել է մինչև Կասպից ծով, և անցել է Վրաստանը, Աղվանքը և Հայաստանի ու Մարաստանի շատ մասը, ինչպես վկայում են Յասոնականքը (Յասոնի պաշտամունքին նվիրված տաճարներ և սրբավայրեր) և շատ բազմաթիվ հիշատակարաններ (հուշարձաններ): Ասում են նաև, թե Արմենոսը Արմենիոն քաղաքից էր, իր անունը թողել է Հայաստանին» (Ստր., 33):

Թեսսալական վարկածի հեղինակներն են Թեսսալիայի Փարսալա և Լարիսա քաղաքներից դուրս եկած Ալեքսանդր Մակեդոնացու զորահրամանատարներ Կիրսիլոս Փարսալացին և Մեդիոս Լարիսացին: Այս հեղինակների գրվածքը մեզ է հասել միայն Ստրաբոնի միջոցով (Ստր., 33). «12. Ահա մի հին ավանդություն այս ազգի [արմենների] մասին: Արմենոսը թեսսալական Արմենիոն քաղաքից, որը գտնվում է Փերեի և Լարիսայի (Հունաստանի Թեսսալիա մարզի քաղաքներ) միջև, Բոյբեիս (թեսսալական քաղաք) մոտ, ինչպես ասվեց, Յասոնի հետ արշավեց Արմենիա: Կյուրսիլոս Փարսալացին և Մե-

^{*} Արգոնավորդները այն 50 հերոս նավագնացներն են, որոնք Յասոնի առաջնորդությամբ «Արգո» կոչվող նավով արշավեցին Կողքիս՝ «ոսկե գեղմը» նվաճելու համար (Ստր., 9, 33):

դիոս Լարիսացին,¹⁸⁷ որոնք արշավել են Ալեքսանդրի հետ, (և) նրանց հետ եղողները ասում են, թե երկիրը նրա անունից կոչվել է Արմենիա: (Ասում են) նաև, թե Արմենոսի հետ եղողներից ոմանք բնակեցրել են Ակիլսենեն, որը նախապես Սոփենենի (Ծոփք) (իշխանության) տակ էր, մյուսները՝ Սյուսապիրիտիսը (ոմանց կարծիքով՝ Սպերի, ոմանց էլ՝ Շուբրիա-Աղծնիքի մասին է¹⁸⁸) մինչև Կալաքենե և Ադիաբենե» (Ստր. 33, 61):

Սակայն հայտնի է, որ արգոնավորդների առասպելը ձևավորվել է մինչհռոմեոսյան դարաշրջանում, մոտավորապես Ք. ա. XI-X դարերում, այսինքն՝ այն ժամանակ, երբ դեռևս պետական միավորում գոյություն չուներ, հետևաբար, Արմենոսի անունից չէ, որ պետք է բխեցնել «Արմենիա» հասկացությունը, որն ավելի ուշ շրջանի (մոտ Ք.ա. VII-VI դդ.) երևույթ է: Ուսումնասիրողների կարծիքով, առասպելի հեղինակները վերոնշյալ երկու հույն գորավարներն են: Սրանք մի առիթով այցելելով Հայաստան՝ ուշադրություն են դարձնում Հայաստանի և իրենց հայրենի թեսսալիայի որոշ տեղանունների հնչյունական և կենցաղային նմանություններին ու հանգում այն եզրակացության, որ հայերն ունեն թեսսալական ծագում: Նրանք փորձում են նաև բացատրել հայերի «արմեն» անվանումը և կամայականորեն այն կապում արգոնավորդ Արմենոս թեսսալացու հայտնի անվան հետ: Փաստորեն Ստրաբոնը առաջինն է, որ գրի է առել Արմենիա անվան ծագման վերաբերյալ ժամանակին տարածված ավանդությունը:

Ստրաբոնը թյուր ըմբռնում ունի նաև հայերի, ասորիների ու արաբների ցեղակից և լեզվակից լինելու մասին: «Հայոց, ասորիների և արաբների ժողովուրդը մեծ ցեղակցություն է լեզվի, կյանքի և մարմնի նկարագրի կողմից, անշուշտ, որովհետև իրար հարևան են: Հայտնապես Միջագետքում, որ այս երեք ժողովուրդներից է բաղկացած, նմանությունը ավելի շատ երևում է նրանց մեջ: Եթե իսկ կլիմայի պատճառով լինի զգալի տարբերություն հյուսիսայինների և հարավայինների և սրանց ու միջին սահմանի բնակիչների միջև, այնուամենայնիվ ընդհանուր հատկությունները գերակշռում են... Այդ ժողովուրդների անվանակոչությունը ենթադրել է տալիս նաև իրար

¹⁸⁷ Նրանք արմենների և Արմենիայի մասին թողել են մի գրվածք, որի փշրանքներն են հասել մեզ Ստրաբոնի միջոցով (տե՛ս «Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա», հ. 1, էջ 34):

¹⁸⁸ *Ս. Տ. Երեմյան*, Հայերի ցեղային միությունը Արմեն-Շուսարիա երկրում, Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՄ ԳԱ հրատ, հ. 1, էջ 243:

հետ նմանություն» (Ստր., 9): Ապա խոսում է Մարաստանի՝ «Հայոց, Ասորաց ու Պարթևաց թագուհիների հետ կնքված խնամիրության», վերոհիշյալ երկրների միջև խնամիական կապերի մասին (Ստր., 47): Այդ կենցաղամշակութային նմանություններից է համարվել տարագր: Նա գրում է. «Ասում են, թե հայկական զգեստը թեսսալական է, ինչպես այն երկար ներքնազգեստները (բնագրում՝ քիտոն) որ ողբերգությունների մեջ թեսսալական են կոչում և գոտևորում կրծքի վրա, ինչպես այն ռազմազգեստները, որով ողբերգակները պատկերում են թեսսալացիներին» (Ստր. 51):

Հունական կամ արևմտահայկական զգեստի որոշ նմանություն կամ սահմանակից շրջաններում դրա որոշ տեսակների փոխառության հնարավորությունը չի բացառվում: Ըստ Վ. Բդոյանի՝ XIX դարում Բարձր Հայքում և Հունաստանի որոշ շրջաններում նկատվում էին կանանց շրջազգեստների և զոգնոցների նմանություններ, որոնք հաստատում են դրա հավանականությունը: Սակայն ամբողջ Հայաստանի մասշտաբով զգեստները թեսսալական համարելու ստրաբոնյան վարկածը միանգամայն անընդունելի է: Չէ՞ որ մինչև XX դարի սկիզբը Հայաստանի բոլոր ազգագրական շրջաններում, թեկուզ հենց այն տարածքներում, ուր բնակվել են արմենները, հայկական տարազն ունեցել է ձևային տարբեր հատկանիշներ: Իսկ թե՞ Ստրաբոնի խոսքը վերաբերում է լոկ արմեններին, այստեղ արդեն գործ ունենք հենց այդ ցեղային միությանը բնորոշ զգեստի հետ¹⁸⁹:

Ստրաբոնը ուշագրավ տեղեկություններ է թողել նաև Հայաստանում և հարևան երկրներում գործածվող այնպիսի կոշիկների մասին, որոնց ներբանները սուր-սուր գամեր ունեին: Ճանապարհորդները այդ կոշիկներով դուրսնալիս հաղթահարում էին լեռնային ճանապարհների սառցապատ հատվածները: Հեղինակն ասում է, որ Կովկասում, Հայաստանում ու Ասորպատյան Մարաստանում սառցապատ լեռները բարձրացողների «կրունկների տակ դնում էին նաև փայտե անվակներ՝ տակին սուր գամերով» (Ստր. 33): Դրանք, ինչպես երևում է, ալպինիստների մարզակոշիկներ հիշեցնող ոտնամաններ են եղել: Ստրաբոնը վկայում է նաև հայերի մեջ «եզան անաղարտ կաշուց կոշիկների» [տրեխների.— Ռ. Ն.]՝ որպես ազանելիք օգտագործելու մասին:

¹⁸⁹ Տե՛ս Վ. Բդոյան, Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974, էջ 96-97:

Այսպիսի լեռներ բարձրացողները «իջնելու ժամանակ նստում էին կաշու վրա՝ իրենց բեռներով և ցած սահում, ինչպես անում են Ատրոպատյան Մարաստանում և Մասիոս լեռան վրա Հայաստանում» (Ստր. 33): Արմենները գտնվելով մարա-պարսկական քաղաքական ուղորտում՝ որպես նրանց հարևան, դաշնակից կամ իշխանությանը ենթակա, տարազային ձևերով նման էին միմյանց: Ստրաբոնը այդ մասին գրում է. «Շատ բաներում մարերի և հայերի սովորությունները նման են, որովհետև աշխարհներն էլ նմանվում են միմյանց... Ըստ այսմ այժմ պարսկական կոչված երկար զգեստը և նետածգության ու ձիավարության տենչը, թագավորների շուքն ու պերճությունը և հպատակների աստվածաշուք մեծարանքը մարերից են անցել պարսիկներին: Այսպես հագուստեղենի մեծագույն մասը հայտնապես, ինչպես ապարոշը (տիարա), խույրը (կիտարիս), թաղիքե գլխարկը (պիլոս), երկար թևերով վերարկուները և լայն տաբատները, որոնք ցուրտ և հյուսիսային երկրներին հարմար զգեստներ են, ինչպես և Մարաստանը, և ոչ բնավ հարավայիններին...» (Ստր., 51): «Սակայն նվաճյալների սովորությունները այնպես փառավոր և արքայական շքեղության հարմար թվեցան նվաճողներին, որ իրենց հասարակ և անզարդ շորերի փոխարեն վերցրին այդ կանացի շորերը և ծածկոցներով ծածկվեցին» (Ստր., 53): Մեկ այլ տեղ ուղղակի գրում է. «Մարերը և հայերը ցեղակից են...» (Ստր., 65): Ակնարկ ունի նաև Կորդուքի բնակչության՝ գորդիացոց շինարարական գործունեության մասին, որոնց անվանում է նշանավոր ճարտարապետ և պաշարողական գործերի մեջ փորձառու (Ստր., 91):

Ստրաբոնը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում հայերի տնտեսական զբաղմունքների մասին: Ըստ նրա Հայաստանն իր բարեխառն կլիմայական պայմաններով ամեն տեսակ բարիքների երկիր է, որտեղ ժողովուրդը առավելապես երկրագործությամբ է զբաղվում: Հայաստանում այգեգործությունն ու գինեգործությունը եղել են բավականաչափ զարգացած: Ստրաբոնը խոսելով Միջագետքի, Մարաստանի, Հայաստանի, Պարսկաստանի և Կարմանի մասին՝ գրում է. «Այս երկրներից յուրաքանչյուրը մեծավ մասամբ այգեշատ և գինեվետ է» (Ստր., 85): «Կասպյան դռներից ներքև՝ ցածր հողեր և ձորեր կան, որոնք շատ փարթամ և ամենաբեր են, բացի ձիթենուց: Տեղ-տեղ ձիթենի էլ է աճում, բայց [հողը] պարարտ չէ և չոր է» (Ստր., 51): Իսկ պատմական Կորդուքը ներկայացնում է որպես «արոտա-

վետ և այնպես բարեբեր, որ սնուցանում է նաև մշտադալար ծառեր և համեմունք, ինչպես **ամոմոն**. գտնվում է նաև նավթ և գանգեսյան կոչված քար, որով հալածում են օձերին» (Ստր., 91): Ստրաբոնը ուղղակի վկայում է, թե «Հայաստանի ներսում կան շատ լեռներ և լեռնադաշտեր, որոնց մեջ խաղողի այգին հեշտությամբ չի աճում. նաև շատ հովիտներ, ոմանք չափավոր, ոմանք էլ շատ բերրի, ինչպես Արաքսենի դաշտը (Արարատյան դաշտը), որով Արաքս գետն է հոսում... և սրա հետ Շակաշենը՝ սահմանակից Աղվանքին և Կուր գետին (հայկական գավառ Կուր գետի աջափնյա տարածքում, ներկայիս Գյանջայի շրջանը), հետո Գուգարքը: Ամբողջ այս երկիրը (Հայաստանը) առատ է հացահատիկներով, պտղատու այգիներով և մշտադալար բույսերով. և տալիս է նույնիսկ ձիթապտուղ, և թուզ՝ որ Վրաստանի բույսի նման պտղաբեր էր» (Ստր. 55, 58):

Այգեգործության տեսակետից ուշագրավ են Ստրաբոնի հետևյալ ակնարկները. Հայկական Միջագետքը համարում է այգեշատ և գինեվետ երկիր, Մելիտինեն դիտում է իբրև ամբողջապես բերքատու ծառերով ծածկված երկրամաս, որտեղ պատրաստվում էր ձեթ և մոմարիտ կոչված գինի, որը հունական գինիների մրցակիցն էր (Ստր., 69-71): Հայաստանը համարում է խաղողի, թզի, ցորենի ու մեղրի երկիր, ինչպես Վրաստանն էր և Մարաստանը: «Ասում են, թե մի որթատունկը տալիս է մի մետրետ (39 լիտր) գինի, մի թզենին 60 մեդիմնոս (հին հունական կշռի չափի միավոր) թուզ, իսկ հասկից ընկած մի ցորենը նորից է բուսնում, մեղուները ծառերի մեջ փեթակ են շինում, և մեղրը տերևներից հոսում է» (Ստր. 13):

Աշխարհագիր պատմիչը, խոսելով Կուր և Արաքս գետերի ջրաբքի, ոռոգող հատկությունների մասին, գրում է. «Այս երկրի (Վրաստան) և Հայաստանի մեջտեղով հոսելով [խոսքը Կուր գետի մասին է] անցնում է հույժ մարդաշատ դաշտավայրերով» որոնցում ժողովուրդը լավ երկրագործ է և խաղաղասեր. հագնվում է **Հայ և «Մարական ձևով»** (Ստրաբոն 29):

Ինչպես Քսենոփոնի, այնպես էլ Ստրաբոնի հաղորդման համաձայն՝ հայերի տնտեսության երկրորդ ճյուղը եղել է անասնապահությունը: Նա գրում է, թե «Հայաստանի գավառներից են նաև Փավենե (գուցե՝ Սյունիքը), Կոմիսենե (Փոքր Հայքին սահմանակից գավառ) և Որքստենե (հին հայկական գավառ), ուր բուծում էին պատերազմական ձիեր...» (Ստր., 55): Հայաստանը «շատ հարուստ է ձիաբուծական արոտներով, որոնք Մարականներից վատ չեն, այնպես որ Նե-

սեական ձիերը այնտեղից էլ էին բերում, որ գործ էին ածում պարսից թագավորները, և Հայաստանի սատրապը Պարսից թագավորին ուղարկում էր տարեկան 20.000 քուռակ՝ Միհրական տոների համար¹⁹⁰։ Արտավազդը Անտոնիոսին, բացի մյուս ձիավորներից, 6000 զրահապատ ձիավորների զորահանդես արավ, երբ նրա հետ Մարաստան արշավեց։ Այսպիսի հեծելազորք ոչ միայն Մարերն ու Հայերն են սիրում, այլև Աղվանները։ Նրանք էլ ունեին զրահավորված ձիեր» (Ստր. 35, 55, 61)։ «Հայաստանը, ինչպես ասվեց վերը, ձիաբուծության համար հատկապես հարուստ է արոտներով։ Կա մի մարգագետին... որի մեջ՝ ասում են թե 50.000 զամբիկ էր արածում Պարսից իշխանության ժամանակ։ Ասում են նաև, թե այս երանակները արքայական էին, և այն Նեսեական ձիերը, որ Պարսից թագավորները գործ էին ածում՝ նրանց ազնվության և մեծության պատճառով, դուրս էին գալիս այդ երանակներից և կամ Հայաստանից։ Սրանք առանձին ձև ունեին և ինչպես այժմ պարթևական կոչված ձիերը, տարբեր են Հունական և մեզ մոտ եղած այլ տեսակի ձիերից» (Ստր. 51)։ Ստրաբոնը վկայում է, որ հայկական մեծույցները փոքր են պարսկականից, սակայն բավական ուժեղ են և ծառայում են որպես հիմնական փոխադրամիջոց։

Ստրաբոնը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև կապի ամենահին ամրացման միջոցների մասին։ Հայտնի է, որ բնակավայրերում և ռազմական միավորումներում բարձունքների վրա աշտարակներ էին կառուցվում, շենքերի վրա դիտարաններ ստեղծվում։ Անասնապահների համար դիտակետ էին բնական բարձունքները։ Տեսողական ազդանշաններ էին՝ կրակը, ծուխը, ձեռքերի շարժումները, ծառերի ու ժայռերի վրա պայմանական նշաններ գծելը, քարերին պայմանական դիրք տալը, ձողեր տնկելը¹⁹¹։ Ահա այս վերջինի մասին Ստրաբոնը թողել է հանգամանալի տեղեկություն. «... ասում են թե Հայաստանի հյուսիսային հորձյան և Կամբյուսինե գավառներում հաճախ լեռնանցքներում և կիրճերում ամբողջ քարավաններ ձյունի տակ են մնում բուրքի ժամանակ։

Այդպիսի վտանգների համար նրանք ունենում են ձողեր, որ բարձրացնում են վերև՝ շունչի անցք բանալու և նշան տալու համար անցորդներին, որպեսզի օգնության հասնեին, ձյան տակից հանեին ու ազատեին» (Ստր. 57)։

¹⁹⁰ Արևելքի մի շարք ժողովուրդներ ձին համարում էին Արև աստծու սրբազան անասունը։

¹⁹¹ Տե՛ս 4. *Քրոյան*, Հայ ազգագրություն, էջ 65։

Ստրաբոնը խոսում է հայերի հարևանությամբ ապրող ժողովուրդներից աղվանների մասին, գովում է նրանց գեղեցկությունը, նկարագրում նրանց պարզ ու նահապետական վիճակը. չափ ու կշիռ չունեին և հարյուրից ավել հաշվել չգիտեին, սակայն պատերազմում են հետևակ և ձիավոր, թե թեթևագեն և թե զրահավորված՝ ինչպես հայերը (Ստր. 33):

Ստրաբոնը ակնարկ ունի նաև Հայաստանի և Մարաստանի միջով հնդկական և բաբելական ապրանքների ուղտերով կատարվող առևտրի և սրանով հարստանալով՝ ոսկեհուռ զգեստներ կրելու մասին (Ստր. 35):

Անդրադառնում է նաև չափ ու կշիռն հունական տարածության չափի միավոր **ստադիոնը**, որը հավասար է 177 մետրի, և **սքոյնոսը**՝ բառացի՝ պարան, որ հավասար է 40 ասպարեզի կամ 7 կմ-ի:

Ստրաբոնի «Աշխարհագրության» մեջ ակնարկ կա նաև բժշկության մասին: Հին հայկական դեղանյութերի շտեմարանում հատուկ տեղ ունեին սնդիկի միացությունները, այդ թվում՝ կարմիր ներկը: Ստրաբոնը վկայում է, որ Հայաստանում «կան նաև հանքեր, այդ թվում այնպիսիք, ուր արդյունահանվում է այսպես կոչված **սանդիկս** (կարմիր ներկ, սուսր), որը կոչվել է հայկական ներկ և նման է ծիրանիին» (Ստր. 61): Ավանդական հայկական բժշկությունը դարեր շարունակ օգտագործել է սնդիկի միացությունները, մասնավորապես՝ մաշկային հիվանդությունների դեպքում: Հետագայում արաբ հեղինակների հավաստմամբ Հայաստանից արդյունահանվում էր նաև մկնդեղը, որ կիրառվում էր նույնպիսի բուժական նպատակներով:

Ստրաբոնը նշում է, որ Կապուտան-Մանտիանե (նշանակում է Կապույտ) լիճը հարուստ է աղահանքերով և Մայոտիսից (Ազովի ծով) հետո մեծագույնն է աղի լճերի մեջ: Պատմիչը Վանա կամ Տոսպ լիճը անվանում է Թոպիտիս: Ըստ նրա լիճը պարունակում է բորակ, որով շորեր են վվանում ու մաքրում» (Ստր. 59): Այնուհետև շարունակում է, թե Տիգրիս գետը «Նպատ լեռից իջնելով՝ կտրում անցնում է այս լիճը, առանց խառնվելու ջրերին՝ հոսանքի ուժգնության պատճառով, որից էլ առել է իր անունը, ըստ որում մարերեն Տիգրիս նշանակում է նետածություն: Տիգրիսը ունի բազմատեսակ ձկներ, մինչդեռ լիճը միայն մի տեսակ [տառեխ] (Ստր. 59):

Ստրաբոնի երկում կան նաև ժողովրդագրական հետաքրքիր տեղեկություններ, ինչպես, օրինակ՝ Տիգրանակերտ մայրաքաղաքի հիմնադրման և այնտեղ հունական 12 քաղաքների՝ Տիգրան Մեծի

կողմից ավերման ու այդ քաղաքների օտար բնակչության վերաբնակեցման մասին (Ստր. 67):

Ստրաբոնը ուշագրավ հաղորդում ունի նաև Անահիտ դիցուհու պաշտամունքի վերաբերյալ: Հայտնի է, որ Անահիտի տոները կատարվել են տարին երեք անգամ. ապրիլին, երբ նախապատրաստվում էին երկրագործական աշխատանքները, և սկսվում էր վարուցանքը, ապա հուլիսի կեսերին՝ Վարդավառին, և հետո՝ օգոստոսի 21-ին՝ Նավասարդին, երբ սկսվում էր բերքահավաքը:

Անահիտը պտղաբերության, արգասավորության, մայրության, Լուսնի, Հայաստան երկրի հովանավորող աստվածուհին էր, որի պատվին կառուցում էին տաճարներ, որտեղ զոհաբերում էին երինջներ, որոնց ճակատները ջահաձև խարանում էին, որպեսզի օտարները չմոտենային: Տոներին քրմապետը հատուկ ձևով հայտնվում և առաջնորդում էր քրմերի և ուխտավորների մեծ զանգվածները: Անահիտի արձանը պտտում էին մեհյանի շուրջը և երգում ու աղոթում: Ապա սկսում էին պարահանդեսները, որոնց հետևում էին ազնվական դասերի անձնատվության ծեսերը՝ կուսությունն աստվածուհուն նվիրաբերելու սովորությունները, որոնց մասին Ստրաբոնը հետևյալն է հաղորդել. «Արդ, պարսից բոլոր սրբավայրերը պաշտում էին նաև մարերը և հայերը. բայց Անահիտի պաշտամունքը Հայոց մեջ գերազանցում է բոլորից. զանազան տեղեր նրա անվան տաճարներ են կանգնեցրած և հատկապես Եկեղիքում: Նշանակել են այդ տեղերում ստրուկներ և ստրկուհիներ. այս բոլորը զարմանալի չէ. այլ այն, որ ժողովրդի ամենանշանավոր մարդիկ իրենց կույս աղջիկներին նվիրաբերում էին աստվածուհուն, և նրանք ըստ օրինի երկար ժամանակ պոռնկում են աստվածուհու համար, որից հետո ամուսնանում են, և ոչ ոք անվայել չի համարում կենակցել նրանց հետ» (Ստր. 67): Ակներև է, որ բարձրաշխարհիկ օրիորդների կրոնական այս հետերիզմը, որ կապված էր Անահիտի պաշտամունքի հետ, շատ ավելի հին ժամանակներում գոյություն ունեցած խմբամուսնության մնացուկ էր: Պատմիչի այս վկայությունները ոչ միայն եզակի են, այլև այլ աղբյուրներում Անահիտին նվիրված վկայություններին հակասող: Հայ պատմիչների գործերում անձնատվության այդ սովորությունը չենք գտնում: Կան նման երևույթների վարագուրված ակնարկներ միայն: Հայ մատենագրության մեջ Անահիտը հայտնի է «Մեծ մայր», «Մեծ տիկին», «Հայոց աշխարհի բարերար» և այլ տիտղոսներով: Քրիստոնեության ընդունումով Անահիտ դիցուհու պաշտա-

մունքը անցավ Մարիամ աստվածամորը, հետևաբար նրան կրոնական հետերիզմ վերագրելը սրբապղծություն էր:

4. Մելիք-Փաշայանի համոզմամբ կրոնական այս հետերիզմը սերտ աղերսներ ունի պողաբերության և ծննդաբերության հետ և պատահական չէ, որ այն ծաղկում էր հատկապես մայր աստվածներին՝ Անահիտին, Իշտարին, Կիբելային նվիրված տաճարների շուրջը¹⁹²: Այստեղ երեխա չունեցող կանայք օտար տղամարդկանցից հղիանալիս այդ ունակությունը վերագրում էին Անահիտին¹⁹³: Վերոհիշյալ սովորությունների վերապրուկները պահպանվել են մինչև XIX դարի վերջերը, որոնք անժխտելիորեն ապացուցում են հետերիզմի աղերսը ծննդաբերության հետ¹⁹⁴: Գիտնականի կարծիքով Անահիտի պաշտամունքին առնչվող կրոնական հետերիզմը ապրել է զարգացման երկու փուլ, սկզբնական շրջանում պարունակել է կուսությունը զոհաբերելու գաղափարը (հավանաբար տղամարդիկ ևս, ինչպես քրմերը, զոհել են իրենց առնականությունը), իսկ երկրորդ շրջանում հետերիզմը վերափոխվում է՝ աղերսվելով ծննդաբերության և արգասավորության հետ, այսինքն կրոնական ազատ կենակցությունը կորցնում է իր նախկին բովանդակությունը՝ ստանալով նոր նշանակություն, դառնալով բեղմնավորման միջոց¹⁹⁵:

Ստրաբոնը հաղորդում է, որ Անահիտի մեխյանների շուրջը աղջիկները և կանայք ազատ սեռական հարաբերություններ էին ունենում, և ոչ ոք չէր խորշում նրանց հետ ամուսնանալուց. «...բոլորն էլ պոռնկում էին: Այնքան բարեհաճ են վերաբերվում այն հայ կույսերը իրենց սիրահարներին, որ ոչ միայն հյուրընկալություն են ցույց տալիս, այլև տալիս են նրանց նվերներ, հաճախ ավելի շատ, քան թե իրենք են ստանում, ըստ որում մեծահարուստ տներից են և լավ հասույթ ունեին: Բայց ամեն մի պատահական անձի հյուրասիրություն չեն ցույց տալիս, այլ հատկապես իրենց աստիճանի մարդկանց» (Ստր. 67-69): Այս մասին գրում է նաև Հերոդոտոսը՝ պատմելով Լյուդիացոց մասին. «Լյուդիայի աղջիկները մինչև ամուսնանալը ազատ

¹⁹² Տե՛ս 4. Մելիք-Փաշայան, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963, էջ 48:

¹⁹³ Նույն տեղում, էջ 51-52:

¹⁹⁴ Օրինակ՝ Խ. Սամվելյանը գրում է, թե Դարաշամբի Սուրբ Ստեփանոս վանքում կար ստորերկրյա անցք: Այդ անցքով ամուլ կանայք իրենց ամուսինների գիտությամբ որևէ օտար մարդու հետ սողալով գնում են ստորերկրյա աղբյուրի մոտ, որտեղ մի փոքր հանգիստ են առնում և սեռական հարաբերություններ ունենում: Հավատում էին, որ վանքի սուրբը բուժում է ամլությունը և կինը հղիանում է (տե՛ս Խ. Սամվելյան, Հին Հայաստանի կուլտուրան, հ. 1, Երևան, 1931, էջ 230):

¹⁹⁵ Տե՛ս 4. Մելիք-Փաշայան, նշվ. աշխ., էջ 54-55:

սեռական հարաբերություններ էին ունենում անահտական բնույթ կրող մեհյանների շուրջ...»: Ըստ նրա նույնանման սովորություններ են ունեցել նաև բաբելոնացիները. «Սակայն բաբելոնացիները ունեն հետևյալ նողկալի սովորությունը. ամեն մի տեղացի կին պարտավոր է իր կյանքում մի անգամ Ափրոդիտեի տաճարում օտարերկրացու հետ կենակցել... նման սովորություն գոյություն ունի նաև Կիպրոս կղզու մի քանի վայրերում» (Յ. գ Ա, 80-82):

Ըստ Մելիք-Փաշայանի իզուր են այն գիտնականների ջանքերը, որոնք փորձում են ժխտել կրոնական հետերիզմի գոյությունը, մանավանդ որ նրա գոյության մասին կան անժխտելի փաստեր ոչ միայն Հայաստանում, այլև Փոքր Ասիայում, Միջագետքում, Հռոմում, Հունաստանում և այլ վայրերում:

Այս առումով ուշագրավ մի սովորության նկարագրություն ունի Ստրաբոնը: Նա խոսում է սակերի՝ սկյութական ցեղի բագոսական (բագոս՝ աստված զինու և զեխության) մի օր ու գիշեր տևող տոնի մասին, ըստ որի սակերը այդ օրը «մերկ պարում են բագոսական զեխության մեջ», սովորույթ, որը հեղինակն անվանում է Սակյան տոն: Ըստ Ստրաբոնի այդ տոնը անցնում է պարսիկներին. «...հագնվում են սկյութական ձևով, խմում են միասին և զրգռում են իրար և իրենց խրախճանակից կանանց» (Ստր. 39): Նա նման սովորույթ է արձանագրել նաև Պոնտոսում (Ստր. 79):

Ստրաբոնը ուշագրավ հաղորդում ունի նաև հուղարկավորման հետ կապված ժողովրդական հավատալիքների վերաբերյալ: Նա գրում է. «Եթե դին ճանկում էին գիշատիչ թռչունները, ապա հանգուցյալը երանելի էր համարվում, եթե պատառոտում էին զագանները, ապա՝ նվազ պատվելի, դին անեղծ թողնվելու դեպքում ննջեցյալը դժբախտ էր համարվում»¹⁹⁶:

ԴԻՈՂՈՐՈՍ ՄԻԿԻԼԻԱՅԻ (Բ.ա. 90 – Բ.հ. 23 թթ.) – Հունական դասական պատմագրության աչքի ընկնող դեմքերից մեկն է: Նա հռչակվել է «Պատմական գրադարան» երկասիրությամբ, որը պահպանվել է ոչ ամբողջությամբ: Աշխատությունը ընդգրկում է Արևելքի երկրների, Եգիպտոսի, Հունաստանի և Հռոմի պատմությունը նախապատմական ժամանակներից սկսած մինչև 60–59 թվականները:

Հույն պատմիչը դեպի Հայկական լեռնաշխարհ աստուրական արշավանքների մասին հատվածում գրում է, թե «Շամիրամը (բնագրում՝

¹⁹⁶ Страбон, География, В 17 книгах, М., 1964, XI, 11, 8.

Սեմիրամիս) Հայկական լեռներից (նկատի ունի Հայկական Տավրոս լեռները) մի քար կտրեց, երկարությունը 130 ոտնաչափ, իսկ լայնքը և հաստությունը՝ 25: Նա զորքերի և եզների բազմաթիվ լծերով այդ քարը իջեցրեց դեպի գետը և այնտեղ բարձրացրեց լաստի վրա ու դրանով հոսանքն ի վար բերելով մինչև Բաբելոնիա, այն կանգնեցրեց ամենաերևելի ճանապարհի կողքին, որպես զարմանալի տեսարան այնտեղից անցնողներին: Ոմանք այն, իր ձևի պատճառով, անվանում են կոթող և համարում այսպես կոչված յոթ հրաշալիքներից մեկը»:

Այստեղ հարկ ենք համարում անդրադառնալ Շամիրամի (Շամմուրամաթ, Սեմիրամիս)՝ Ասորեստանի կիսաառասպելական-կիսապատմական թագուհու կերպարին: Ըստ ասսուրական առասպելի Շամիրամը Դերկետո աստվածուհու դուստրն էր, պտղաբերության և սիրո աստվածուհին: Ամուսնացել է Ասորեստանի Նինոս թագավորի հետ, որից ունեցել է Նինուաս անունով որդի: Շամիրամը կառուցել է Բաբելոն քաղաքը, գրավել է Եգիպտոսը, Եթովպիան և Լիբիան, իսկ այնուհետև արշավել է դեպի Բակտրիա ու Հնդկաստան: Հայտնի էր իր գեղեցկությամբ, վավաշտությամբ և պատերազմասեր բնավորությամբ: Նրա պաշտամունքը մտել է նաև Հայաստան և կապվել Արա Գեղեցիկի կերպարի հետ¹⁹⁷:

Դիոդորոս Սիկիլիացու «Պատմական գրադարան» երկասիրության մեջ պահպանվել է նաև Սատրապական Հայաստանի՝ Ք.ա. V դարի վերջի իրադարձությունների, մասնավորապես տասը հազար հույների նշանավոր արշավանքի ու նահանջի նկարագրությունը, որն առավել հանգամանորեն ներկայացված է Քսենոփոնի «Անաբասիսում»:

Աշխատությունում (գիրք XIV, գլուխ XXVII, 4–8-րդ հատվածներ) նշվում է, որ հելլենները յոթ օրում անցնում են կարդուխների (Կորդվաց) լեռները և հանդիպում լեռնային ցեղերի՝ «ռազմասեր, տեղանքին քաջածանոթ», «ռազմական արվեստով զբաղվող, վարժ պարսաստիկներով խոշորագույն քարեր արձակելու և հույժ խոշոր մետեր օգտագործելու մեջ: Նրանց մետերը երկու կանգունից ավելի երկար էին ու ծակում էին թե՛ վահանները, թե՛ լանջապանները, և ոչ մի զրահ չէր դիմանում դրանց հարվածներին»: Սրանք կարդուխներն էին, որոնք «այնպիսի խոշոր մետեր էին օգտագործում, որ հելլենները նրանց արծակած մետերին կաշվե բռնակ ամրացնելով, դրանք իբրև տեգ էին օգտագործում»:

¹⁹⁷ Տե՛ս Հայ ժողովրդի պատմության Քրեստոմատիա, հատ 1, ծանոթ. 5, էջ 141:

Գլուխ XXVIII-ի 1–5 հատվածում ևս Արմենիա երկրի և արմենների մասին բավականին հանգամանալի հիշատակություն կա: Պատմիչը գրում է, թե «կատարելապես [հույները] կոչնչանային, եթե [կարդուխների երկրից] կարճ ճանապարհի անցնելուց հետո չպատահեին պարենաշատ [հայկական] գյուղերի: Այս գյուղերում բեռնատար անասունների մուտքը գետնափոր էր, իսկ մարդիկ իջնում էին աստիճաններով. բնակարաններում անասունները սնվում էին խոտով, իսկ մարդիկ վայելում էին կյանքի համար անհրաժեշտ բարիքների առատություն»¹⁹⁸:

Գլուխ XIX-ի 1–6-րդ հատվածում պատմվում է, որ հելլենները Կորդուքին սահմանակից հայկական գյուղերում ձմռանը 8 օր մնալուց հետո ուղևորվում են Փասիս (Արաքս գետի վերին հոսանքը) գետը, որտեղ չորս օր մնալուց հետո, իրենց ճանապարհը շարունակում են *խաոյների* («Ամաբասիսում» *տաոխների*) և *փասիանների* երկրի միջով: Սրանց տները ևս լեցուն էին բարիքներով:

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ: ԱՊՊԻԱՆՈՍ

Հելլենիստական դարաշրջանի վերաբերյալ ավելի բազմազան և մեծաթիվ են աղբյուրները: Սրանցից առավել բազմազան տեղեկություններ է հաղորդում Պլուտարքոսը (Ք.հ. 46–129): Նրա «Ձուգահեռ կենսագրությունները» («Ձուգակշիռք») կարևոր աղբյուր են մասնաձայնության պատմության և մշակույթի ուսումնասիրության համար: Այստեղ մեծ թվով տեղեկություններ կան Ք.ա. I դարի Հայաստանի քաղաքական ու մշակութային կյանքի վերաբերյալ: Պլուտարքոսի «Ձուգահեռ կենսագրություններ» գրքի հայերեն հատվածական թարգմանությունը կատարել է Ս. Կրկյաշարյանը (Երևան, 2001): Այնտեղ կարդում ենք Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման մասին ուշագրավ տեղեկություն:

Պատմում են, թե կարթագենացի Հաննիբալը, հռոմեացիներից Անտիոքոսի [խոսքը Սելևկյան թագավոր Անտիոքոս III Մեծի մասին է – Ռ.Ն.] կրած վերջնական պարտությունից հետո [նկատի ունի Ք.ա. 190 թ. Մագնեսիայի ճակատամարտը] գնաց հայ Արտաշեսի մոտ և հրահանգիչ ու խորհրդատու դարձավ նրան օգտավետ ձեռնարկներում: Բացի այդ, նկատելով երկրում չօգտագործված և անտեսված հարմարագույն և խիստ հաճելի մի վայր [Արաքսի ձախ ափին՝ այժմ-

¹⁹⁸ Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հատ. 1, էջ 255-256:

յան Խոր Վիրապի շրջակայքում], ուրվագծեց քաղաքի հատակագիծը: Հաննիբալը այնտեղ տարավ Արտաշեսին [Արտաշես I հայոց արքային՝ Ք.ա. 189–160] և ցույց տալով տեղանքը համոզեց նրան այդ վայրում քաղաք հիմնել:

Թագավորը սիրով համաձայնվեց և խնդրեց, որ նա ստանձնի այդ գործի ղեկավարությունը: Այսպիսով, կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ քաղաք, որը կոչվեց թագավորի անունով և հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք: Պլուտարքոսը այն անվանել է Հայաստանի Կարթագեն¹⁹⁹:

Պլուտարքոսը խոսելով Ք.ա. 69–67 թվականների հայ-հռոմեական պատերազմի մասին՝ նշում է Տիգրան Մեծի կողմից նվաճված երկրների բնակչության բռնի վերաբնակեցման մասին: Մոտավոր հաշվումներով Տիգրանի օրոք Հայաստան է բերվել կես միլիոնից ոչ պակաս օտարերկրացի²⁰⁰: Նրա հաղորդման համաձայն «Այլ ժողովուրդների թվում (հույն, հրեա և այլն) իրենց նախկին բնակավայրերից նա (Տիգրան Մեծը) քշել էր նաև արաբական ցեղերին, որոնց բնակեցրել էր իր մայրաքաղաքի մերձակայքում (Տիգրանակերտ)²⁰¹, որպեսզի նրանց օգտագործեր առևտրական կարիքների համար»: Տիգրանը նրանց հանձնարարել էր տարանցիկ առևտրական ուղիների վերահսկողությունն ու պաշտպանությունը: Հույն պատմիչը ակնարկներ ունի նաև Տիգրան Մեծի արքունիքում որոշ ծեսերի և պալատական վարվելակերպի մասին: Այսպես, նա գրում է, թե նրա (Տիգրանի) մոտ շատ թագավորներ կային սպասավորի դրությամբ, իսկ նրանցից չորսին նա մշտապես պահում էր իր մոտ որպես ուղեկից կամ թիկնապահ. երբ նա գնում էր ծիով, նրանք, կարճ խիտոններ հագած, վազում էին նրա կողքից, իսկ երբ նստած էր լինում և զբաղվում պաշտոնական գործերով, նրանք կանգնում էին նրա շուրջը, ձեռքները կրծքներին:

Պլուտարքոսը ուշագրավ հաղորդում ունի Անահիտ դիցուհուն նվիրվող երինջների զոհաբերման սովորույթի մասին: Պատմիչը, մանրամասնորեն նկարագրելով հռոմեական զորավար Լոկուլլոսի Հայաստան կատարած արշավանքը, գրում է. «...զորքն անցկացրեց

¹⁹⁹ Տե՛ս *Պլուտարքոս*, Ձուգահեռ կենսագրություններ, թարգմանությունը Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1990:

²⁰⁰ Տե՛ս *Դ.Տարկուսյան*, Тигранакерт, М., 1960, с. 60.

²⁰¹ Տե՛ս *Հ. Հակոբյան*. Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը: - ՊԲՀ, 2007, № 3, էջ 3-29:

Եփրատով: Գետն անցնելիս նրան բարենպաստ նախանշան երևաց: Այս վայրերում արածում էին երինջներ՝ նվիրված Արտեմիսին (Անահիտին), որին Եփրատի մյուս ափին բնակվող բարբարոսները (այդպես էին անվանում ոչ հույն ժողովուրդներին, այդ թվում նաև հայերին) առավել են պաշտում, քան մյուս աստվածներին: Այս երինջները սահմանված են միայն զոհաբերման համար. դրանք ազատորեն շրջում են այդ վայրերում, իրենց ճակատին կրելով խարանդորոշմ ջահ, որը դիցուհու նշանն է: Յեշտ չէ դրանցից որևէ մեկը բռնել հարկ եղած դեպքում: Եվ ասի, երբ Լուկուլլոսի զորքն անցնում էր Եփրատը, այդ երինջներից մեկը մոտեցավ դիցուհուն՝ նվիրաբերված սրբազան մի ժայռի, կանգնեց դրա վրա և, խոնարհելով գլուխը, ինչպես այդ անում են պարանով տարվող երինջները, տրամադրեց իրեն Լուկուլլոսին՝ զոհաբերման համար: Լուկուլլոսը Եփրատին զոհաբերեց ևս մի ցուլ, բարեհաջող գետանցի համար: Իհարկե, այստեղ մեզ համար կարևոր է ոչ թե Պլուտարքոսի հաղորդած այս կիսաառասպելը, այլ Անահիտին նվիրված երինջների առկայությունը:

Պլուտարքոսը ակնարկներ ունի նաև Տիգրանակերտի բնակչության ազգային խայտաբղետ կազմի մասին. «Տիգրանակերտում ապրում էին մեծ թվով հույներ, որոնք բռնագաղթվել էին Կիլիկիայից, և բարբարոսներ՝ ադիաբենացիներ, գորդիեններ, կապադոկիացիներ, որոնց նույն բախտն էր վիճակվել: Տիգրանը ավերել էր նրանց քաղաքները, իսկ մարդկանց բռնի քշել և ստիպել բնակվել այստեղ: Տիգրանակերտում կային առատ գանձեր և աստվածներին նվիրված թանկարժեք ընծայաբերումներ»:

Տնտեսական և մշակութային առումով կարևոր տեղեկություն է մայրաքաղաքի հելլենիստական տիպի խոշոր, գեղեցիկ, հարուստ, մշակութային կյանքով լեցուն լինելը: Այսպես, պատմիչը հաղորդում է. «Վերցնելով Տիգրանակերտում գտնված գանձերը, նա քաղաքը թողեց զինվորների թալանին, որոնք, բացի այլ բարիքներից, այնտեղ գտան նաև 8 հազար տաղանդ արծաթ: Այս ամենից բացի՝ նա ռազմավարից նրանց տվեց յուրաքանչյուրին 800 դրաքմե»: Տիգրան Մեծի տերության պալատներից մեկում զորավար Լուկուլլոսը «գտել էր մեծ քանակությամբ ոսկի և արծաթ և երեք միլիոն մեդիմնոս (մոտ 120 հազար տոննա) ցորեն»:

Պլուտարքոսը հիշատակում է նաև, որ հայոց մայրաքաղաքում գտնվում էին մեծ թվով դերասաններ, որոնց Տիգրանը հրավիրել էր իր կառուցած թատրոնի հանդիսավոր բացմանը:

Հույն պատմիչը ունի ակնարկ Տիգրանի կողմից մահապատժի ենթարկված, իրեն դավաճանած, ենթակա երկրներից մեկի՝ գորդիենների թագավոր Զարբինոսի և նրա կնոջ ու որդիների պատվին Լուկուլլոսի կազմակերպած թաղման շքեղ ծեսի վերաբերյալ: Նա գրում է. «Նա [Լուկուլլոսը] Զարբինոսի թաղման շքեղ ծեսեր կազմակերպեց, խարույկը զարդարեց զգեստներով, թագավորական ոսկիներով և Տիգրանից վերցրած թանկարժեք ավարով, իր ձեռքով վառեց խարույկը և հանգուցյալի ընկերների ու մերձավորների հետ զոհ մատուցեց, «նրա պատվին կանգնեցվեց նաև թանկարժեք հուշարձան»:

Պլուտարքոսը ուշագրավ տեղեկություններ է հաղորդում նաև հայոց Արտավազդ արքայի թիկնապահ 6 հազարանոց հեծելազորի, հայոց բանակի սպառնազինության, մեկ բյուր զրահապատ հեծյալ և երեք բյուր հետևակ զորքի, հռոմեական Կրասոս զորավարի՝ պարթևական արշավանքին օգնության հասնելու խոստման և այն կատարելու պայմանների, քաղաքական նպատակներով Արտավազդ Բ արքայի քրոջ և Պարթևական երկրի արքա Օրոդես II-ի (57–38) որդի Բակուրի ամուսնության, հայոց արքունիքում թատերական ներկայացումների, Արտավազդ արքայի՝ ողբերգություններ, ճառեր, պատմական երկեր գրելու մասին: Առանձին հետաքրքրություն է ներկայացնում այն պատմությունը, ըստ որի երբ հայոց մայրաքաղաք Արտաշատում հայոց և պարթևաց արքաները դիտում էին հույն ողբերգակ Եվրիպիդեսի «Բաքոսուհիները» դրաման, և երբ ողբերգակ դերասան Յասոն Տրալլացին արտասանում էր ողբերգության գլխավոր հերոսուհի Ագավեին վերաբերող հատվածը, դահլիճ են բերվում հռոմեական զորավար Կրասոսի գլուխը և ձեռքը [խոսքը Բ.ա. 53 թ. մայիսի 6-ին Խառան քաղաքի մոտ տեղի ունեցած ճակատամարտում զոհված Կրասոսի մասին է – Ռ.Ն.]: Միջագետքի պարթևական սատրապության կուսակալ Սիլակեսը սրահի մեջտեղ է նետում Կրասոսի գլուխը: «Բաքոսուհիներ» ողբերգությունը, որ նվիրված է զինուն, զինեգործությանն, խմբապարերի և շվայտանքի աստծո՝ Դիոնիսոս-Բաքոսի հետ շրջող և նրան երկրպագող կանանց, դերասան Յասոնը, վերցնելով Կրասոսի գլուխը, խանդավառությամբ արտասանում է ներկայացումից հետևյալ տողերը.

*Մենք բերում ենք սարերից,
Իջրև մի որս երջանիկ,
Այս բաղեղը՝ նոր կտրած:*

Բոլոր ներկաներին դա հրճվանք պատճառեց: Իսկ երբ նա հասավ այն տողերին, ուր երգչախումբն ու Ազավեն փոխանեփոխ երգում էին.

Ձեզանից ո՞վ սպանեց նրան.

– Ես սպանեցի, իմն է փառքը...

Կրասոսին սպանող էքսատրոսը, որը ներկա էր խնջույքին [Բակուրի և հայոց արքայի քրոջ ամուսնության առթիվ], վեր թռավ տեղից և խլեց Յասունի ձեռքից գլուխը, որպես նշան այն բանի, որ այդ բառերն ավելի շուտ ինքը պետք է արտասանի, քան Յասունը: Այս դրվագը խոսում փաստերից է օտար աղբյուրների կողմից Հին Հայաստանում թատերական ավանդույթի մասին:

Պլուտարքոսի ժամանակակիցն էր *Ապպիանոս Ալեքսանդրացին*²⁰²՝ անտիկ պատմագրության կարկառուն դեմքերից մեկը (թ.հ. II դարի սկիզբ – II դարի 70-ական թթ.): Նա թողել է 24 գրքից բաղկացած «Հռոմեական պատմություն» երկասիրությունը, որը մեզ է հասել ոչ ամբողջությամբ: Հելլենիստական Հայաստանի II–I դդ. պատմության և մշակույթի ուսումնասիրության համար առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում 11-րդ (Սիրիական) և 12-րդ (Սիրիո-դատական) գրքերը: Ապպիանոսը ակնարկներ ունի հայկական հագուստի և հայերի զարդերի մասին: Այսպես, նկարագրելով Տիգրան Մեծի զորքերի կրած պարտությունը Տիգրանակերտի ճակատամարտում, գրում է. «Մեծ եղավ կոտորածը, քանի որ ոչ ոք կողոպուտով չէր զբաղվում, Լուկուլլոսը սպառնալով արգելել էր այս, ուստի և ապարանջաններն ու մանյակներն իսկ թողնելով, նրանք շարունակում էին սպանել մոտ 120 ասպարեզի վրա, մինչև գիշերը վրա հասնելը: Միայն դրանից հետո նրանք վերադարձան և սկսեցին կողոպտել (սպանվածներին), քանի որ Լուկուլլոսը արդեն թույլ էր տվել»²⁰²:

Ապպիանոսը հիշատակում է նաև, թե Տիգրան Մեծը Կապադովկիայից «...մոտ 30 բյուր մարդ տեղահանեց ու տեղափոխեց Հայաստան և նրանց, այլոց հետ միասին, համաբնակեցրեց մի վայրում, որտեղ նա առաջին անգամ հագավ Հայաստանի թագը և (այդ) վայրը իր անունով կոչեց Տիգրանակերտ և կամ Տիգրանապոլիս: Նա քաղաքը շրջապատեց 50 կանգուն բարձրության (25 մ) պարսպով, որի հաստության մեջ կային ձիերի բազմաթիվ ախոռներ: Քաղաքի

²⁰² Բնագրից՝ Հայաստանին վերաբերող հատվածների թարգմանությունը կատարել է Ս. Կրկյաշարյանը: Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 348: Տե՛ս նաև *Հ. Մանանդյան*, Երկեր, հ. Ա, Երևան, 1977, էջ 196–197:

արվարձանում նա կառուցեց պալատ՝ ընդարձակ զբոսայգիներով, որսատեղիներով և լճերով: Մերձակայքում նա բարձրացրեց նաև հզոր մի բերդ»²⁰³:

ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵԿՈՒՆԴՈՍ

Հռոմեական ականավոր պատմագիր, գիտնական ու քաղաքական գործիչ: Ծնվել է 23 թ. Հյուսիսային Իտալիայի Կոմ քաղաքում, մահացել է 79 թ.: Գրել է «Գերմանական պատերազմներ»՝ 20 գրքով, «Պատմություն»՝ 31 գրքով, «Բնական պատմություն»՝ 37 գրքով, որոնցից մեզ է հասել վերջինը: «Բնական պատմությունը» արժեքավոր տեղեկություններ է պարունակում տիեզերագիտության, երկրագործության, աշխարհագրության, բուսական ու կենդանական աշխարհի, հանքաբանության, բժշկության, հին աշխարհի երկրների, այդ թվում՝ Հայաստանի բնաշխարհի, հանքային հարստությունների, քաղաքների, վարչական բաժանումների, մշակութային պատմության ու հասարակական հարաբերությունների վերաբերյալ: Առանձնապես արժեքավոր տեղեկություններ են պարունակում V և VI գրքերը: Ազգագրական առումով մեզ ավելի հետաքրքրում են XXXIV գրքում Անահիտ դիցուհու պաշտամունքին նվիրված տեղեկությունները, որ ներկայացնում ենք ամբողջությամբ (թարգմանությունը՝ Ս. Կրկյաշարյանի)։ «Ասում են, որ ոսկեծուլ առաջին արձանը, որ նախորդել է նույնիսկ հռոմիստերատոն («մուրճով կոփված») բրոնզածույլ արձաններին, կանգնեցվել է Անահիտիս աստվածուհու տաճարում: Մենք ցույց ենք տվել, թե որ երկրին է պատկանում այդ անունը (Պլինիոս Ավագը նկատի ունի «Բնական պատմության» V գրքի 20-րդ գլուխը, որտեղ խոսում է Անահիտի գավառի մասին: Դա Անհատական կամ Եկեղյաց գավառն է՝ Բարձր Հայքի 4-րդ գավառը, ըստ անտիկ հեղինակների՝ Ակիլիսենեն, այժմյան Երզնկայի շրջանը): Արձանը մեծ պաշտամունքի առարկա է այդ ժողովուրդների մեջ: Այն տարվել է որպես ավար պարթևների դեմ Մարկոս Անտոնինոսի մղած պատերազմի ժամանակ (հեղինակը չփոքում է, քանզի Անտոնինոսը այդ ոսկեծուլ արձանը Եկեղյաց գավառի Անահիտի տաճարից տարել է ոչ թե Պարթևական, այլ Հայկական արշավանքի ժամանակ, այսին-

²⁰³ Հայաստանին վերաբերող հատվածների թարգմանությունը բնագրից կատարել է Ս. Կրկյաշարյանը: Տե՛ս Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 348: Տե՛ս նաև **Հ. Մանանդյան**, Երկեր, հ. Ա, Երևան, 1977., էջ 147:

քն՝ Բ.ա. 35 թ.): Այդ կապակցությամբ պատմում են բոսնիացի մի վետերանի հայտնի սրախոսությունը. նրա հյուրն էր Ավգուստոսը (խոսքը Յոզմի կայսր Գայոս Օկտավիանոս Օգոստոսի մասին է), և ճաշի ժամանակ կայսրը նրան հարցրեց՝ ճիշտ է արդյոք, որ այդ արծանը սրբապղծող առաջին մարդը մահացել է կուրանալուց և անդամալուծ լինելուց հետո: Վետերանը պատասխանեց, որ Ավգուստոսի պատվին տրված ճաշը հենց աստվածուհու արծանի մեկ ազդրից էր, որ հենց ինքն էր այդ արծանի առաջին հափշտակողը, և իր ամբողջ հարստությունը այդ ավարի շնորհիվ էր գոյացել»²⁰⁴:

Այսպիսով, Պլինիոս Ավագի «Բնական պատմություն» գրքից տեղեկանում ենք, որ Անահիտի ոսկյա արծանը Եկեղյաց գավառի երիզա ավանում ջարդուփշուր են արել, և ոսկին բաժան-բաժան է արվել Անտոնիոսի ու իր զորքի միջև: Դրանից հետո, սակայն, նույն տեղում նորից ոսկյա արծան է դրվել, քանզի հայոց բոլոր աստվածներն ունեին իրենց մեհյանները և արծանները:

Պլինիոս Ավագն իր «Բնական պատմության» մեջ վկայում է, թե Յայաստանը, ինչպես նաև Մարաստանը հնում հայրենիքն էին մի շարք արժեքավոր խեժաբեր բույսերի, այդ թվում՝ հռչակավոր **ուպանի**: Վերջինիս բուժիչ, եռանդը բարձրացնող հատկությունները խիստ հարգի էին Յոզմուն: Ցոփ, շվայտ կյանքից, սեռական սանձարծակությունից վաղաժամ ծերացած Յոզմի պատրիկները փորձում էին նրա օգնությամբ վերադարձնել կորցրած առողջությունը և երիտասարդությունը: Ուպանը, ինչպես նաև մի շարք արժեքավոր դեղաբույսեր, որոնք դարեր շարունակ անխղճորեն արտահանել են Յայաստանից, հետագայում հայկական բուսաշխարհից իսպառ վերացան: Ըստ նույն պատմիչի Յայաստանում և Կապադովկիայում աճում էր թմրեցնող հատկություններ ունեցող մի բույս, որը մեղմացնում էր վայրի գազանների զայրույթը²⁰⁵:

ՉԱՅՈՍ ԿՈՆՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍ

Յոզմի ամենանշանավոր պատմագիրն է, ծնվել է մոտավորապես 55-57 թթ., մահացել մոտ 125 թ.: Նրա գրչին են պատկանում «Գերման ժողովրդի ծագման և Գերմանիայի տեղադրության մասին», «Տրամախոսություն հռետորների մասին», «Պատմություն» երկասիրություններ-

²⁰⁴ Տե՛ս Յայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, հ. 1, էջ 287-290, 499:

²⁰⁵ Տե՛ս *Ս. Վարդանյան*, նշվ. աշխ., էջ 31:

որը՝ Սակայն գլուխգործոցը «Տարեգրություններն» են՝ կազմված 16 գրքից, որոնց մի մասն է պահպանվել միայն²⁰⁶:

«Տարեգրությունների» Ա գրքի 2-րդ գլխում Տակիտոսը հաղորդում է, որ հռոմեացիները սովորություն ունեին մատանիով կնքված պահելու ոչ միայն թանկարժեք իրերը, այլ նաև տնտեսության սովորական առարկաները, ինչպիսիք են հացը, միսը և այլն (Տ. 11):

Գրքի 47-րդ գլխում հաղորդվում է. «Ասիայի 12 հռչակավոր քաղաքներ (Սարդիս, Ֆիլադելֆիա, Մագնեսիա, Ապոլլոնիդես և այլն) գիշերվա երկրաշարժից փուլ եկան, աղետոն այնքան ավելի ծանր էր, որքան անակնկալ: Չէր օգնում այդպիսի դեպքերում գործադրվող սովորական փախուստը դեպի բաց տեղերը, որովհետև կլանվում էին բացված գետնից: Հիշողությամբ պատմում են, որ հսկայական սարեր նստեցին՝ այն, ինչ հարթ էր, բարձունք դարձավ. պատռվածքներից կրակներ փայլեցին...» (Տ. 15):

«Տարեգրությունների» երկրորդ գրքի 56-րդ գլխում հեղինակը գրում է. «Այս ժողովուրդը (նկատի ունի հայերին.- Ռ. Ն.) հնուց ի վեր տատանվող է թե՛ մարդկանց բնավորության և թե՛ երկրների տեղադրության պատճառով: Այս երկիրը լայնորեն սահմանակից է մեր պրովինցիաներին և տարածվում է հեռու՝ մինչև Մեդերի աշխարհը: Մեծագույն պետությունների միջև է տեղադրված Հայաստանը և շատ հաճախ հայերը երկպառակ են, որովհետև նրանք թե՛ ատում են հռոմեացիներին և թե՛ նախանձում են պարթևներին» (Տ. 15):

Տակիտոսի հաղորդման համաձայն ժողովուրդը [հայերը] ծագումով օտար արքաներից կսիրի նրանց, ովքեր հարգում են հայկական սովորույթներն ու կենցաղը: Այսպիսին էր, օրինակ, Ջենոնը: Այդ ժամանակաշրջանում Վոնոնին հեռացնելուց հետո, թագավոր չունեին, սակայն ժողովրդի տրամադրությունը հակվում էր դեպի Պոնտոսի թագավոր Պոլեմոնի որդի Ջենոնը, որովհետև հենց մանկությունից նա կրթվել էր հայերի սովորույթներով ու կենցաղով, որսագնացության, խրախճանքների և բարբարոսների մոտ հաճախ գործադրվող այլ սովորությունների միջոցով նա իր հետ էր կապել թե՛ ազնվականներին և թե՛ հասարակ ժողովրդին: Ահա թե ինչու Ջենոնին հայերը Արտաշես կոչեցին ոչ թե Արտաշատ «քաղաքի անվան օրինակով», այլ սա դիմաստիական «Արտաշես» անունն էր, որ սիրելի էր հայերին և հիշեցնում էր Արտաշեսյանների հզոր թագավորության օրերը (Տ. 111):

²⁰⁶ Մենք հատվածաբար օգտվել ենք «Օտար աղբյուրները հայերի մասին» մատենաշարի N 3 պրակից, «4. Տակիտոս», քաղեց և լատիներենից թարգմանեց Պ. Սոտնիկյանը, Երևան, 1941 (այսուհետ՝ Տ. և էջը):

Անհրաժեշտ ենք համարում բերել ևս մի հատված «Տարեգրությունների» տասներկուերորդ գրքի 51-րդ գլխից, որը պատմական մեծ արժեք ներկայացնելուց զատ, ունի նաև ազգագրական հետաքրքրություն: Խոսքը վրաց արքայազն Զառամիստի Զայաստանից փախչելու, իր հղի կնոջը փախուստի ճանապարհին վիրավորելու, Արաքս գետը նետելու ու հայ հովիվների կողմից նրան փրկելու և գյուղական դեղամիջոցներով բժշկելու մասին է. «Ռադմիստին չէր մնում փրկվելու այլ միջոց, քան ապավինել ծիերի արագավազությանը: Ձիերը փախցրին թե՛ նրան և թե՛ կնոջը: Բայց հղի կինը՝ փախուստի առաջին մասը թշնամիներից վախենալու և ամուսնուն սիրելու պատճառով մի կերպ տարավ. հետո, երբ շարունակական արշավընթացից նրա ընդերքն ու արգանդը ուժգին կերպով ցնցահար են լինում, սկսում է աղերսել, որ իրեն պատվավոր մահով ազատի գերության անարգանքներից: Ռադամիստը սկզբում գրկելով բարձրացնում է և քաջալերում, մերթ զարմանալով նրա քաջությունից, մերթ հիվանդագին տանջվելով վախից, թե ուրիշը կտիրանա կնոջը, եթե ինքը նրան լքի: Վերջապես սիրո ուժի ազդեցության տակ և անծանոթ չլինելով հանցագործություններին, նա մերկացնում է *նրանը* (արևելյան կարճ և ուղիղ դաշույն) և վիրավոր կնոջը քարշ է տալիս Արաքսի ափին և հանձնում գետին, որպեսզի նույնիսկ մարմինը տարվի-հեռանա, որպեսզի չընկնի թշնամիների ձեռքը: Ինքը գլխապատառ սլանում է հայրենական թագավորությունը՝ Իբերիա (Վրաստան): Այդ ժամանակամիջոցում հովիվները, շնորհիվ ծփանքի հանդարտության, նկատում են, որ Ջենոբիան (այդ էր կնոջ անունը) շնչում է, ուշադրության են առնում կյանքի բացահայտ նշաններն ու ազնիվ արտաքինից եզրակացնում են, որ հասարակ ծագում ունեցող կին չէ այդ, կապում են վերքը և գործադրում են գյուղական դեղամիջոցներ»։ անունը և արկածն իմանալուց հետո տանում են նրան Արտաքսատա (Արտաշատ) քաղաքը. այնտեղից հասարակական ծախսով կինն ուղարկվում է Տիրիդատի մոտ, ընդունվում է սիրալիր» (Տ. 65-67): Փաստորեն հայ գեղջուկները փրկեցին կնոջը, հատուկ տնական սպեղանիներով դարմանեցին նրա վերքերը: Սա Զայաստանում ժողովրդական բժշկության մասին հնագույն վկայություններից է: Տակիտոսը մեզ հայտնում է նաև, որ Ջենոբիան միառժամանակ ապրում է Տրդատի արքունիքում, որտեղ էլ ծննդաբերում է՝ արու զավակ ունենալով. սա հետագայում թագավորեց Իբերիայում իբրև Փարսման II (Տ. 100-114):

Տակիտոսը տասներեքերորդ գրքի երրորդ գլխում գրում է. «Հայերը տեղադրությամբ և բարքերի նմանությամբ պարթևներին ավելի մոտ էին կանգնած և խառնված էին նրանց հետ ամուսնություններով» (Տ. 73): Այնուհետև հայտնում է, թե [վրաց] Փարսմանը, սպառնալով իր որդի Ռադամիստին իբրև դավաճանի, որպեսզի դրանով վկայվի նրա հավատարմությունը դեպի մեզ, հայերի վրա ավելի եռանդուն կերպով էր թափում իր հին ատելությունը: Եվ հենց այդ ժամանակ առաջին անգամ մեր կողմը գրավված մոսքերը (քարթվելական ցեղ) հարձակվեցին Հայաստանի հեռավոր վայրերի վրա: Այս ցեղն ուրիշներից ավելի հավատարիմ էր հռոմեացիներին» (Տ. 77):

Ուշագրավ է նաև այն տեղեկությունը, որ հայ-պարթևական ուժերը Պետոսի հրամանատարությամբ հռոմեական զորքին «անց են կացրել լծի տակով»: Այն նշանակում է, որ գետնի մեջ խրված երկու նիզակների վրա դրվում է երրորդը՝ մոտ մեկ մետր բարձրությամբ: Ճակատամարտում պարտված կողմը պետք է անցներ այդ անցքով՝ նախապես գցելով զենքն ու վերնագգեստը: «Լծի տակով անցնելը» հին ժամանակներում համարվում էր ամենամեծ ստորացումը և պարտվողների ստրկացման ապացույցը:

Մեր համոզմամբ ազգագրական հետաքրքրություն են ներկայացնում Տակիտոսի վկայությունները հայ-պարթևական ուժերի և Հռոմի միջև խաղաղության դաշն կնքելու դիվանագիտական արարողությունների վերաբերյալ, որոնք ուշագրավ են նաև ռազմական պատմության ուղումնասիրության տեսանկյունից: Այսպես, պարթևահռոմեական պատերազմը ավարտելու և Հռոմի կայսրից Հայաստանի թագը ստանալու համար որոշվեց, որ «Տիրիդատը (Տրդատ Արշակունին՝ 66-88 թթ.) կայսեր [Ներոն] արձանի մոտ դնի թագավորական նշանը և հետ վերցնել միայն Ներոնի ձեռքից: Արարողությունն ավարտվեց համբույրով [Տրդատի և Կորբուլոնի միջև]»:

Գլ. 29. «Հետո, մի քանի օր անց, երկու կողմից էլ փայլուն տեսքով հանդես եկան և կանգնեցին զորքերը՝ այնտեղ դասակներով դասավորված պարթևական հեծելազորն իր հայրենի զարդարանքներով, այստեղ՝ հռոմեական լեգեոնները փայլուն արծիվներով, դրոշակներով և աստվածների արձաններով, կարծես տաճարում լինեին. մեջտեղում կառուցված էր բեմ, բեմի վրա դրված էր **կուրուլ աթոռ** (որին բազմելու իրավունք ունեին միայն բարձր պաշտոնյաները՝ կոնսուլը, պրետորը, ցենզորը և կուրուլ էդիլը) և կուրուլ աթոռի վրա Ներոնի արձանը: Դրան մոտեցավ Տիրիդատը, համաձայն սովո-

րության զոհեր մատուցանելով. գլխից վերցրած ապարոշը մոտեցնում է Ներոնի արծանի ստորին մասին...» (Տ. 127):

Տակիտոսը հաղորդում է Հին աշխարհի թագավորների միջև «փոխադարձ արյունով սրբագործված» դաշինքի ուշագրավ սովորության մասին. «Թագավորներն ունեն մի սովորություն, որ ամեն անգամ, երբ իրար են հանդիպում դաշն կնքելու համար, միախառնում են իրենց աջ ձեռքերը, բութ մատները միասին կապում և հանգույցով ամրացնում: Հետո հենց որ արյունը դեպի ծայրանդամներն է հոսում, թեթև ծակոցով արյունը հանում և փոխադարձաբար լիզում են: Այդ տեսակ դաշինքը համարվում է գաղտնի ուժ ունեցող, իբրև փոխադարձ արյունով սրբագործված» (Տ. 59): Սակայն միմյանց տրված հավատարմության երդումը հնարավոր էր խախտել մի սովորությամբ՝ ծանր գորգերի մեջ փաթաթված խեղդամահ անելով (Տ. 61): Այս դեպքում գորգը մեղքը քավելու զորեղ միջոց էր համարվում:

Անգնահատելի նշանակություն ունեն Տակիտոսի համապատասխան վկայությունները Հայաստանի և հայերի մասին: «Տարեգրություններում» ուշագրավ տեղեկություններ կան I դարի Հայաստանի քաղաքական կյանքի, հայ-պարթևական կապերի վերաբերյալ, որը հնարավորություն է տալիս վերականգնելու նրա ապրած ժամանակաշրջանի ընտանեկան կենցաղի շատ նորմեր: Կարևոր են նրա հաղորդումները Հայաստանի աշխարհագրության, սահմանների, ընդգրկած տարածքի, հարևանների հետ ունեցած տնտեսական ու մշակութային կապերի մասին: Օրինակ՝ նա հաղորդում է, թե Հայաստանում ու Պարսկաստանում Եփրատ ու Տիգրիս գետերի հորդումները կանխելու նպատակով կատարում էին շքեղազարդ ձիերի զոհաբերման ծիսակատարություններ (Տ. 33): Նույն տեղում նշում է նաև, որ հռոմեական «սովորության համաձայն խոզը, ոչխարը, եզը զոհում էին հանդիսավորապես՝ գետերը խաղաղեցնելու համար» (Տ. 33):

Պատմագիրը եզակի տեղեկություններ է տալիս I դարի Հայաստանի քաղաքական իրադարձությունների մասին: Նրանից ենք տեղեկանում նաև Տիգրան III-ի զավակներ արքայից արքա Տիգրան IV-ի և վերջինիս խորթ քույր Երատո թագուհու ամուսնական կապի մասին, որոնք, ըստ հեղինակի, «ըստ օտար (ոչ հռոմեական) սովորության ամուսնացել էին թագավորելու նպատակով» (գիրք II, գլուխ 3):

Ազգագրական առումով ուշադրության արժանի են Տակիտոսի հաղորդած որոշ տեղեկություններ ևս: Այսպես, մի դրվագում (Գերմանիայի մասին) գրում է, թե «Շատ հարուստներ սարմատների ու

պարթևների նման ծածանվող զգեստներ չեն հագնում, այլ տարբերվում են սեղմ և առանձին անդամներ գծագրող հագուստով» (Տ. 138): Ակնարկ ունի նաև տարածության չափի միավորների մասին, ինչպիսին է քայլը, օրը, ստադիոնը: Այսպես, նա գրում է. «Պետոսը մեկ օրում անցել էր 40 հազար քայլ», որը հավասար է 40 մղոնի կամ 62,2 կմ-ի: Ջորջի սովորական ընթացքի դեպքում դա երկու օրվա ճանապարհ էր կազմում (Տ. 115): Կամ՝ երկու օրվա ընթացքում կտրում անցնում է երեք հազար ստադիոն տարածություն, իսկ ստադիոնը հավասար է մոտավորապես 184,4 մետրի կամ 600 ոտնաչափի (Տ. 43, ծ. 75, էջ 137):

Տակիտոսը իր երկերը շարադրել է Հռոմի զավթողական քաղաքականության ջատագովի տեսանկյունից: Դրա համար էլ նա առավել քան կողմնակալ հեղինակ է: Նա ասում էր ամեն մի հայի, ով կհամարձակվեր զենք բարձրացնել աշխարհակալ Հռոմի դեմ: Հավանաբար այս մոտեցումներն են պատճառ դարձել, որ այդ խոշորագույն պատմիչը իր «Տարեգրություններում» երբեմն իջնում է գրավոր խոսքի մեջ անթույլատրելի ձևակերպումների մակարդակին: Նա Հայաստանը անվանում է ստրկության երկիր, իսկ հայերին՝ ստրկության սովոր ժողովուրդ (Տ. 65): Կամ՝ «... որովհետև ազատությունը նրանց (հայերի) համար անծանոթ էր, ավելի էին հակվում դեպի պարթևական ստրկությանը» (Տ. 73): Հայերին համարել է նենգ ու վախկոտ, տատանվող, դժվարին պահին դաշնակցին լքող: Սակայն նույն պատմիչը մեկ անգամ չէ, որ ստիպված է եղել խոստովանել, թե «ստրկության սովոր» հայերը բազմիցս ջարդել են հռոմեական կայազորին՝ նրանց անցկացնելով «լծի տակով»: Նույնպիսի ատելությանը է լցված Հռոմին թշնամի մյուս ժողովուրդների նկատմամբ: Այսպես պարթևներին բնութագրում էր՝ «բացակա միապետի նկատմամբ արդարամիտ, իսկ ներկայի նկատմամբ՝ խառնակիչ» (Տ. 31):

Օտար աղբյուրները և հատկապես Հայաստանի հետ պատերազմող երկրների հեղինակների ստեղծագործությունները հարկավոր է օգտագործել խիստ քննադատաբար, քանի որ հաճախ դրանք չափազանց կողմնապահ են և մոռանում են իրականության ու հեքիաթայինի միջև սահմանը:

Սրանով հանդերձ չափազանց կարևորվում է հունա-հռոմեական պատմիչների գրավոր ժառանգությունը Հայաստանի ու հայերի մասին:

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐ

1. *Արեղյան Մ.*, Հայ ժողովրդական հավատքը, Երկեր, հ. Է, Երևան, 1975:
2. *Աբրահամյան Ա.Գ.*, Նախամաշտոցյան հայ գիր և գրչություն, Երևան, 1982:
3. *Առաքելյան Բ.*, Հին Արտաշատ, Երևան, 1975:
4. *Առաքելյան Բ.*, Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976:
5. *Ավետիսյան Յ.Գ.*, Արագած, Երևան, 2001:
6. *Ավետիսյան Յ.Գ., Ավետիսյան Պ.Ս.*, Արարատյան դաշտի մշակույթը մ.թ.ա. XI–VI դդ., Երևան, 2001:
7. *Ավետիսյան Յ.Գ.*, Արագածի և Արամուսի պաշտամունքային կառույցներն ու քարակոթողները, «ԲԵՀ», 2002, թիվ 2:
8. *Ավետիսյան Յ.Գ.*, Արագածի ամրաշինությունը, «ԲԵՀ», 1996, թիվ 1:
9. *Ավետիսյան Պ.*, Հայաստանի միջին բրոնզի պարբերացումն ու ժամանակագրությունը (թեկն. ատեն. սեղմագիր), Ե., 2003:
10. *Ավետիսյան Պ., Բադալյան Ռ., Հմայակյան Ս., Փիլիպոսյան Ա.*, Հայաստանի բրոնզ-երկաթի դարաշրջանի պարբերացման և ժամանակագրության հարցերի շուրջ, ՀՀ Դաշտային հնագիտական հետազոտություններին նվիրված ամենամյա գիտական նստաշրջանների թեզիսներ, Երևան, 1996:
11. *Բասմաջյան Կ.*, Դարեհի արշավանքն ի Հայս, «Բանասեր», հ. Ա, Պարիս, 1899:
12. *Բաստամեան Վ.*, Ամուսնութիւնը ըստ հայոց եկեղեցական իրաւաբանութեան, «Փորձ», 1880, թիվ 6-7, 8-9, 11-12, 1881, թիւ 4, 8-9:
13. *Բարխուդարյան Ս.*, Հնությունների նշանակությունն ու պահպանությունը, Երևան, 1935:
14. *Բարսեղյան Լ.*, Նոր նյութեր Հայաստանի հնագույն արվեստի, ՊԲՀ, 1965, թիվ 3, էջ 147-160:
15. *Բդոյան Վ.*, Հայ ազգագրություն (համառոտ ուրվագիծ), Երևան, 1974:
16. *Բդոյան Վ.*, Ընտրության և ամուսնության ձևերը «Սասունցի Դավիթ» էպոսում, ԲԵՀ, 1976, թիվ 1:
17. *Գասպարյան Բ., Սարգսյան Գ.*, Ժայռանկարների նորահայտ խումբ Գեղամավանի «Կարմիր քարանձավում». Հայաստանի

հնագույն մշակույթը», Տ. Խաչատրյանի 70-ամյակին նվիրված գիտաժողովի նյութեր, 2003:

18. **Գնունի Ա.**, Շենգավթյան մշակույթի օջախները և դրանց համալիրները, ՊԲՀ, 2004, թիվ. 1:
19. **Գնունի Ա.**, Հայկական լեռնաշխարհի ֆալիկ հուշարձանների տիպերն ու ծիսական գործառույթները, ԲԵՀ, 2004, թիվ. 2:
20. **Գնունի Ա.**, Շենգավթյան մշակույթի բնակավայրերում տեղադրված սրբավայրերը և պաշտամունքային կառույցները, ՊԲՀ, 2006, թիվ 1:
21. **Գրիգորյան Գր.**, Հայկական վիճագրություն, Երևան, 2000:
22. Դարեհ Վշտասպի Բիսեթունյան արձանագրությունը, թարգմանությունը բնագրից, առաջաբանը և ծանոթագրությունները՝ Գ. Ս. Նալբանդյանի, Երևան, 1964:
23. **Դևեջյան Ա.**, Հնագիտական հետազոտություններ Տաշիր-Չորագետում, Ե., 2001:
24. **Դևեջյան Ա.**, Լոռի բերդ, II, Երևան, 2006:
25. **Եսայան Ս.**, Հայաստանի հնագիտություն, Երևան, 1992:
26. **Եսայան Ս.**, Վանի ավազանի բիայնական ամրոցները, «ՊԲՀ», 1995, թիվ 1:
27. **Երեմյան Ս. Տ.**, Հայերի ցեղային միությունը Արմեն-Շուպրիա երկրում, Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ, հ. 1:
28. **Թորոմանյան Թ.**, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հ. 1., Երևան, 1942:
29. **Թորոսյան Ռ.**, Թեղուտի վաղ երկրագործական բնակավայրերը, Երևան, 1979:
30. **Թումանյան Բ.**, Աստղագիտական բնույթի ժայռապատկերներ, «Գիտություն և տեխնիկա», 1969, № 3:
31. **Խորայեցյան Հ.Ռ.**, Պաշտամունքն ու հավատալիքները ուշ բրոնզեդարյան Հայաստանում, Ե., 1973:
32. **Խորայեցյան Հ.Ռ.**, Էրեբունի բերդ քաղաքի պատմություն, Երևան, 1971:
33. **Խանգադյան Է.Զ.**, Գառնի IV, Երևան, 1969:
34. **Խանգադյան Է.Զ.**, Էլառ-Դարանի, Երևան, 1979:
35. **Խանգադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.**, Մեծամոր, Երևան, 1975:
36. **Խաչատրյան Վ.**, Հայաստանը մ.թ.ա. XV – VII դարերում, Երևան, 1998:

37. *Խաչիկյան Լ.*, Նախամետրոպիան գրի հարցը և հմայագրերը, ՊԲՀ, 1963, № 4:
38. *Խեչոյան Ա., Գասպարյան Բ., Ֆերուզլիո Վ.*, Ժայռապատկերների նորահայտ համալիր Արագածի հարավային լանջերին. «Հին Հայաստանի մշակույթը», XIII, Երևան, 2008, էջ 295-301:
39. *Խեչոյան Ա., Գասպարյան Բ.*, Գեղամավան-1 քարայրի ժայռանկարների գեղարվեստական վերլուծության փորձ. «Հին Հայաստանի մշակույթը», XIII, Երևան, 2005, էջ 28-33:
40. *Խնկիկյան Օ.Ս.*, Արհեստները բրոնզեդարյան Հայաստանում. Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 9, Բրոնզեդարյան հուշարձաններ, III, Երևան, 1977:
41. *Խորենացի Մովսես*, Հայոց պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները ակադ. Ստ. Մալխասյանի, Երևան, 1968:
42. *Կարախանյան Գ. Հ., Սաֆյան Պ. Գ.*, Սյունիքի ժայռապատկերները, Հայաստանի հնագիտական հուշարձանները, 4, Ժայռապատկերներ, պրակ. 1, Երևան, 1970, էջ 5-6:
43. *Կարազյոզյան Հ.*, Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում), Երևան, 1998:
44. *Կրկյաշարյան Ս.*, Երվանդունիների արքայատոհմը Հայաստանում, ՊԲՀ, 1973, թիվ 4:
45. Հայ ժողովրդի պատմություն, ՀՍՍՀ ԳԱ հրատ., հ. 1, Երևան, 1971:
46. Հայ ժողովրդի պատմության քրեստոմատիա, Հնագույն ժամանակներից մինչև Ք.հ. 298 թվականը (կազմողներ՝ Պ. Հ. Հովհաննիսյան, Ա. Ե. Մովսիսյան), հ. 1, Երևան, 2007:
47. *Հակոբյան Հ.*, Թուխ մանուկները հին Հայաստանի պատկերագրության մեջ: Թուխ մանուկ, Երևան, 1998:
48. *Հակոբյան Հ.* Հին Հայաստանի սյունազարդ դահլիճները և Հոլմիկի տաճարական համալիրը (Գևորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ), Երևան, 2001, էջ 49-56:
49. *Հակոբյան Հ.* Հին Հայաստանի մայրաքաղաք Տիգրանակերտը: ՊԲՀ, 2007, № 3, էջ 3-29:
50. Հայկական ճարտարապետության պատմություն, հ. 1, Երևան, 1996:
51. *Հերոդոտոս*, Պատմություն ինը գրքից, Ս.Մ. Կրկյաշարյանի թարգմանությամբ, Երևան, 1986:

52. *Հմայակյան Ս. Գ.*, Վանի թագավորության պետական կրոնը, Երևան, 1990:
53. *Հմայակյան Ս. Գ.*, Պաշտամունքային շինությունները, քրմությունը, ծեսերը և տիեզերքի եռամասնության մասին պատկերացումը Ուրարտուում, «ՊԲՀ», 1986, թիվ 1:
54. *Հովհաննիսյան Կ.Լ.*, Ուրարտական ճարտարապետություն, Հայկական ճարտարապետության պատմություն, Երևան, 1996:
55. Հին Հայաստանի ոսկին, Երևան, 2007:
56. *Ղազարյան Գր.*, Հայաստանը և հայերը ըստ Քսենոփոնի, Թիֆլիս, 1908:
57. *Ղափանցյան Գր.*, Հնության մի քանի հիշատակարաններ. «Արարատ», 1914, ՌՅԿԳ, թիվ 1:
58. *Ղափանցյան Գ. Ա.*, Ուրարտուի պատմությունը, Երևան, 1940:
59. *Սանանդյան Հ.*, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Կ. Ա, Երևան, 1945:
60. *Սանանդյան Հ.*, Արմավիրի հունարեն արձանագրությունները նոր լուսաբանությամբ, Եր., 1946 (հայերն և ռուսերեն):
61. *Սանանդյան Հ.*, Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946:
62. *Սարտիրոսյան Հ.*, Հայաստանի նախնադարյան մշակույթի նոր հուշարձաններ, ՊԲՀ, 1969, թիվ 3:
63. *Սարտիրոսյան Հ.*, Ժայռապատկերների դասակարգման մի քանի տվյալներ, ԼՀԳ, 1970, թիվ 9, էջ 54-70:
64. *Սարտիրոսյան Հ.*, Պաշտամունքը, կրոնը և արվեստը նախնադարյան Հայաստանում, Հայ ժողովրդի պատմություն, Կ. 1, Երևան, 1971:
65. *Սարտիրոսյան Հ.*, Գիտությունն սկսվում է նախնադարում, Երևան, 1978:
66. *Սարտիրոսյան Հ.*, Գեղամա լեռների ժայռապատկերները. Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 11, Ժայռապատկերներ, պր. 3, Երևան, 1981:
67. *Սարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.*, Գեղամա լեռների ժայռապատկերները. Հայաստանի հնագիտական հուշարձաններ, 6, Ժայռապատկերներ, պր. 2, Երևան, 1971:
68. *Մելիք-Բախշյան Ս.*, Հայկական հնագրություն, Երևան, 1987:
69. *Մելիք-Փաշայան Կ.*, Անահիտ դիցուհու պաշտամունքը, Երևան, 1963:

70. *Մովսիսյան Ա.*, Հնագույն պետությունը Հայաստանում. Արատտա, Երևան, 1992:
71. *Մովսիսյան Ա.*, Հայաստանի գծային գիրը (Ք.ա. Գ-Ա), «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ ու ժողովուրդներ», XVII, Երևան, 1999:
72. *Մովսիսյան Ա.*, Նախամաշտոցյան Հայաստանի գրային համակարգերը, Երևան, 2003:
73. *Մովսիսյան Ա.*, Սրբազան լեռնաշխարհը. Հայաստանը Առաջավոր Ասիայի հնագույն հոգևոր ընկալումներում, Երևան, 2006:
74. *Մովսիսյան Ա.*, Հայաստանը Քրիստոսից առաջ երրորդ հազարամյակում (ըստ գրավոր աղբյուրների), Երևան, 2005:
75. *Մորդտման Ա.Դ.*, Հայ բևեռածև արծանագրությունը, Կոստանդնուպոլիս, 1872:
76. *Նահապետյան Ռ.*, Աղծնիքը սեպագիր շրջանում, ԼՀԳ, 1984, թիվ 1:
77. *Նահապետյան Ռ.*, Աղծնիքահայերի ընտանիքը և ընտանեկան ծիսակարգը, Երևան, 2004:
78. *Շիրմազան Գ.*, Դրվագներ Հայաստանի ոռոգման պատմությունից, Երևան, 1962:
79. *Ջահուկյան Գ. Բ.*, Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
80. *Ջալալբեկյան Լ.*, Սոխրաբլուրի պատվարները, ՊԲՀ, 1974, թիվ 4:
81. *Սամուելյան Խ.*, Հին Հայաստանի կուլտուրան, հ. I, Երևան, 1931, հ. II, Երևան, 1941:
82. *Պետրոսյան Ա.*, Առեղծվածային ժայռապատկերներ, «Գիտություն և տեխնիկա», 1970, № 2:
83. *Սարգսյան Ս.Հ.*, Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967:
84. *Սարգսյան Ս.Հ.*, Հայաստանը քաղաքակրթության օրրան, Երևան, 2003:
85. *Սարգսյան Գ.*, Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966:
86. *Սարգսյան Գ.*, Պատմահայր Հերոդոտոսը. **Հերոդոտոս**, Պատմություն ինը գրքից:
87. *Մինոնյան Հ., Խաչատրյան Լ.*, Շենգավիթ բնակավայրի 2003 թ. պեղումները, Հին Հայաստանի մշակույթը, պր. XIII, Երևան, 2005:
88. *Ստրաբոն*, Աշխարհագրություն (քաղեց և թարգմանեց՝ Հ. Աճառյանը), Երևան, 1940:

89. **Վարդանյան Ս.**, Հայաստանի բժշկության պատմություն. հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000:
90. **Տեր-Սովսիսեան Ս.**, Արարատի և Արագածի գագաթներին. «Արարատ», 1913, ՌՅԿԲ, թիվ 1:
91. **Տեր-Սովսիսեան Փարսադան**, Հայ գիւղական տունը, թարգմ. հ. բ. վ. Պիլեգիկճեան, Վիեննա, 1894:
92. **Տիրացյան Գ.**, Արտաշես Ա-ի արամեատառ նորագյուտ արձանագրությունը, Տեղեկագիր ՀԳԱՀԳ, 1957, թիվ 10:
93. **Տիրացյան Գ.**, «Անաբասիսը» և Հայաստանը». Քսենոփոն, Անաբասիս, Երևան, 1970:
94. **Տիրացյան Գ.**, Հայաստանի ներքին կյանքը Աբեմենյանների տիրապետության ժամանակաշրջանում, Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, Երևան, 1971:
95. **Տիրացյան Գ.**, Արտաշես 1-ինի ևս մեկ նորագյուտ արամեական արձանագրություն, ՊԲՀ 1977, թիվ 4, էջ 254-259:
96. **Տիրացյան Ն.**, Խալդի աստծո հիշատակությամբ արամեերեն մի արձանագրության շուրջ. Հին Հայաստանի պատմության և մշակույթի հարցեր (Գևորգ Տիրացյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումներ), Երևան, 2001:
97. **Տոնականյան Հ.**, Հայաստանի ժայռապատկերների տիեզերական թեմատիկան, «Արվեստ», 1990, № 3:
98. **Փռլիպոսյան Ա.**, Հայկական լեռնաշխարհը Մերձավոր Արևելքի պատմամշակութային փոխառնչությունների ոլորտում (Ք.ա. IV–I հազարամյակներ), պ.գ.դ. գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր, Երևան, 2004:
99. **Քալանթար Ա.**, Արագածը պատմության մեջ, Ակնարկ նրա պատմական նշանակության և նյութական կուլտուրայի հուշարձանների մասին, Երևան, 1935:
100. **Քալանթար Ա.**, Հին Վաղարշապատի պեղումները, Երևան, 1935:
101. **Քոսյան Ա.**, Անի-Կամախը խեթական դարաշրջանում, ՊԲՀ, 2002, թիվ 3:
102. **Քոսյան Ա. Վ.**, Հայաստանի աստվածները, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIV, Երևան, 2005, էջ 444-457:
103. **Քսենոփոն**, Անաբասիս», թարգմանությունը Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 1970:

104. **Քսենոփոն**, Կյուրոպեդիա, բարգմանությունը և ծանոթագրությունները՝ Սիմոն Կրկյաշարյանի, Երևան, 2000:
105. **Օղիաշյան Ա. Ա.**, Ամանորը հայ ժողովրդական տոնացույցում, «Հայ ազգագրություն և բանահյուսություն», թիվ 9, Երևան, 1978:
106. «Օտար աղբյուրները Հայաստանի և հայերի մասին» մատենաշար, պրակ 3, «Կ. Տակիտոս», քաղեց և լատիներենից բարգմանեց Պ. Սոտնիկյանը, Երևան, 1941:
107. **Абрамян Л.А., Демирханян А.Р.**, Мифологема близнецов и мировое дерево (К выяснению значения одного класса наскальных изображений древней Армении), ՊԲՀ, 1985, № 5:
108. **Аванесян П.**, Предварительные результаты раскопок памятника Агарак. Археология, этнология и фольклористика Кавказа. Св. Эчмиадзин, 2003.
109. **Амаякян С.Г.** Ванское царство (Урарту). В кн. «У подножия Арарата», (Каталог выставки). Санкт-Петербург, 2008.
110. **Арешян Г.Е.**, Искусство куро-аракской культуры. Материалы II международного симпозиума по армянскому искусству, Ереван, 1978.
111. **Арутюнян Н. В.**, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964.
112. **Арутюнян Н. В.**, Корпус урартских клинообразных надписей, Ереван, 2001.
113. **Бадалян Р., Аветисян П., Ломбард П., Шитень К.**, Поселение Араташен. Հին Հայաստանի մշակույթը, XIII, Երևան, 2005, էջ 34–41.
114. **Геворкян А.Ц.**, Из истории древнейшей металлургии Армянского нагорья, Ереван, 1980.
115. **Геворкян А.Ц., Пальмиери**, Фиолетого. Հայաստանի հնագույն մշակույթը, Հ. Մարտիրոսյանի հիշատակին նվիրված գիտաժողովի զեկուցումների հիմնադրույթներ, Երևան, 2001, էջ 11-13:
116. **Гнуни А.**, Опыт анализ погребального инвентаря двух погребений эпохи средней бронзы Армении. «Լրաբեր հաս. գիտ.», 2003, թիվ 2:
117. **Гнуни А.**, К вопросу о сакральном значении некоторых предметов вооружения из погребальных памятников эпохи средней бронзы. Археология, этнология и фольклористика Кавказа, 2003.
118. **Дьяконов И. М.**, Ассиро-вавилонские источники по истории Урарту, «Вестник древней истории», 1951, N 2-4.

119. **Дьяконов И. М.**, История Мидии. М.-Л., 1956.
120. **Есаян С. А.**, Амулеты связанные с культом солнца из Армении, "Советская археология", N 2, 1968.
121. **Есаян С. А.**, Скульптура древней Армении. Ереван, 1981.
122. **Иесен А.А.**, Кавказ и Древний Восток в IV–III тысячелетиях до н.э., КСИА, вып. 93.
123. **Капанцян Гр.**, Хайаса – колыбель армян. Этногенез армян и их начальная история, Ереван, 1947.
124. **Кафадарян К.**, Заметки по Урартской фортификации, «ԴԲՀ», 1972, րիզ 2:
125. **Косян А.В.**, Лувийские царства Малой Азии и прибегающих областей в XII – VIII вв. до н.э., Ереван, 1994.
126. **Кушнарева К.Х.**, Южный Кавказ (X – II тысячелетиях д.н.э.), СПб., 1993.
127. **Кушнарева К.Х.**, Чубинишвили Т.Н., Древние культуры Южного Кавказа, Л., 1971.
128. **Манандян Я. А.**, О торговле и городах Армении в связи с мировой торговлей древних времен (Vв. до н.э. - XV в. н. э.), Ереван, 1954.
129. **Мартиросян А.А.**, Армения в эпоху бронзы и раннего железа, Ереван, 1964.
130. **Мартиросян А.А.**, Аргиштихинили, Ереван, 1974.
131. **Межлумян С.**, Палеофауна эпохи энеолита: бронзы и железа на территории Армянского нагорья. 1972.
132. **Массон В.**, Древние гробницы вождов на Кавказе. Кавказ и Восточная Европа в древности. М., 1973.
133. **Массон В.**, Кавказский путь к цивилизации. Древние общества Южного Кавказа. С.П-б., 1997.
134. **Меликишвили Г. А.**, Урартские клинообразные надписи. М., 1960.
135. **Мунчаев Р.И.**, Кавказ на заре бронзового века, М., 1975.
136. **Навасардян К.О.**, Техника – технологические показатели особенностей керамики Армянского нагорья III-II тыс. д.н.э. (Автореферат дис. на соиск. уч. степени канд. ист. наук), Ереван, 1977.
137. **Оганесян В.Э.**, Серебряный кубок из Карамамба, ԴԲՀ, րիզ 4, 1988

138. **Оганесян К.Л.**, Эребуни, 1980.
139. **Оганесян К.Л.**, Архитектура Урарту, в кн. Всеобщая история архитектуры, I, Москва, 1970.
140. **Пиотровский Б.Б.**, Развитие скотоводства в древнейшем Закавказье, СА, XXIII. 1955.
141. **Пиотровский Б.Б.**, Археология Закавказья, Ленинград, 1949.
142. **Пиотровский Б. Б.**, История и культура Урарту, Ереван, 1944.
143. **Пиотровский Б. Б.**, Ванское царство, М., 1959.
144. **Пиотровский Б. Б.**, Искусство Урарту, Л., 1962.
145. **Тревер К. В.**, Очерки по истории культуры древней Армении, М-Л, 1953.
146. **Тирацян Г.А.**, Культура древней Армении (VIв. до н.э. – III в н.э.), Ереван, 1988.
147. **Саркисян Г.**, Обожествление царей и царских предков, Вестник Древней Истории, 1966, № 2.
148. **Страбон**, География, В 17 книгах, М., 1964.
149. **Хачатрян В. Н.**, Восточные провинции Хетской империи, Ереван, 1971.
150. **Хачатрян Т.**, Материальная культура Артика, Ереван, 1963.
151. **Чубинишвили Т.Н.**, К древней истории Южного Кавказа, Тб., 1971.
152. Энеолит СССР, Археология СССР в 20-и томах, М., 1982.

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԼՀԳ – Հրաբեր հասարակական գիտությունների

ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես

ՀԱԲ – Հայ ազգագրություն և բանահյուսություն

ԱՀ – Ազգագրական հանդես

ՀԱ – Հանդես անսօրեայ

ԲԵՀ – Բանբեր երևանի համալսարանի

КСИА – Краткие сообщения института археологии

СА – Советская археология

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Հեղինակի կողմից	3
-----------------------	---

ԹԵՄԱ 1

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՅՈՒԹԱԿԱՆ ՄՆԱՑՈՐԴՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ (Ք.ա. IX–I հազարամյակներ).....	5
<i>Ժայռապատկերներ.....</i>	5
1. <i>Ք.ա. III–II հազարամյակների պաշտամունքի հուշարձաններ.....</i>	13
2. <i>Հնագիտական մշակույթի այլ դրսևորումներ.....</i>	15

ԹԵՄԱ 2

ՍԵՊԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐ	42
1. <i>Շուներա-աքադական սկզբնաղբյուրները</i>	42
2. <i>Խեթական սեպագիր արձանագրություններ.....</i>	44
3. <i>Ասորեստանյան սեպագիր աղբյուրներ</i>	47
4. <i>Ուրարտական արձանագրություններ.....</i>	49
5. <i>Բեհիսթունյան արձանագրությունը</i>	61
6. <i>ՀՀ տարածքում գտնվող օտարալեզու արձանագրություններ Ք.ա. IV – Ք.հ III դդ.....</i>	64
7. <i>Վիմական այլ արձանագրություններ.....</i>	69

ԹԵՄԱ 3

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ	71
-------------------------------------	----

ԹԵՄԱ 4

ՀՈՒԱ-ՀՈՈՄԵԱԿԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՍԿԶԲՆԱԴԲՅՈՒՐՆԵՐԸ	
ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ	74
ՀԵՐՈՂՈՏՈՍ.....	74
ՔՍԵՆՈՓՈՆ	82
ՍՏՐԱԲՈՆ	95
ԴԵՈՂՈՐՈՍ ՍԻԿԻԼԻԱՑԻ.....	105
ՊԼՈՒՏԱՐՔՈՍ: ԱՊՊԻԱՆՈՍ	107
ԳԱՅՈՍ ՊԼԻՆԻՈՍ (ԱՎԱԳ) ՍԵԿՈՒՆԴՈՍ	112
ԳԱՅՈՍ ԿՈՈՆՆԵԼԻՈՍ ՏԱԿԻՏՈՍ	113

Աղյուսակներ	119
Աղյուսակ 1.	<i>Ժառապատկերներ (նկ. 1-10)</i>
Աղյուսակ 2.	<i>Տարբեր դարաշրջանների հնավայրերից գտնված սայլեր կամ նրանց պատկերները</i>
Աղյուսակ 3.	<i>Վաղ բրոնզի դարաշրջանի օջախի հենակներ</i>
Աղյուսակ 3ա.	<i>Յանիկ թեփեի հատակագիծը՝ շտեմարան ծառայող շինությունը կենտրոնում</i>
Աղյուսակ 4.	<i>Վաղ բրոնզի դարաշրջանի մարդակերպ քանդակներ</i>
Աղյուսակ 5.	<i>Վաղ բրոնզի դարաշրջանի կենդանակերպ արձանիկներ</i>
Աղյուսակ 6.	<i>Պատյանավոր դաշույններ և բրոնզե պատյաններ (Սևանի ավազան), բրոնզե սակրեր (Ախթալա)</i>
Աղյուսակ 6ա.	<i>Վաղ բրոնզի դարաշրջանի մետաղյա իրեր</i>
Աղյուսակ 7ա.	<i>Նորշուն թեփեի պալատական համալիրը III հազ. II կես</i>
Աղյուսակ 7բ.	<i>Բլուրի (Սաքյուլ) XI հորիզոնի հատակագիծը (վաղ բրոնզի դար)</i>
Աղյուսակ 7գ.	<i>Ալի Բայրամի (Քարավաճառ) հասարակական կառույցը նաև որպես պաշտամունքային կենտրոն</i>
Աղյուսակ 7դ.	<i>Էլառի ամրոցի հատակագիծը (վաղ բրոնզ)</i>
Աղյուսակ 8.	<i>Միջին բրոնզի գավաթներ (Թռեղք, Քարաշամբ)</i>
Աղյուսակ 9.	<i>Քարաշամբի գավաթի պատկերների բացվածքը</i>
Աղյուսակ 10.	<i>Թռեղքի գավաթի պատկերները</i>
Աղյուսակ 11.	<i>Կոշկաձև և այլ խեցանոթներ (Դավիթ-բեկ գյուղ)</i>
Աղյուսակ 12.	<i>Ուրարտական զգեստը պատկերող արձանիկներ</i>
Աղյուսակ 13.	<i>Ուրարտական զգեստը պատկերող արձանիկներ</i>
Գրականության ցանկ	139

**ՀԱՅ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ
ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ**

ՄԱՍ 1

**ՀՆԱԳՈՒՅՆ, ԵՎ ՀԻՆ ՍԿԶԲՆԱԴՐՅՈՒՐՆԵՐԻ
ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ**

Բուհական ուսումնական ձեռնարկ

Համակարգչային ձևավորող՝ Ն.Օ. Խնկիկյան